

---

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ**  
**ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.**  
**ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՉԿ, 2010

Երեւան

ՀՏԴ 002:340

ԳՄԴ 73+67.99(2Հ)

Հ 247

**Հեղինակներ՝**  
**Շուշան Դոյրոյան, ք.գ.թ.**  
**ԻԱԿ Նախագահ**  
**Կարապետ Հարությունյան,**  
**Աժ եւ ԻԱԿ փորձագետ**  
**Գելորգ Հայրապետյան,**  
**ԻԱԿ իրավաբան**

Հ 247 «Տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը Հայաստանի հանրապետությունում. մեկնաբանություններ»: Հեղինակներ՝ Շ. Դոյրոյան, Կ. Հարությունյան, Գ. Հայրապետյան.- Եր.: ԻԱԿ, 2010, 104 էջ:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նախածեռնել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մեկնաբանությունների մշակումն ու հրապարակումը՝ մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի մասին իրազեկելու եւ այդ կերպ իրավունքի լիարժեք պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այս հրապարակումը բաղկացած է երկու հիմնական մասից: Տեղեկատվության ազատության հասկացությանը, դերին եւ նշանակությանը, ինչպես նաեւ դրա կիրառման պրակտիկային է անդրադառնում գրքի առաջին մասը, իսկ երկրորդ մասում ներկայացվում են Օրենքի ոչ պաշտոնական մեկնաբանությունները: Առաջին բաժնում ներկայացված են տեղեկատվության ազատության իրավունքի հասկացությունը, սկզբունքները, Օրենքի կիրառման առանձնահատկությունները, խնդիրներն ու առաջընթացները, տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական պրակտիկան, տեղեկատվության ազատության ոլորտում առկա խնդիրներն ու դրանց լուծման ուղիները, նաեւ ՏԱ իրավունքի խախտման դեպքեր եւ գործնական օրինակներ: Հրապարակման երկրորդ մասը Օրենքի հանգամանալից վերլուծությունն է, որտեղ ներկայացված է, թե ինչպես հասկանալ եւ մեկնաբանել Օրենքի յուրաքանչյուր հոդված, հետեւաբար նաեւ՝ ինչպես ճիշտ կիրառել Օրենքը:



Գիրքը պատրաստվել է հրապարակվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Տեղեկատվության ազատություն» եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրերի շրջանակներում:

Գրքում արտահայտված տեսակետները հեղինակային են եւ պարտադիր չէ, որ արտահայտեն Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետները:

ISBN 978-99947-2-485-5

ՀՏԴ 002:340

ԳՄԴ 73+67.99(2Հ)

- © Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 2010թ.
- © Շ. Դոյրոյան, 2010թ.
- © Գ. Հայրապետյան, 2010թ.
- © Կ. Հարությունյան, 2010թ.:

---

# ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ԱՌԱՋԱԲԱՆ</b> .....	<b>4</b>
<b>INTRODUCTION</b> .....	<b>6</b>
<b>ПРЕДИСЛОВИЕ</b> .....	<b>8</b>
<b>ՄԱՍ Ա</b> <b>ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԴԵՐԸ</b> <b>ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ</b> .....	<b>9</b>
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ.....	<b>17</b>
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.....	<b>19</b>
«ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ.....	<b>21</b>
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՌԱՆՋԱՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	<b>32</b>
<b>ՄԱՍ Բ</b> <b>ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ</b> <b>ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....</b>	<b>38</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ N 1</b>	
<b>«ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</b> <b>ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ</b> <b>ՆԱԽԱԳԾԵՐ.....</b>	<b>95</b>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.....	<b>95</b>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.....	<b>102</b>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.....	<b>103</b>

# ԱՌԱՋԱԲԱՆ

**Տ**եղեկություն ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է եւ պատկանում է քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների թվին: Այս իրավունքի իրավական պաշտպանությունը հնարավորություն է տալիս ազատորեն փնտրել եւ ստանալ տեղեկություններ: Հետեւաբար, տեղյակ լինելով սեփական իրավունքների մասին՝ մարդիկ հնարավորություն են ունենում լիարժեք գործադրել եւ պաշտպանել իրենց քաղաքական մյուս իրավունքներն ու ազատությունները: Տեղեկություններ փնտրելու եւ ստանալու իրավունքի իրականացումն ապահովում է մարդու այլ իրավունքների իրականացումը, եւ ընդհակառակը՝ այս իրավունքի խախտումը հանգեցնում է այլ իրավունքների խախտմանը: Այդ իմաստով՝ տեղեկություններ ստանալու իրավունքը բոլոր իրավունքների իրականացման նախապայմաններից է: Այս իրավունքն ապահովում է նաեւ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի թափանցիկությունը եւ իրապարակայնությունը:

Հայաստանում տեղեկատվության ազատության իրավունքի հետ կապված հարաբերությունները եւ այդ իրավունքի իրացման պայմանները սահմանված եւ հիմնականում կարգավորված են «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի սեպտեմբերի 23-ի ՀՕ-11-Ն օրենքով (*այսուհետ նաեւ՝ Օրենք*): Օրենքի ընդունումից հետո կարգավորվեցին տեղեկատվության ազատության իրավունքի հետ կապված իրավահարաբերությունները, սահմանվեցին պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններից տեղեկատվություն փնտրելու եւ ստանալու կարգը եւ պայման-

ները: Տեսականորեն օրենքի ընդունմամբ տեղեկություն ստանալու իրավունքի կիրառումը պետք է առավել արդյունավետ դառնար: Սակայն, հատկապես Օրենքի ընդունման առաջին մի քանի տարիներին տեղեկատվության ազատության իրավունքի իրացման պրակտիկայում առաջընթացն ակնհայտ չեղավ: Պատճառը ինչպես տեղեկատվություն տնօրինողների, այնպես էլ քաղաքացիների անիրազեկությունն էր ՏԱ մասին օրենսդրությունը: Մի կողմից՝ պաշտոնյաները տեղյակ չէին իրենց՝ օրենքով սահմանված պարտավորություններից, մյուս կողմից՝ քաղաքացիներն անտեղյակ էին օրենքով իրենց տրված հնարավորություններից եւ մեխանիզմներից, հետեւապես եւ լիարժեք չէին օգտվում տեղեկություն ստանալու իրավունքից:

Մի շարք հասարակական կազմակերպությունների եւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ջանքերով Օրենքը սկսեց աստիճանաբար գործել. ձեւավորվեց տեղեկատվության ազատության վերաբերյալ դրական դատական պրակտիկա, գիտելիքի եւ հմտությունների պակասը լրացնելու նպատակով իրականացվեցին բազմաթիվ ուսուցումներ: Միայն Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացրել է հազարավոր պաշտոնյաների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ուսուցումներ տեղեկատվության ազատության իրավունքի եւ Օրենքի վերաբերյալ: Սակայն, այսօր դեռեւս առկա են բազմաթիվ խնդիրներ՝ կապված Օրենքի, տեղեկություններ փնտրելու եւ ստանալու յուրաքանչյուրի իրավունքի կիրառման հետ:

Համարելով, որ իրազեկությունը իրավունքների պաշտպանության առաջին քայլն է՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նախաձեռնել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի

մեկնաբանությունների մշակումն ու հրապարակումը՝ մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի մասին իրազեկելու եւ այդ կերպ իրավունքի լիարժեք պաշտպանությունն ապահովելու նպատակով:

Այս հրապարակումը բաղկացած է երկու հիմնական մասից: Տեղեկատվության ազատության հասկացությանը, դերին եւ նշանակությանը, ինչպես նաեւ դրա կիրառման պրակտիկային է անդրադառնում գրքի առաջին մասը, իսկ երկրորդ մասում ներկայացվում են Օրենքի ոչ պաշտոնական մեկնաբանությունները: Առաջին բաժնում ներկայացված են տեղեկատվության ազատության իրավունքի հասկացությունը, սկզբունքները, Օրենքի կիրառման առանձնահատկությունները, խնդիրներն ու առաջընթացները, տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական պրակտիկան, տեղեկատվության ազատության ոլորտում առկա խնդիրներն ու դրանց լուծման ուղիները, նաեւ ՏԱ իրավունքի

խախտման դեպքեր եւ գործնական օրինակներ: Հրապարակման երկրորդ մասը Օրենքի հանգամանալից վերլուծությունն է, որտեղ ներկայացված է, թե ինչպես հասկանալ եւ մեկնաբանել Օրենքի յուրաքանչյուր հոդված, հետեւաբար նաեւ՝ ինչպես ճիշտ կիրառել Օրենքը:

Հուսով եմք՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի մշակած մեկնաբանությունների այս գիրքն իր նպաստը կբերի պաշտոնյաներին՝ ապահովելու իրենց աշխատանքի հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Այն նաեւ կօգնի քաղաքացիներին պաշտպանել իրենց բոլոր իրավունքները հզոր ուժի՝ տեղեկատվության միջոցով:

**Շուշան Դոյդոյան, ք.գ.թ.,**  
*Ինֆորմացիայի ազատության  
կենտրոնի նախագահ*

---

## INTRODUCTION

**T**he right to receive information is one of the fundamental civil and political rights. Legal protection of this right creates opportunities to seek and receive information freely. Therefore, being aware of one's rights makes it possible for people to exercise and protect their other rights and liberties. Protection of the right to see and receive information ensures the exercise of other human rights. The opposite is also true: the violation of this right leads to violations of other rights. In this regard, the right to receive information is one of the preconditions for the exercise of all the other rights. This right also ensure the transparency and openness of public administration and local government bodies.

The main aspects of freedom of information and conditions for the exercise of this right in Armenia are set out mainly in the RA Law on Freedom of Information (HO-11-N), adopted on September 23, 2003 (henceforth referred to as the Law). After the passage of the Law, legal relationships related to the freedom of information were regulated, and procedures and conditions for seeking and receiving information from public administration and local government bodies, as well as from organizations of public importance, were defined. In theory, the exercise of the right to receive information should have become more effective after the Law was passed. However, no obvious progress had been achieved in the area of freedom of information, especially in the first few years after the Law was adopted. This had to do with the fact that both those, who possessed information, and the public were unaware of the Freedom of Information leg-

islation. On the one hand, officials were unaware of their responsibilities under the Law. On the other hand, citizens were unaware of the opportunities and mechanisms given to them by the Law and, therefore, they did not fully exercise their right to receive information.

The Law started working gradually, thanks for the efforts of several non-governmental organizations and the Freedom of Information Center. Case law on freedom of information was developed, and many trainings were organized and conducted to develop the relevant knowledge and skills. The Freedom of Information Center alone organized training on freedom of information and the Law for thousands of officials and citizens. However, many problems with the Law and the exercise of the right to seek and receive information persist today.

Considering that awareness is the first step in the rights protection, the Freedom of Information Center has undertaken the task of developing and publishing commentary on the RA Law on Freedom of Information, in order to inform the people about their right to receive information, thus ensuring that this right is fully protected.

This publication consists of two main parts. The first chapter of this book talks about the concept, role and importance of freedom of information, as well as the practice of exercising this freedom. The second chapter contains unofficial commentary on the Law. The first chapter describes the concept of freedom of information, main principles, the peculiarities, difficulties and progress with enforcing this Law, the relevant court prac-

tice, the main problems in the area of freedom of information and their solutions, as well as specific case studies related to the freedom of information right. The second part contains detailed analysis of the Law, which describes how to understand and interpret each article of the Law, i.e. how to apply the Law properly.

We hope that this book of commentary developed by the Freedom of Information Center will help officials in ensuring the openness and transparency of their activities. It will also help citizens to protect all their right by means of information, which is a powerful force.

***Shushan Doydoyan, PhD***  
*President of the FOICA*

## ПРЕДИСЛОВИЕ

**П**раво на свободу информации одно из фундаментальных прав человека и входит в число гражданских и политических прав. Правовая защита этого права дает возможность свободно искать и получать информацию, следовательно, будучи информированным о своих правах, люди получают возможность полностью реализовать и защищать свои другие гражданские права. Реализация права искать и получать информацию обеспечивает реализацию других прав человека и наоборот – нарушение этого права приводит к нарушению других прав. В этом смысле право на свободу информации – это предусловие реализации всех других прав. Также это право обеспечивает прозрачность и публичность работы государственных органов и органов местного самоуправления.

Правоотношения в сфере свободы информации и порядок реализации этого права в основном регулируются Законом РА “О свободе информации” (Закон был принят 23.09.2003г.). Этим Законом были урегулированы правоотношения в сфере свободы информации, были установлены порядок и условия запрашивания и получения информации от органов государственной власти, органов местного самоуправления, а так же от организаций общественного значения.

Усилиями нескольких общественных организаций и Центра вободы Информации Закон начал постепенно действовать: сформировалась положительная судебная практика права свободы информации, были проведены многочисленные обучения с целью дополнения знаний и навыков в сфере свободы информации. Например, Центр свободы информации организовал обучения о свободе информации и о Законе для нескольких тысяч чиновников и представителей граж-

данского общества. Но сегодня еще есть много проблем связанных с применением Закона, с применением права каждого искать и получать информацию.

Считая, что информированность – это первый шаг защиты прав, Центр свободы информации инициировал опубликование комментариев к Закону РА “О Свободе Информации” для того, чтобы информировать людей о праве на свободу информации и таким образом обеспечить полноценную защиту этого права.

Эта публикация состоит из двух основных разделов: первая часть книги относится к понятию, роли и значению права на свободу информации, а так же к практике применения этого права, а во второй части представлены неофициальные комментарии к Закону. В первой части представлены понятие и принципы права на свободу информации, особенности, проблемы и прогрессы применения Закона, судебная практика права свободы информации, задачи в сфере свободы информации и пути решения этих задач, а так же случаи нарушения права и практические примеры. Вторая часть представляет собой подробный анализ Закона, где представлено как надо понимать и толковать каждую статью Закона, следовательно и как правильно применять Закон.

Надеемся, что эта книга комментариев принесет пользу гос. служащих для обеспечения публичности и прозрачности своей работы. Она так же поможет гражданам защищать все свои права с помощью такого сильного оружия, как информация.

*Шушан Дойдоян*

*Президент Центра свободы информации*

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԳԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Տ**եղեկատվության ազատությունն այսօր դիտվում է որպես քաղաքացիական հասարակությունում մարդու իրավունքների պաշտպանության հիմնական երաշխիքներից մեկը: Իրազեկ եւ ակտիվ քաղաքացիական հասարակության ձեւավորման, իշխանության գործունեության վերահսկողության, ինչպես նաեւ կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն եւ արդյունավետ միջոցը տեղեկատվության ազատությունն է: Ինչպես նշվում է Եվրոպական խորհրդարանական ասամբլեայի դեռեւս 1979թ. փետրվարի 1-ի որոշման մեջ. «Ժողովրդավարությունը կարող է պատշաճ կերպով գործել միայն, եթե ողջ ժողովուրդը եւ նրա կողմից ընտրված ներկայացուցիչները լիովին իրազեկված են»<sup>1</sup>: Ասամբլեան այն կարծիքն է հայտնել, որ «որոշ ցանկալի բացառություններից բացի, հասարակությունն իրավունք ունի ստանալ պաշտոնական տեղեկատվություն: Տեղեկատվության ազատությունը կօգնի հաղթահարել կոռուպցիան եւ պետական միջոցների վատնումը»<sup>2</sup>:

Անժխտելի է այն իրողությունը, որ տեղեկատվության վերահսկողությունը յուրաքանչյուր կառավարության համար սեփական սխալները եւ ձախողումները թաքցնելու լավագույն միջոց է: Չէ՞ որ իրազեկ հասարակությունում տեղ չի մնում կոռուպցի-

այի զարգացման համար: Այս իսկ հիմնավորմամբ իրազեկ եւ բանիմաց հասարակության հայեցակարգը դրվում է ժողովրդավարության հիմքում: Չի կարող լինել ժողովրդավարություն առանց իրազեկ եւ բանիմաց քաղաքացիների առկայության:

Կառավարությանը հսկելու եւ երկրի կառավարմանն ակտիվորեն մասնակցելու համար քաղաքացիներն անհրաժեշտ տեղեկատվության կարիք ունեն: Նրանք իրավունք ունեն ստանալ հասարակական հետաքրքրություն ներկայացնող կամ իրենց անձնական շահերը շոշափող տեղեկություններ, պետական մարմինների գործողությունների մասին տեղեկություններ, ինչպես նաեւ՝ տեղեկացվել նախատեսվող կամ ընդունված որոշումների մասին: Միայն այս կերպ քաղաքացիները կարող են պատշաճ վերահսկողություն իրականացնել պետական իշխանության գործունեության վրա: Այս իսկ հիմնավորմամբ մարդու իրավունքների միջազգային հասարակական կազմակերպություն ԱՐՏԻԿԼ 19-ը տեղեկատվությունը բնութագրել է որպես «ժողովրդավարության թթվածին»<sup>3</sup>:

Եվրոպայի խորհրդի 2009թ.-ին ընդունված «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայում նշվում է, որ պաշտոնական փաստաթղթերի («պաշտոնական փաստաթղթեր» նշանակում է

1. Civil Liberties: Legal Principles of Individual Freedom, Edwin Shorts & Claire de Than, Sweet & Maxwell, էջ 243:

2. Նույն տեղում, էջ 244:

3. Freedom of Information: A Comparative Legal Study by Toby Mendel, UNESCO 2003 p. 3: Թոբի Մենդելը ԱՐՏԻԿԼ 19 կազմակերպության իրավական ծրագրերի ղեկավարն է:

որել է ձեռով գրանցված, մշակված կամ ստացված եւ պետական մարմինների կողմից պահվող ամբողջ տեղեկատվությունը՝ մատչելիության իրավունքի գործադրումը՝

1. հանրության համար տեղեկատվության աղբյուր է,
2. օգնում է հանրությանը կարծիք կազմել հասարակության վիճակի եւ պետական մարմինների վերաբերյալ,
3. նպաստում է պետական մարմինների ազնվությանը, կարողություններին, արդյունավետությանը եւ պատասխանատվությանը՝ դրանով իսկ օգնելով նրանց լեգիտիմության հաստատմանը<sup>4</sup>:

Մարդու իրավունքների ժառանգությունը դիտարկելով՝ պարզ է դառնում, որ տեղեկություն ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է եւ պատկանում է քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների թվին: Այս իրավունքի իրավական պաշտպանությունը քաղաքացիներին ոչ միայն հնարավորություն է տալիս ազատորեն փնտրել եւ ստանալ տեղեկություն, այլեւ լիարժեք գործադրել իրենց քաղաքական մյուս իրավունքներն ու ազատությունները: Այսինքն, առանց այս իրավունքի անհնար է իրականացնել ընտրելու եւ ընտրվելու, միավորվելու, պետության կառավարմանը մասնակցելու եւ մյուս քաղաքական, ինչպես նաեւ տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքները (սոցիալական ապահովության իրավունք, առողջության պահպանման, կրթության իրավունքներ եւ այլն): Այն ծառայում է նաեւ սոցիալական, քաղաքական եւ տնտեսական հավասարության հասնելու համընդհանուր ձգտմանը:

Տեղեկատվության ազատության օրենսդրությունը կարող է վերահսկողության

ճիշտ մեխանիզմ սահմանել (օրինակ՝ օմբուցմենի՝ մարդու իրավունքների պաշտպանի միջոցով), այն կարող է նաեւ ձեւավորել պրակտիկա բոլորի համար, նույնիսկ նրանց, ովքեր քիչ են հակված հետեւել դրան: Կարող է շրջադարձել սովորական դարձած գաղտնիության կամխավարկածը: Այն քաղաքացիներին օրինական իրավունք է տալիս ծանոթանալ պաշտոնական փաստաթղթերին, առանց հիմնավորելու, թե ինչու են հետաքրքրված դրանցով, իսկ մերժումը հիմնավորելու «բեռը» դրվում է պետական վարչակարգի վրա: ՏԱ օրենսդրությունները սահմանում են կոնկրետ ժամկետներ, որոնց ընթացքում վարչակարգը պարտավոր է պատասխանել տեղեկատվության տրամադրման դիմումներին, ինչպես նաեւ տեղեկատվության որոշակի կատեգորիաների ծանոթանալու իրավունք է նախատեսում:

Ներկայումս տեղեկատվության ազատությունը հատկապես կարեւորվում է կոռուպցիայի դեմ հաջող պայքար իրականացնելու լավագույն միջոց: ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայում, նշվում է, որ իշխանությունները պետք է միջոցներ ձեռնարկեն տեղեկատվության մատչելիությունը երաշխավորելու համար: ԱՄՆ-ի Գերագույն դատարանի դատավոր Լուիս Բրանդեյի հայտնի արտահայտությունը հիմնավորում է այս միտքը. «Մի փոքր արեւի լույսը լավագույն ախտահանումն է»<sup>5</sup>: Սա է թերեւս պատճառը, որ ԱՄՆ-ի որոշ նահանգներում տեղեկատվության ազատության օրենքները պարզապես անվանվում են արեւի լույսի օրենքներ, դրանք թափանցում են իշխանական մութ միջանցքներ եւ կանխում կառավարության «մութ» գործողությունները: Պետական կառավարման համակարգի զարգացումը պահանջում է ընդլայնել պետական մար-

4. Եվրոպայի խորհրդի կոնվենցիան «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին»: [http://www.foi.am/UserFiles/File/convencia\(1\).pdf](http://www.foi.am/UserFiles/File/convencia(1).pdf)

5. Freedom of Information: A Comparative Legal Study by Toby Mendel, UNESCO 2003, p. 4:

մինների գործունեության հրապարակայնությունը եւ թափանցիկությունը, հաշվետվությունը եւ քաղաքացիական հասարակության ներգրավումը եւ մասնակցության ապահովումը որոշումների ընդունման գործընթացում:

Շատ երկրներում արտահայտման ազատության եւ տեղեկատվության ազատ փոխանակման սկզբունքներն ամրագրված են սահմանադրության մեջ: Բայց եւ այնպես, քաղաքացիների կողմից այդ իրավունքներն իրականացնելու համար պահանջվում է տեղեկատվության ազատության մասին հատուկ օրենսդրություն: Օրինակ՝ Հարավաֆրիկյան Հանրապետության 1996 թվականի սահմանադրությունը պարունակում է տեղեկատվության ազատության իրավունքին վերաբերող դրույթներ, ըստ որոնց այդ իրավունքները պետք է ամրագրվեն առանձին օրենքով: Տեղեկատվության ազատության պաշտպանության մասին օրենքն այնտեղ ընդունվեց 2000 թվականի փետրվարին: Մեզանում գործընթացը հակառակ ուղղությամբ ընթացավ: Նախ, ընդունվեց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, հետագայում 2 տարի անց 2005թ.-ի նոյեմբերին այս իրավունքն ամրագրվեց նաեւ ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածում:

Հայաստանում տեղեկատվության մատչելիության ապահովման առումով էական առաջընթաց գրանցվեց, երբ 2003թ.-ին ընդունվեց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը: Սա կարելի էր տեղեկատվության ազատության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ: Օրենքը միջազգային փորձագետների կողմից ճանաչվել է որպես լիբերալ եւ առաջընթաց ապահովող իրավական ակտ:

ԱՐՏԻԿԼ 19 միջազգային կազմակերպությունը մշակել է ձեւակերպել է տեղեկատվության ազատության օրենսդրության

հիմնական սկզբունքները, որոնք են.

1. տեղեկատվության ազատության օրենսդրությունը պետք է ապահովի առավելագույն հրապարակայնություն:
  2. Պետական մարմինները պարտավոր են հրապարակել առանցքային տեղեկությունները:
  3. Պետական մարմինները պետք է ակտիվորեն խթանեն բաց կառավարումը:
  4. Բացառությունները պետք է հստակ եւ սպառիչ սահմանված լինեն:
  5. Տեղեկատվություն ստանալու հարցումներին պետք է հնարավորինս արագ եւ արդարացի ընթացք տրվի: Դրանք պետք է անկախ քննության առարկա լինեն:
  6. Բարձր վճարները չպետք է պատճառ դառնան, որ մարդիկ խուսափեն տեղեկատվություն ստանալու հարցումներ անելուց :
  7. Պետական մարմինների նիստերը պետք է բաց լինեն հանրության համար:
  8. Առավելագույն հրապարակայնության սկզբունքին հակասող օրենքները պետք է փոփոխվեն:
  9. Ապօրինի գործողությունների մասին տեղեկատվություն տրամադրած պաշտոնյաները պետք է պաշտպանված լինեն:
- Օրենքի 4-րդ հոդվածով սահմանվող տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները եւս անառարկելիորեն բխում են վերոնշյալ դրույթներից: ՏԱ մասին օրենքով սահմանվող սկզբունքներն են.
- 1) տեղեկությունները գրանցելու, դասակարգելու եւ պահպանելու միասնական կարգի սահմանում,

2) տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը,

3) տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը,

4) հրապարակայնությունը:

Այս սկզբունքներից յուրաքանչյուրն ունի իր ուրույն տեղը եւ կոչված է ապահովելու տեղեկատվության ազատության խնդիրների իրականացումը: Սրանք գործում են միասնական համակարգում եւ իրենց էությամբ ու նշանակությամբ միասնական են, եւ ցանկացած սկզբունքի խախտում հանգեցնում է մեկ այլ սկզբունքի խախտման: Սա նշանակում է, որ ամեն սկզբունք երաշխիք է մյուսի իրականացման համար, եւ այն միջոցները, որոնք ապահովում են որեւէ կոնկրետ սկզբունքի կիրառումը, միաժամանակ երաշխիք են սկզբունքների ամբողջ համակարգի համար: Անդրադառնալով ՏԱ սկզբունքներից երեքին՝ հրապարակայնությանը, տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովմանը եւ տեղեկատվության ազատության սահմանափակումների սպառնիչ ցանկի սահմանմանը:

**Հրապարակայնության սկզբունքը** հաստատում է այն կանխավարկածը, որ պաշտոնական փաստաթղթերը հասարակական բնույթ ունեն եւ պետք է մատչելի լինեն հանրությանը, եթե միայն տեղեկությունը չիրապարակելու համար չկա առավել կարելոր հանրային կամ պետական շահ: Անգամ եթե քաղաքացին դիմում է զաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու համար, իշխանությունները պետք է նժարի վրա դնեն մի կողմից հասարակության հետաքրքրությունը, տեղյակ լինելու իրավունքը, մյուս կողմից՝ զաղտնիքը պահպանելու անհրաժեշտությունը: Քաղաքացիների առջեւ պետք է բաց լինեն ոչ միայն պաշտոնական փաստաթղթերը, այլեւ՝ օրենսդիր, գործադիր եւ դա-

տական մարմինների գործունեությունը: Օրենսդիր եւ դատական իշխանությունների թափանցիկության, հրապարակայնության եւ հասարակության առջեւ բաց լինելու սկզբունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդվածով. «Ազգային ժողովի նիստերը դռնբաց են», Սահմանադրության 19-րդ հոդվածով՝ «Յուրաքանչյուր ոք ունի.....անկախ եւ անկողմնապահ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք»: Սահմանադրական այս նորմն ամրագրվել է նաեւ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում: Օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Գործերի դատական քննությունը դռնբաց է»: Սրան հավելում է նաեւ «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, հաճայն, որի՝ «դատարանների վճիռներն ու դատավճիռները բոլոր դեպքերում հրապարակվում են դռնբաց նիստում»: Նմանապես, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածում նշվում է. «դատարաններում քաղաքացիական գործերի քննությունը դռնբաց է»: Սահմանադրական դատարանի գործունեության հրապարակայնության սկզբունքն ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 6-րդ հոդվածում: Նույն օրենքի 2-րդ հոդվածը նշում է, որ «Սահմանադրական դատարանի նիստերը դռնբաց են, իսկ ՍԴ որոշումները հայտարարվում են հրապարակայնորեն»:

Այս ամենը կենսականորեն անհրաժեշտ է, որպեսզի հասարակական խնդիրները բոլորի կողմից քննարկման առարկա դառնան, իշխանությունների համար անօրինական գործողությունները թաքցնելու հնարավորությունները հասնեն նվազագույնի, որպեսզի յուրաքանչյուր որոշման ու գործողության համար պետական մարմինները հաշվետու լինեն հասարակության առջեւ, իսկ մարդիկ հասկանան, թե ինչ ազդեցություն կարող են ունենալ պետական մարմինների կողմից ընդուն-

ված որոշումների վրա, եւ վերջապես, որպեսզի հասարակության յուրաքանչյուր անդամ ակտիվորեն մասնակցի երկրի կառավարմանը:

Նկատելի է նաեւ, որ չափից ավելի հրապարակայնությունը կարող է խանգարել պետական պաշտոնյաների միջեւ կարծիքների ազատ եւ անկեղծ փոխանակմանը, եւ որ պաշտոնյաները չեն կարող արդյունավետ գործել թափանցիկ «ակվարիումում»: Այս փաստարկը կարելու է, սակայն այն պետք է հաշվեկշռել գաղտնապահության եւ հաշվետվության բացակայության հետ: Առանց հաշվետու լինելու որոշումներ ընդունումն անարդյունավետ է: Մի բան ակնհայտ է, որ հրապարակայնությունն իրական կարող է լինել միայն, եթե առկա է քաղաքական եւ սոցիալական կայունություն, քանի որ այս պարագայում կառավարության համար ավելի հեշտ է վստահել ինքն իրեն եւ իր ժողովրդին:

**Տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովման սկզբունքից** բխում է, որ պետական իշխանության մարմինները պարտավոր են հանրությանն ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ: Այս սկզբունքի իրականացմանն աջակցող միջոցներն են պետական մարմինների կողմից տեղեկությունների պարտադիր հրապարակումը, ՏԱ համար պատասխանատու անձի նշանակումը, փաստաթղթերի՝ մեկ միասնական կարգով հավաքումը եւ պահպանումը, պաշտոնատար անձանց իրազեկումը, կրթումը եւ այլն:

Սովորաբար իշխանությունները տարածում են այնպիսի տեղեկատվություն, որն իրենց կարծիքով է կարելու, որ հասարակությունն իմանա: Որոշակի տեղեկատվություն տարածելու կառավարության պարտականությունը չպետք է շփոթել հասարակության կամ լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու կառավարության պար-

տավորության հետ, մի բան, որ շատ հաճախ է պատահում պրակտիկայում:

Եվրախորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայում նշվում է. «Սեփական նախաձեռնությամբ եւ երբ նպատակահարմար է պետական մարմինը պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ հրապարակելու այն պաշտոնական փաստաթղթերը, որոնք պահպանում է, պետական կառավարումը թափանցիկ ու արդյունավետ դարձնելու նպատակով եւ խրախուսելու ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերում հանրության իրազեկ մասնակցությունը»:

Նման մասնակցությունը ժողովրդավարության եւ արդյունավետ կառավարման համար կարելու գործոն է:

Պետական մարմինները պարտավոր են անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել իրենց տնօրինման տակ գտնվող տեղեկատվության մատչելիությունը հեշտացնելու ուղղությամբ:

Ավելին, տեղեկատվության հրապարակումը, նախքան դրա տրամադրման վերաբերյալ հարցումի ստացումը, այն առավելությունն ունի, որ պետական իշխանության մարմինը ստիպված չի լինի արձագանքել լրացուցիչ հարցումների, քանի որ պահանջվող տեղեկատվությունն արդեն մատչելի կլինի բոլորին: Ի դեպ, պետական իշխանության մարմինն ազատ է ընտրելու տեղեկատվության հրապարակման առավել հարմար տարբերակը (ցուցատախտակներ, պաշտոնական հրատարակություններ, ինտերնետային էջեր կամ այլ հանրամատչելի միջոցներ):

Այս նպատակով ՏԱ մասին ՀՀ օրենքը սահմանում է, որ տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է պարբերաբար, սակայն առնվազն տարին մեկ անգամ պարտադիր հրապարակել որոշակի խումբ տեղեկություններ: Հրապարակում ասելով օրենսդիրը հասկանում է տեղեկությունը

մանուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, Ինտերնետով, Ինչպես նաեւ՝ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը եւ մատչելի դարձնելը:

Պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը եւս սահմանվում է օրենքով: Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող 13 խումբ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները:

Բացի անհրաժեշտ տեղեկատվություն հրապարակելու պահանջից, օրենսդրությունը մատչելիությունն ապահովելու եւս մեկ միջոց է նախատեսում: Տեղեկատվություն տրամադրելու գործընթացն արդյունավետ իրականացնելու համար յուրաքանչյուր պետական մարմնում պետք է նշանակվի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ: Վերջինս տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը, անհրաժեշտության դեպքում օգնում է նաեւ հարցում գրել: Պատասխանատու անձը նաեւ նշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները:

**SU սահմանափակումների սպառնիչ ցանկի սահմանումը:** Ինչպես սահմանում են SU միջազգային չափանիշները՝ տեղեկատվության մատչելիությունը պետք է լինի կանոն, իսկ գաղտնիությունը՝ բացառություն այն դեպքերում, երբ գերակայում են այլ օրինական շահեր: Սահմանափակումները պետք է հստակ ամրագրվեն օրենքով, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակարգում եւ ուղղված լինեն օրինական շահ(եր)ի պաշտպանությանը:

Խոսքի եւ տեղեկատվության ազատությունը հռչակող Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածում

բերվում են տեղեկություն ստանալու եւ արտահայտվելու ազատության իրավունքների սահմանափակման հիմքերը: Դրանք են.

- հասարակական շահերի պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ (ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության, հասարակական անվտանգության, առողջության կամ բարոյականության պաշտպանության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու նպատակ):
- Այլոց իրավունքների պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ:
- Դատական իշխանության հեղինակության եւ անկողմնակալության համար անհրաժեշտ սահմանափակումներ:

Ինչպես արդեն նշվեց, տեղեկատվության ազատության ցանկացած սահմանափակում պետք է նախատեսված լինի օրենքով: Այն պետք է անհրաժեշտ լինի 10-րդ հոդվածում տեղ գտած նպատակներից որեւէ մեկի պաշտպանության համար, այսինքն, լինի արդարացված: Եվ, վերջապես, սահմանափակումը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավար հասարակության համար: Բացարձակ սահմանափակումն անընդունելի է:

Որպեսզի ճիշտ կիրառվեն վերը նշված սահմանափակումների հիմքերը, ԱՐՏԻԿԼ 19 միջազգային կազմակերպությունն իր մշակած տեղեկատվության ազատության մոդելային օրենքում առաջարկում է երեք մասից բաղկացած ստուգում, որը տեղեկատվության տրամադրումը մերժելուց առաջ պետք է կատարի պետական մարմինը:

Ըստ այդ ստուգման թեսթի՝ տեղեկատվությունը կարող է դասվել սահմանափակումների շարքը, եթե՝

- տեղեկատվությունը վերաբերում է օրենքում հստակ նշված նպատակներին,
- բացահայտումը կարող է զգալի վնաս հասցնել այդ նպատակին,
- նպատակին հասցված վնասը կարող է շատ ավելի մեծ լինել, քան հասարակության հետաքրքրվածությունն այդ տեղեկատվության նկատմամբ:

Ըստ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը «կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական եւ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար»:

Սահմանափակումների սահմանադրական հիմքերն իրենց կարգավորումն են ստացել առանձին օրենքներում, ինչպես, օրինակ՝ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում:

ՏԱ կարելորագույն սկզբունքներից է այն, որ այս սահմանափակումների շրջանակը պետք է սահմանված լինի օրենքում եւ լինի սպառիչ: Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տրամադրել տեղեկությունը 2 հիմքով՝

- ա) Օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում,
- բ) տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում:

Օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են ՏԱ բոլոր օրինական սահմանափակումները: Դա այն տեղեկությունն է, որը.

1. պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք,
2. խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,
3. պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,
4. բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
- 5) խախտում է հեղինակային եւ հարակից իրավունքը:

Այսպիսով, տեղեկության տրամադրումը կարող է մերժվել, եթե դրա բացահայտումը վնասում է կամ կարող է վնասել վերոնշյալ կենսական շահերից որեւէ մեկին:

Սակայն այս սկզբունքը եւս բացարձակ չէ, եւ օրենքը նախատեսում է նաեւ այնպիսի դեպքեր, երբ տեղեկության տրամադրումն ընդհանրապես չի կարող մերժվել, նույնիսկ եթե այն պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք (8-րդ հոդվածի 3-րդ կետ): Դրանք այն դեպքերն են, երբ տեղեկությունը.

- ա) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանն ու առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային աղետներին եւ դրանց հետեւանքներին,

---

բ) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության, շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը,

գ) տեղեկությունը չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Օրենքը նաև նշում է, որ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ<sup>6</sup>:

---

6. Այս մասին տես նաև գրքի 2-րդ մասում, էջ 38:

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

**Տ**եղեկատվության ազատության ոլորտը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային իրավական ակտերով, ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով եւ այլ իրավական ակտերով:

Հայաստանը՝ որպես մի շարք միջազգային կազմակերպությունների անդամ, ստորագրել է մարդու իրավունքներին վերաբերող կարեւորագույն միջազգային փաստաթղթեր: Դրանով իսկ Հայաստանը պարտավորվել է հարգել մարդու իրավունքները, այդ թվում՝ արտահայտվելու եւ տեղեկատվության ազատության իրավունքը հարգելու պարտավորությունը:

Տեղեկություն փնտրելու եւ ստանալու իրավունքը հռչակվում է Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրի 19-րդ, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի 19-րդ հոդվածներով:

*Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրի 19-րդ հոդվածը սահմանում է.*

«Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության եւ դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք, այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը եւ ցանկացած միջոցներով ու պետական սահմաններից անկախ իրազեկում եւ գաղափարներ որոնելու, ստանալու եւ տարածելու ազատությունը»:

Համաձայն Հռչակագրի նախաբանի՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան հռչակել է մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրը որպես մի խնդիր, որի կատարմանը պիտի ձգտեն բոլոր ժողովուրդներն ու պետությունները, այն առումով, որպեսզի յուրաքանչյուր մարդ ու հասարակության ամեն մի մարմին, մշտապես նկատի առնելով սույն Հռչակագիրը, ձգտի լուսավորության ու կրթության միջոցով օժանդակել այդ իրավունքների ու ազատությունների հարգմանը եւ ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումների միջոցով դրանց համընդհանուր եւ արդյունավետ ճանաչման ու իրականացման ապահովմանը...

Այսպիսով, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան Հռչակագրում ամրագրված այլ իրավունքների հետ մեկտեղ գաղափարներ, հետեւաբար նաեւ՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու եւ տարածելու իրավունքը համարել է նախապայման, որը կնպաստի, «որպեսզի մարդու իրավունքները պաշտպանվեն օրենքի ուժով...», որպեսզի մարդը հարկադրված չլինի դիմելու բռնության ու ճնշման դեմ ուղղված ապստամբության՝ որպես վերջին միջոցի...», այնպիսի մի աշխարհի ստեղծման նախապայման, «որտեղ մարդիկ կունենան խոսքի ու համոզմունքների ազատություն եւ զերծ կլինեն վախից ու կարիքից»?: Այսինքն, ըստ էության՝ սա իրավական օրինակելի պետության կայացման նախադրյալ է:

2002 թ.-ին Հայաստանը՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ, վավերացրել է «Մարդու իրավունքների մասին» Եվրոպական կոնվենցիան, որի 10-րդ հոդվածը պաշտպանում է արտահայտվելու եւ տեղեկատվու-

7. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, նախաբան:  
<http://www.un.org/en/documents/udhr/>

թյան ազատությունը: Կարելորելով տեղեկություն փնտրելու եւ ստանալու իրավունքի դերը քաղաքացիական հասարակության ձեւավորման մեջ՝ *Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է.*

«Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում»:

Որպես ՄԱԿ-ի անդամ (1992 թ.-ից)՝ Հայաստանը նաեւ միացել է *«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին»*, որի 19-րդ հոդվածում հռչակվում է հետեւյալը.

«Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքներ ունենալու եւ արտահայտվելու իրավունք. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու եւ տեղեկություններ ու գաղափարներ որոնելու, ստանալու ու տարածելու ազատություն, լրատվության ցանկացած միջոցներով, անկախ պետական սահմաններից»:

Հայաստանը վավերացրել է նաեւ «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (ուժի մեջ է մտել 1993 թ.-ից), որի 19-րդ հոդվածում խոսվում է «սեփական կարծիք ունենալու» իրավունքի եւ «անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու» ազատության մասին:

Տեղեկատվության ազատության իրավունքը սահմանվում է նաեւ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության եւ արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայով (Օրհուսի կոնվենցիա, Օրհուս, 25.06.1998թ.), 1982թ. ապրիլի 29-ին ընդունված խոսքի եւ տեղեկատվության ազատության մասին հռչակագրով, ինչպես նաեւ՝ հասարակական իշխանության մարմինների մոտ առկա տեղեկատվության մատչելիության վերաբերյալ N'R (81) 19-րդ Հանձնարարականով, Արխիվների մատչելիության վերաբերյալ եվրոպական քաղաքականության մասին N'R (2000) 13 Հանձնարարականով:

Տեղեկատվության ազատությանը, մասնավորապես՝ պաշտոնական փաստաթղթերի մատչելիությանն է վերաբերում նաեւ 2009թ.-ին Եվրոպայի խորհրդի ընդունած «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիան, որը, սակայն, Հայաստանի Հանրապետությունը դեռեւս չի վավերացրել<sup>8</sup>:

8. [http://www.foi.am/UserFiles/File/convencia\(1\).pdf](http://www.foi.am/UserFiles/File/convencia(1).pdf)

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

**2005**թ.-ի նոյեմբերին ընդունված սահմանադրական փոփոխություններով տեղեկություններ ստանալու իրավունքը հռչակվել է որպես սահմանադրական իրավունք: Տեղեկություններ ստանալու իրավունքը ճանաչվել է որպես մարդու հիմնարար իրավունքներից մեկը՝ բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով՝ ՀՀ Սահմանադրությամբ՝ «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները» գլխում՝ մարդու արժանապատվության, կյանքի, օրենքի առջեւ հավասարության, դատական պաշտպանության իրավունքների հետ մեկտեղ: ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածներն ամրագրում են յուրաքանչյուր քաղաքացու՝ տեղեկություններ ստանալու իրավունքը:

Այսպես՝ 27-րդ հոդվածն ամրագրում է.

«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

Դա նշանակում է, որ յուրաքանչյուրը՝ անկախ նրանից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, թե ոչ, անկախ սեռից, տարիքից, մասնագիտությունից, քաղաքացիությունից կարող է բոլոր աղբյուրներից տեղեկություններ պահանջել, ստանալ եւ տարածել ցանկացած միջոցով, ընդ որում, ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս:

27.1 հոդվածում նշվում է.

«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով

իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Այս հոդվածը սահմանում է յուրաքանչյուրի՝ կառավարման մարմիններին դիմելու եւ պարտադիր պատասխան ստանալու իրավունքը: Ընդ որում՝ հոդվածից հետեւում է, որ պատասխանը չպետք է անհարկի ձգձգվի եւ պետք է լինի լիարժեք:

Մեկ այլ սահմանադրական հոդվածով ամրագրված է յուրաքանչյուրի՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունքը (հոդված 23):

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42.1 հոդվածի՝

«Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները տարածվում են նաեւ իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությանմբ կիրառելի են դրանց նկատմամբ»:

Քանի որ տեղեկություններ փնտրելու եւ ստանալու իրավունքի իրականացումը կարող է բխել իրավաբանական անձի շահերից, իսկ իրավաբանական անձն էլ ի դեմս իր ղեկավարի (տնօրեն, նախագահ եւ այլն), հնարավորություն ունի փնտրել, ստանալ եւ վերլուծել իրեն անհրաժեշտ տեղեկությունները, հետեւաբար տեղեկություններ փնտրելու եւ ստանալու իրավունքն իր էությամբ կիրառելի է իրավաբանական անձանց նկատմամբ: Այսինքն, իրավաբանական անձանց վրա նույնպես

տարածվում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը:

ՀՀ Սահմանադրության մի շարք այլ հոդվածներից նույնպես բխում է քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքի կարեւորությունը:

*Այսպես 33.2 հոդվածի համաձայն.*

«Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար»:

Սահմանադրության մեկ այլ՝ 69-րդ հոդվածի 2-րդ մասն էլ սահմանում է, որ. *«Ազգային ժողովի նիստերը դռնբաց են»:*

Անուղղակիորեն հրապարակայնությանն ու տեղեկատվության ազատությանն են վերաբերում նաեւ, դատական գործի հրապարակային քննությունն ամրագրող՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

## «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

**ՀՀ** Ազգային ժողովը «Տեղեկատվության և ազատության մասին» ՀՀ օրենքն ընդունել է 2003 թ.-ի սեպտեմբերի 23-ին: Այն ուժի մեջ է մտել 2003 թ.-ի նոյեմբերի 15-ին:

Օրենքի կիրառման պրակտիկան եւ առանձնահատկություններն ամբողջությամբ պատկերացնելու համար անհրաժեշտ է ներկայացնել դրա առանձնահատկությունները, ինչպես նաեւ՝ կարգավորման ոլորտը: Այսպես, Օրենքի նախագծմանը մեծապես նպաստել եւ մասնակցել են հասարակական կազմակերպությունները՝ հաշվի առնելով տեղեկատվության ազատության ոլորտի միջազգային փորձը եւ միջազգային իրավական ակտերի՝ ՏՄ իրավունքը կարգավորող դրույթների պահանջները: Ուստի, Օրենքի մշակմանը հասարակական սեկտորի մասնակցությամբ է թերեւս պայմանավորված այն փաստը, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք համարվում է տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ աշխարհի լավագույն օրենքներից մեկը: Այն, ըստ էության, կարգավորում է տեղեկատվության ազատության ոլորտում առկա բոլոր իրավահարաբերությունները:

Նշենք Օրենքի մի քանի առանձնահատկություններ, որոնցով պայմանավորված է դրա կիրառման պրակտիկան:

Օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

**Օրենքը տեղեկատվություն ստանալու իրավունք նախատեսում է բոլորի համար:** Չկա որեւէ խտրականություն կախված մարդու աշխատանքից, սոցիալական կարգավիճակից եւ այլն: Այսինքն, տեղեկատվություն տնօրինող մարմիններից տեղեկություններ ստանալու հարցում, օրինակ, լրագրողն իր աշխատանքի բերումով չունի առավելություն այլ մասնագիտության տեր մարդկանց նկատմամբ. տեղեկատվության ազատության իրավունքը չի տրվում միայն լրագրողներին, այն յուրաքանչյուրի իրավունքն է: Օրենքի կիրառման ընթացքում հանդիպել են դեպքեր, երբ տեղեկատվություն ստանալու համար դիմած քաղաքացուն ապօրինաբար մերժվել է տեղեկատվության տրամադրումը՝ հաշվի առնելով հենց նրա կարգավիճակը: *Դիմողների նկատմամբ խտրականության ցանկացած դրսևերում պետք է ընդհանրապես բացառվի:*

**Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը սահմանում է այն անձանց/մարմինների շրջանակը,** որոնց վրա տարածվում է ՏՄ մասին օրենքը: Դրանք են.

- պետական մարմինները,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- պետական հիմնարկները,
- բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները,
- հանրային նշանակության կազմակերպությունները,
- դրանց պաշտոնատար անձինք:

Ինչպես երեւում է, այս ցանկում ընդգրկված են հանրությանը ծառայություններ մատուցող մասնավոր ընկերությունները:

Սա խիստ կարելի է եւ հզորացնում է Օրենքի ներգործությունը: Ավանդաբար տեղեկություն ստանալու իրավունքը կապվում է վերոնշյալ առաջին 4 կետերում ընդգրկված մարմիններից տեղեկություն ստանալու խնդրի հետ, քանի որ տեղեկատվության ազատությունը կոչված է ապահովելու պետական իշխանության թափանցիկությունը: Սակայն աստիճանաբար պետությունը հասարակական միջառք կարելի է ուղորտել (էներգետիկա, տրանսպորտ, կապ, ջրամատակարարում եւ այլն) շահագործումն ու կառավարումը փոխանցում է մասնավոր սեկտորին: Սրանով այս ուղորտումներին առնչվող տեղեկատվությունն ամենեւին չի կորցնում իր կարելիությունն ու անհրաժեշտությունը մարդկանց համար:

Տեղեկատվության ազատության վերաբերյալ շատ երկրների օրենքներ կարգավորում են պետական մարմինների ունեցած տեղեկատվության տրամադրումը եւ չեն վերաբերում մասնավոր կազմակերպությունների տնօրինած տեղեկատվությանը: ՏԱ մասին ՀՀ օրենքի մոտեցումն այս հարցին այլ է: Օրենքի գործողությունը տարածվում է ոչ միայն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, այլ նաեւ հանրությանը որոշ ուղորտումներով ծառայություններ մատուցող կամ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող մասնավոր կազմակերպությունների վրա:

Այսպիսով, տեղեկատվություն տնօրինող են համարվում իշխանության երեք՝ օրենսդիր, գործադիր եւ դատական ճյուղերը ներկայացնող ըստ էության բոլոր մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունները եւ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում ստացող յուրաքանչյուր մասնավոր կառույց:

Օրենքի կիրառման առանձնահատկու-

թյունների հիմնական մասը կապված է տեղեկատվություն ստանալու հարցումների մեթոդների հետ: Բազմաթիվ են դեպքերը, երբ մեթոդները հակասում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին: Օրենքում հստակ սահմանվում են տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքերն ու կարգը՝ պաշտոնյաներին զրկելով կամայականորեն գործելու հնարավորությունից: Օրինակ՝ հետեւյալ հանգամանքները չեն կարող լինել տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմք.

- անհարմարություն կպատճառի պաշտոնատար անձին կամ գերատեսչությանը,
- գերատեսչությունը կներկայացնի ոչ շահեկան լուսի տակ,
- դիմողի գործը չէ,
- տրամադրվող տեղեկատվությունը կարող է թյուր ընկալվել դիմողի կամ ՁԼՄ-ի կողմից:

Ներկայացնենք ապօրինի մեթոդների մի քանի օրինակ. 2010թ.-ի փետրվարի 2-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր Երեւանի քաղաքապետարան՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

«Շենգավիթ վարչական շրջանի Արտաշիսյան փողոցի մայթային եւ բակային տարածքներում հողահատկացումների վերաբերյալ որոշումների պատճենները,

Նույն տարածքում քանի՞ ապօրինի շինություն կա»:

Ի պատասխան ԻԱԿ-ի հարցման՝ Երեւանի քաղաքապետարանը մերժել էր տեղեկատվություն տրամադրել. «Համաձայն ՀՀ Սահմանադրության 23-րդ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածների պահանջների՝ պահանջվող տեղեկատվությունները չեն կարող տրամադրվել»:

Նշենք, որ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածը վերաբերում է անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությանը, իսկ Օրենքի 8-րդ հոդվածը վերաբերում է ՏԱ սահմանափակումներին: Ամենայն հավանականությամբ պատասխան գրության մեջ նկատի են ունեցել, որ հայցվող տեղեկություններն անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությանն են վերաբերում, սակայն քաղաքապետարանը ոչ միայն զլացել է կոնկրետ նշել, թե ինչ հիմքով է մերժում ԻԱԿ-ի հարցումը, այլ նաեւ ամեն դեպքում անհիմն պատասխան է ուղարկել, քանի որ ԻԱԿ-ի պահանջած վերոնշյալ տեղեկությունները ոչ մի կերպ չեն կարող վերաբերել առանձին մարդկանց անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությանը:

Ապօրինի մերժման օրինակ է նաեւ ԻԱԿ-ի՝ տեղեկատվություն ստանալու հարցմանն ի պատասխան ուղարկված՝ Արմավիրի քաղաքապետ Ռուբեն Խլղաթյանի պատասխանը. ԻԱԿ-ը 2005թ.-ի հոկտեմբերի 14-ին դիմել էր Արմավիրի քաղաքապետ Ռուբեն Խլղաթյանին՝ խնդրելով տրամադրել.

«2005թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Արմավիր քաղաքի ավագանու կայացրած բոլոր որոշումների պատճենները, 2005թ.-ի բյուջեի պատճենը, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը 2-րդ եռամսյակի (ապրիլ-հունիս) համար»:

Քաղաքապետ Ռ. Խլղաթյանը 2006թ. սեպտեմբերի 20-ին թվագրված գրությամբ համաձայնել էր պահանջվող տեղեկատվությունը տրամադրել այն դեպքում, եթե հարցումը ձեւակերպվի ձեւաթղթի վրա, տրամադրվի Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կանոնադրությունը եւ վճարվի տեղեկատվության տրամադրման համար: Թեեւ սրանք ակնհայտ անհիմն պատանջներ էին, Կենտրոնը 2006թ.-ի հունվարի 11-ին ձեւաթղթի վրա ձեւակերպված կրկնակի հարցում ուղարկեց քաղաքապետին, որտեղ նշված էր, որ

Կենտրոնը պատրաստ է վճարել 10 էջից ավելի տեղեկատվության պատճենահաման ծախսերը՝ համաձայն Օրենքի 10-րդ հոդվածի: Հարցումում նշվել էր նաեւ, որ կանոնադրության պատճենը տրամադրելու պահանջն ապօրինի է եւ չի բխում օրենքի պահանջներից: Արմավիրի քաղաքապետը, այս հարցմանն ի պատասխան, պահանջեց անձամբ տեսնել Կենտրոնի ղեկավարին՝ պարզելու, թե ով է այդ համարձակը, որ իրենից նման տեղեկություններ է պահանջում: Նրա պահանջը մնաց անպատասխան, իսկ ԻԱԿ-ի հարցումը՝ չբավարարված: Արդյունքում, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը Արմավիրի քաղաքապետի գործողությունները վիճարկեց դատական կարգով: Դատարանը վճռեց պարտավորեցնել քաղաքապետարանին տրամադրել պահանջվող ողջ տեղեկատվությունը եւ վճարել հայցվորի դատական ծախսերը՝ պետական տուրքը:

Ապօրինի մերժման վառ օրինակ է նաեւ ԻԱԿ-ին տրված՝ Արարատի մարզպետարանի պատասխանը. 16.09.2005թ. ԻԱԿ-ը հարցում էր ուղարկել Արարատի նախկին մարզպետ Ա. Սարգսյանին՝ խնդրելով տրամադրել 2005թ. 1-2-րդ եռամսյակների ընթացքում մարզպետի ընդունած որոշումների պատճենները:

03.10.2005թ. թվագրված պատասխանով Արարատի մարզպետը հրաժարվեց տրամադրել պահանջվող տեղեկատվությունը՝ նշելով, որ հարցումը պարունակում է հաշվետվության կամ վերահսկողության պահանջի տարր, եւ տեղեկատվությունը կտրամադրվի, եթե ներկայացվի իրավական ակտի կոնկրետ նշում: Այս պահանջներն ակնհայտ ապօրինի էին: Ուստի, 28.10.2005թ. ԻԱԿ-ը կրկնակի հարցում ուղարկեց Արարատի մարզպետին՝ նշելով նրա պատասխանի անհիմն լինելը եւ կրկին պահանջելով նույն տեղեկատվությունը: Արարատի մարզպետից ստացվեց երկրորդ գրությունը. «Ձեր՝ 28.10.2005թ. թիվ 03 հարցմանն ի պատասխան՝ հայտնվում

է, որ նույնաբովանդակ Ձեր նախորդ հարցմանը մեր կողմից 03.10.2005թ. տրված պատասխանում հստակ է մերժման պարզաբանումը»: Այս դեպքում եւս ԻԱԿ-ը ստիպված եղավ դիմել դատարան: Սակայն, մինչեւ դատական քննության ավարտը Արարատի մարզպետարանը Ինֆորմացիայի ազատության կենտրոնին տրամադրեց պահանջվող տեղեկությունները:

**SU մասին օրենքի կիրառման ընթացքում տեղեկատվություն ստանալու հարցումներն ապօրինի մերժելու** եւս մի արատավոր պրակտիկա է ձեւավորվել. որոշ պաշտոնյաներ տեղեկություն ստանալու հարցումները մերժում են ՀՀ Կառավարության կողմից Օրենքով նախատեսված ենթաօրենսդրական ակտերի բացակայության պատճառով: Համաձայն Օրենքի՝ տեղեկատվության տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ինչպես նաեւ՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը գործում է շուրջ 7 տարի, սակայն երկու ենթաօրենսդրական ակտ, որոնք նախատեսված են այս Օրենքով եւ անհրաժեշտ են տեղեկատվության ազատության ապահովման համար, այդպես էլ չընդունվեց: Ուստի, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, ՀՀ Աժ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը եւ ՀՀ Արդարադատության նախարարությունը համատեղ մշակել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի բարեփոխումների փաթեթ, որի ընդունման արդյունքում

մի շարք կարելու հարցեր կստանան իրենց լուծումները: Այս օրենսդրական փաթեթով նախատեսվում է հանել տեղեկություններ ստանալու իրավունքի կիրառումն ապահովող ենթաօրենսդրական ակտեր ընդունելու՝ ՀՀ Կառավարության վրա դրված պարտականությունը: Փոխարենը, այն հարցերը, որոնք պետք է կարգավորվեն ենթաօրենսդրական ակտերով, կներառվեն հենց Օրենքի մեջ՝ վերջ տալով տարակարծություններին եւ ենթաօրենսդրական ակտերի բացակայության հիմնավորմամբ տեղեկատվություն ստանալու հարցումները մերժելու արատավոր պրակտիկային:

**SU մասին ՀՀ օրենքի կիրառման պրակտիկան անմիջականորեն առնչվում է** նաեւ տեղեկատվության տրամադրման ժամկետների վերաբերյալ դրույթներին, ուստի անհրաժեշտ է ներկայացնել նաեւ դրանք: Օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է այն ժամկետները, որոնցում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է պատասխանել հարցումներին: Այսպես,

- բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում,
- իսկ գրավոր հարցման պատասխանը տրվում է հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ հարցմանը պատասխանելու համար առաջացել է լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության: Այս դեպքում տեղեկությունը դիմողին է տրվում հարցումը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում, սակայն հետաձգման մասին 5-օրյա ժամկետում անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել դիմողին: Հետաձգումը հիմնավորելը կարելու պայման է, քանի որ բացառում է պատասխանի կանայական հետաձգումը:

2007թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կատարած վերլուծությունը ցույց տվեց, որ Օրենքով սահմանված ժամկետներում՝ մինչև 5 օր, տեղեկատվությունը ստանում է լրագրողների 27 տոկոսը<sup>9</sup>: Այս ցուցանիշը բավականին ցածր կարելի է համարել: Փաստորեն, հարցված լրագրողների միայն 27 տոկոսի համար է գործում օրենքով սահմանված 5-օրյա ժամկետը: Հարցված լրագրողների 16 տոկոսը նշել է, որ անհրաժեշտ տեղեկությունը ստացել է 1-ից 3 ամիս ուշացումով: Տեղեկություններն ընդհանրապես չի ստացել հարցված լրագրողների 10 տոկոսը: Ընդհանրապես, պրակտիկայում հաճախ է կիրառվում նաեւ այն ձեւը, երբ պաշտոնյաները ցանկանալով ցույց տալ, թե գործում են օրենքի շրջանակում, կեղծ անսաթիվ են նշում գրության վրա, թվագրում են հետին թվով, բայց մոռանում են, որ ծրարի վրա հստակ երեւում է փոստային առաքման ճշգրիտ անսաթիվը: Ինչպես օրենքով սահմանված ժամկետների խախտումները, այնպես էլ այս արատավոր պրակտիկան հավասարապես մերժելի են եւ ենթակա են բողոքարկման: Նշենք, որ ԻԱԿ-ը ժամկետները խախտելու հիմքով մի շարք մարմինների դեմ (Արաբկիրի, Նոր-Նորքի եւ Դավիթաշենի թաղապետարանների դեմ) դատական հայց է ներկայացրել: Նման դատական նախադեպերի ստեղծման միջոցով պետք է նաեւ բացասական պրակտիկան փոխարինվի դրականով, եւ կանխարգելվեն նաեւ հետագա խախտումները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո առաջին մի քանի տարիների ընթացքում պաշտոնյաները հաճախ խառնում էին դիմում-բողոքը եւ տեղեկատվություն ստանալու հարցումը: Արդյունքում, հարցումները պատասխանվում էին 15-30-օրյա ժամկետում, այնինչ Օրենքով սահմանված է 5-օրյա ժամկետ: Չնայած այժմ հաճախ չեն հանդիպում դեպքեր, երբ պաշտոնյան շփոթում է

դիմում-բողոքը եւ տեղեկատվություն ստանալու հարցումը, սակայն տեղեկատվություն ստանալու հարցումները հիմնականում պատասխանվում են Օրենքով սահմանված 5-օրյա ժամկետի խախտմամբ:

Անհրաժեշտ է, որ տեղեկություն ստանալու բոլոր հարցումները պատասխան ստանան օրենքով սահմանված ժամկետներում: Պատասխանը հետաձգելու դեպքում անհրաժեշտ է 5-օրյա ժամկետում դիմողին տեղեկացնել հետաձգման ժամկետի եւ պատճառների մասին: Պրակտիկան ցույց է տալիս, որ տեղեկությունների տրամադրման համար օրենքով սահմանված 5-օրյա ժամկետը իրատեսական է, եւ ցանկության դեպքում հեշտությամբ կարելի է պատասխան տալ հենց այս ժամկետում: Եվ հակառակը. եթե մարմինը եւ դրա ղեկավարությունը չունի քաղաքական կամք եւ/կամ համապատասխան գիտելիք, միեւնույն է տեղեկությունների տրամադրումն առանց հիմնավորման ուշանում է, պատասխանները լինում են թերի, կամ պարզապես հարցումներն անտեսվում են՝ դրանց պատասխանելը համարելով ոչ թե պարտականություն, այլ՝ հավելյալ աշխատանք:

Տեղեկատվություն ստանալու հարցումներին պատասխանելու ժամկետների վերաբերյալ առավել իրական պատկեր ներկայացնելու համար բերենք մի օրինակ. ԻԱԿ-ը 2010թ.-ի հունիսի 28-ին տեղեկատվություն ստանալու հարցումներ ուղարկեց Երեւան քաղաքի բոլոր 12 վարչական շրջանների ղեկավարներին՝ նպատակ ունենալով պարզել, թե տվյալ վարչական շրջանում որտե՞ղ են գործում վճարովի ավտոկայանատեղեր, կա՞ որեւէ իրավական ակտ, որի հիման վրա Երեւանի փողոցներում անհայտ անձինք ավտոմեքենայի կայանման համար գումար են գանձում, օրինակա՞ն են արդյոք այդ գանձումները, եթե ոչ, ապա ո՞ւմ կարելի է բողոքարկել ավտո-

9. Լրագրողների տեղեկատվություն ստանալու իրավունքը. ուսումնասիրություն: ԻԱԿ, Երեւան, 2008թ.:

կայանման համար գումար պահանջելու դեպքում:

ԻԱԿ-ը խնդրել էր տրամադրել նաեւ տեղեկություն այն մասին կնքվե՞լ են արդյոք պայմանագրեր Երեւանի վարչական շրջանների վճարովի ավտոկայանատեղերը սպասարկելու համար եւ խնդրել էր տրամադրել այդ պայմանագրերի պատճենները: 12 վարչական շրջաններից միայն չորսն էին ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել Օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում. ԻԱԿ-ը հարցումներն ուղարկել էր 28.06.2010թ., իսկ Նուբարաշենի թաղապետարանի պատասխան գրությունը ստացել էր 1-օրյա, Նորք-Մարաշ, Աջափնյակ եւ Նոր Նորք համայնքների պատասխան գրությունները՝ 3-օրյա ժամկետներում:

Մնացած բոլոր վարչական շրջանները ԻԱԿ-ի հարցումներին պատասխանել են ուշացումով. Քանաքեռ-Զեյթունը ԻԱԿ-ի կողմից հարցումն ուղարկելուց հետո՝ 7, Դավթաշեն, Շենգավիթ, Ավան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանները՝ 8, Էրեբունի, Արաբկիր վարչական շրջանները 9-օրյա ժամկետներում:

Ժամկետների առումով վատագույնը Կենտրոն վարչական շրջանն էր, որի պատասխան գրությունը թեւ թվագրված էր 09.07.2010թ., այսինքն պատասխան գրությունն ուղարկվել է հարցումն ուղարկելուց 10 օր հետո, սակայն հարցման պատասխանը ԻԱԿ-ը ստացել է երեք շաբաթյա ուշացումով:

**Օրենքի կիրառման ընթացքում հանդիպող խնդիրներից է նաեւ տեղեկատվություն տնօրինողների վերաբերմունքն իրենց տնօրինության տակ գտնվող տեղեկատվությանը.** իրենց մոտ գտնվող տեղեկությունները համարելով իրենց սեփականությունը՝ պաշտոնյաները հաճախ չեն պատասխանում տեղեկատվություն ստանալու հարցումներին՝ պատճառաբանելով, թե չգիտեն դիմողն ինչի համար է խնդրում տվյալ տեղեկությունը: Այս մոտեցումը

դուրս է Օրենքի տրամաբանությունից, քանի որ պետական մարմինների տնօրինության տակ գտնվող տեղեկությունները ոչ թե պաշտոնյաների, այլ հասարակության, քաղաքացիների սեփականությունն են: Ուստի, որեւէ մեկը պարտավոր չէ հիմնավորել, թե ինչ նպատակով է ուզում ստանալ այս կամ այն տեղեկությունը եւ ինչպես է պատրաստվում այն օգտագործել: Այս միտքն ամրագրված է Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում, որն ուղղակիորեն նշում է՝ «Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը»:

**Օրենքի կիրառման ընթացքում տարակարծություններ առաջացրած հարցերից է նաեւ տեղեկատվության համար վճարելու խնդիրը:** ՏԱ մասին օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է տեղեկությունների տրամադրման պայմանները: Այս հոդվածով նախատեսվում է վճարների գանձում տեղեկատվության տրամադրման դեպքում: Վճար չի գանձվում միայն օրենքով սահմանված դեպքերում:

Չմայած Օրենքը սահմանում է, որ մինչեւ 10 էջ տեղեկատվությունը տրամադրվում է անվճար, ինչպես նաեւ սահմանում է, որ որոշ տեղեկատվություն պետք է պարտադիր հրապարակվի՝ պատահում են դեպքեր, երբ տեղեկատվություն տնօրինող մարմինը սահմանում է տեղեկատվության տրամադրման վճար, ինչը, բնականաբար, հակասում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Այդպես, Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի ավագանին 2009թ.-ի մայիսի 6-ին որոշում է կայացրել, որի համաձայն՝ Ստեփանավանի քաղաքապետարանում պատճենահանվող որոշումների կրկնօրինակների համար սահմանվել է վարձավճար՝ մեկ էջի համար 500 դրամ: Այսինքն, եթե քաղաքացին ցանկանում է ստանալ համայնքի ավագանու նիստերի (համայնքի ավագանու նիստերը դռնբաց են) օրակարգի պատճենը, կամ ցանկանում է տեղեկանալ, թե համայնքի մատուցած ծառայու-

թյունների դիմաց գանձվող վճարների ինչ չափեր են սահմանված ավագանու որոշումներով, ապա ստիպված է մեկ էջ տեղեկատվության համար վճարել 500 դրամ, այնինչ ավագանու համապատասխան որոշումները կարող են կազմել տասնյակ էջեր: Ստեփանավանի ավագանու այս որոշումն ուղղակիորեն հակասում է Օրենքին եւ հակասորինական է: Արդյունքում, 2010թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ՏԱ ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ Ստեփանավանի քաղաքապետարանը նման որոշման համար ճանաչվեց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտականություններն ամենավատը կատարող մարմին:

Հարկ է սակայն նշել, որ պետական կառավարման որոշ մարմիններում համապատասխան իրավական ակտերի հիման վրա սահմանված են տեղեկությունների տրամադրման պայմաններ, որոնք տարբերվում են Օրենքի 10-րդ հոդվածի պայմաններից: Այսպես՝ ՀՀ Ոստիկանության ճանապարհային ոստիկանություն ծառայությունը տեղեկատվության տրամադրման համար գանձում է կատարում՝ անկախ այն բանից՝ այդ տեղեկատվությունը գերազանցում է 10 էջը, թե՛ ոչ: Տեղեկությունների տրամադրման հաշվին գանձում կատարելը նախատեսված է որպես ՀՀ Ոստիկանության ճանապարհային ոստիկանություն ծառայության արտաբյուջետային ֆոնդի ձեւավորման աղբյուր: Նույն իրավիճակն է նաեւ ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի պետական կոմիտեի դեպքում, որից տեղեկություն ստանալու համար նույնպես վճար է սահմանված, անկախ այն բանից՝ այդ տեղեկատվությունը գերազանցում է 10 էջը, թե՛ ոչ: Տեղեկատվության տրամադրման համար վճարներ գանձելու հարցում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով չի առաջնորդվում նաեւ Հայաստանի ազգային արխիվը: Արխիվն առաջնորդվում է «Արխիվային գործի մասին»

և» ՀՀ օրենքով, որը հնարավորություն է տալիս Արխիվին տեղեկատվության տրամադրումն իրականացնել վճարովի հիմունքներով:

Վերոգրյալը ցույց է տալիս, որ տեղեկատվության տրամադրման վճարների միասնականացման խնդիր կա: Տարբեր իրավական ակտերով տեղեկատվության տրամադրման համար վճարման տարբեր կարգ եւ չափեր սահմանելը օրենսդրական առումով խառնաշփոթ է առաջացնում: Արդյունքում, երբ տեղեկատվություն փնտրողը, առաջնորդվելով ՏԱ մասին օրենքով, դիմում է վերոնշյալ մարմիններին, նրան մերժում են տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները քանի դեռ չի կատարվել համապատասխան վճարում: Արդյունքում, տեղեկատվություն փնտրող քաղաքացին կանգնում է լրացուցիչ գործողություններ կատարելու խնդրի առաջ՝ վատնելով լրացուցիչ միջոցներ եւ ժամանակ: Բացի այդ, վերոնշյալ մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման համար սահմանված են վճարների տարբեր չափեր: Սա էլ իր հերթին խոչընդոտում է տեղեկատվության համար վճարների չափերի սահմանման միասնական չափորոշիչների ամրապնդմանը:

**Օրենքի կիրառման խնդիրներից մեկն էլ այն է, որ Օրենքով նախատեսված, բայց կարգավորված չէ էլեկտրոնային հարցումներ կայացնելու եւ դրան պատասխանելու կարգը:** Նախ, Օրենքը նախատեսում է նաեւ տեղեկատվության էլեկտրոնային տարբերակ, երկրորդ, Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության տրամադրման համար գանձում չի կատարվում տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս: Այսինքն, Օրենքը նախատեսում է հարցումներին պատասխանելու էլեկտրոնային տարբերակ: Սակայն, պրակտիկան ցույց է տալիս, որ էլեկտրոնային հարցումների հանդեպ պաշտոնյաների վերաբերմունքն այլ է:

2009թ.-ին «Առավոտ» թերթի մարզերի եւ Սփյուռքի էջի պատասխանատու, լրագրող Արամ Զաքարյանը ԻԱԿ-ի հետ համատեղ տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ հայց ներկայացրեց Լոռու եւ Շիրակի մարզպետարանների դեմ, որոնք անպատասխան էին թողել լրագրողի էլեկտրոնային հարցումները: Շիրակի մարզպետարանը համաձայնեց տրամադրել պահանջվող տեղեկատվությունը՝ նշելով, որ էլեկտրոնային հարցումը չեն ստացել տեխնիկական պատճառներով: Այլ էր իրավիճակը Լոռու մարզպետարանի հետ: Լոռու մարզպետարանի ներկայացուցիչը դատարանում հաստատեց, որ հարցումը ստացվել է, սակայն նշեց, որ էլեկտրոնային հարցումը չի կարող գրավոր հարցում համարվել: ԶԶ Վարչական դատարանը մերժեց հայցը, քանի որ Լոռու մարզպետարանը վճռի հրապարակումից 1 օր առաջ «Առավոտ» օրաթերթին տրամադրել էր հայցվող ողջ տեղեկատվությունը: Նաեւ դատարանը գտավ, որ օրաթերթի կողմից ԶԶ Լոռու մարզպետին ուղարկված մարզպետարանի ոչ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով էլեկտրոնային տարբերակով ուղարկված հարցմանը չպատասխանելը չի կարող գնահատվել ոչ իրավաչափ: Այսպես, Օրենքով էլեկտրոնային հարցում ներկայացնելու կարգը սահմանված չլինելու հետեւանքով տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործն ունեցավ բացասական ավարտ:

Հարկ է նշել, որ «Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքի բարեփոխումների փաթեթով նախատեսվում է կարգավորել նաեւ տեղեկատվություն ստանալու էլեկտրոնային հարցումներ ներկայացնելու եւ դրանց պատասխանելու կարգը: Այսպես, նախատեսվում է, որ տեղեկությունը փնտրելու եւ (կամ) ստանալու նպատակով տեղեկատվություն տնօրինողին կարող են ներկայացվել ոչ միայն բանավոր եւ գրավոր, այլ նաեւ

էլեկտրոնային հարցումներ: Համաձայն նախագծի՝ էլեկտրոնային հարցումն ուղարկվում է տեղեկատվություն տնօրինողի ղեկավար պաշտոնատար անձի կամ տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձի ծառայողական էլեկտրոնային փոստի հասցեով: Օրենքի բարեփոխումների փաթեթով գրավոր հարցմանը ներկայացվող պահանջներն, ինչպես նաեւ գրավոր հարցումներին պատասխանելու ժամկետները եւ այլ պայմանները վերաբերելու են նաեւ էլեկտրոնային հարցումներին: Սահմանվելու են նաեւ էլեկտրոնային հարցումներին ի պատասխան ուղարկված էլեկտրոնային պատասխան գրության պայմանները եւ այլն:

**Տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման ամենամեծ խոչընդոտն**, ըստ էության, «Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքից անտեղյակությունն է: Պրակտիկան ցույց է տալիս, որ չնայած Օրենքը գործում է շուրջ 7 տարի, սակայն Օրենքի եւ տեղեկություն ստանալու իրավունքի վերաբերյալ գիտելիքների պակաս կա ինչպես պաշտոնյաների, այնպես էլ քաղաքացիների շրջանում:

Օրենքից անտեղյակության վառ օրինակ էր Մալաթիա-Սեբաստիայի վարչական շրջանի աշխատակցի պատասխանը ԻԱԿ-ի գրավոր հարցմանը. Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2010թ.-ի հունիսի 28-ին տեղեկատվություն ստանալու հարցումներ ուղարկեց Երեւան քաղաքի բոլոր 12 վարչական շրջանների ղեկավարներին՝ վարչական շրջաններում վճարովի ավտոկայանատեղերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Մալաթիա-Սեբաստիայի թաղապետարանը ԻԱԿ-ի հարցմանը թերի էր պատասխանել՝ չտրամադրելով Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գործող երկու ավտոկայանատեղերի սպասարկման համար կնքված պայմանագրերի պատճենները: Երբ ԻԱԿ-ի ներկայացուցիչը հեռախոսային զրույցի ժամանակ խնդրեց տրամադրել պայմա-

նագրերի պատճենները, վաչական շրջանի աշխատակիցը նախ հարցրեց, թե ինչու է պարտավոր տրամադրել պայմանագրերի պատճենները, ապա, ԻՎԿ-ի կողմից Օրենքը վկայակոչելուց հետո նշեց, որ ծանոթ չէ այդ օրենքին եւ նույնիսկ եթե Օրենքը թույլ է տալիս տրամադրել նման տեղեկատվություն, նա կարող է դա անել միայն համայնքի ղեկավարին զեկուցելուց հետո: Արդյունքում, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարը հայտնվեց ԻՎԿ-ի եռամսյակային Սեւ ցուցակում՝ որպես տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյա:

Վերլուծելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման վերոնշյալ առանձնահատկությունները՝ կարելի է վերհանել տեղեկատվության ազատության իրավունքի հիմնական ընդհանուր խնդիրները, առաջընթացները, տեղեկատվության ազատության իրավունքի զարգացման միտումները, ինչպես նաեւ այն հիմնական լուծումները, որոնց ձեռքբերման դեպքում հնարավոր կլինի էականորեն բարելավել տեղեկատվության ազատության վիճակը Հայաստանում:

Զնայած տեղեկատվության ազատության գաղափարն այլեւս անշրջելիորեն մուտք է գործել ՀՀ կառավարման համակարգ, ներդրվել եւ շարունակում են ներդրվել նոր ընթացակարգեր եւ ծրագրեր ուղղված կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնության ապահովմանը, այնուամենայնիվ, կառավարման համակարգում առկա են բազմաթիվ խոչընդոտներ, որոնք էականորեն խանգարում են հրապարակային գործունեության եւ պետություն-հանրություն կապի արդյունավետ իրականացմանը: Ոլորտում առկա հիմնախնդիրները բազմաթիվ են ու բազմաբնույթ: Ստորեւ կներկայանենք դրանցից առավել առանցքայինները, որոնք հրատապ լուծում են պահանջում տեղեկատվության ազատության իրավունքի լիարժեք ապահովման համար:

Հիմնախնդիրներից առաջինը կարելի է նշել պաշտոնյաներից շատերի մոտ բաց աշխատելու մշակույթի բացակայությունը կամ որոշ դեպքերում՝ ոչ բավարար մակարդակի լինելը: Նրանց մեծ մասը դեռեւս սովոր չէ պարտադիր արձագանքել հասարակության պահանջներին եւ վերջինիս տեղեկատվություն տալը չի ընկալում որպես իր հիմնական պարտականություններից մեկը:

Հաջորդ խնդիրը պաշտոնական տեղեկատվության ոչ հասանելի լինելն է: Մի կողմից պետական մարմինները բավարար միջոցներ չեն ձեռնարկում իրենց տնօրինման տակ եղած տեղեկատվությունը սեփական նախաձեռնությամբ հանրության համար մատչելի դարձնելու համար, եւ մյուս կողմից՝ պետական մարմինները պատշաճ կերպով ընթացք չեն տալիս մարդկանց տեղեկատվություն ստանալու հարցումներին: Որոշ դեպքերում մարդիկ հնարավորություն չեն ունենում մասնակցել համայնքի ավագանիների նիստերին՝ դրանց կազմակերպման օրի եւ վայրի մասին պատշաճ եւ ժամանակին չժամուցվելու պատճառով: Որոշ համայնքներում ավագանիների եւ համայնքների ղեկավարների որոշումները կայացվում են գաղտնիության մթնոլորտում, իսկ դրանց պատճեններն ստանալու վերաբերյալ մարդկանց եւ/կամ կազմակերպությունների հարցումներն անհիմն մերժվում են կամ մնում անպատասխան: Որոշումները կայացվում են փակ դռների ետեւում, իսկ ընդունվելուց հետո շարունակում են մնալ պաշտոնյաների աշխատասենյակներում՝ փակի տակ:

Հաջորդ հիմնախնդիրն այն է, որ մարմինները չեն կատարում Օրենքի պահանջը՝ տարին առնվազն մեկ անգամ հրապարակել իրենց տնօրինման տակ գտնվող տեղեկությունները, ներառյալ հանրության համար մատչելի վայրում փակցնելու միջոցով: Ինտերնետային կայքերում տեղադրելու, ցուցատախտակներին փակց-

նելու միջոցով կամ որեւէ այլ մատչելի մեխանիզմով չի իրականացվում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների, մարմինների տարեկան եւ ընթացիկ գործունեության մասին հաշվետվությունների հրապարակումը: Նույնիսկ այն գերատեսչությունները, որոնք հրապարակում են հաշվետվություններ, այս պարտավորությունը չեն կատարում կանոնավոր եւ համակարգված:

Ոչ կանոնավոր եւ չհամակարգված է իրականացվում նաեւ հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների կանոնակարգերի մշակումն ու տարածումը: Գործող պաշտոնական կայքերը, որոշ բացառություններով, ծառայում են ոչ թե հանրությանն անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելուն, այլեւ գերատեսչության ղեկավարի գովազդն ապահովելուն:

Որպես անօրինական մերժման հիմք առավել հաճախակի է դարձել կառավարության կողմից տեղեկություն տրամադրելու կարգը չընդունելը, ինչը շահարկվում է այն պաշտոնյաների կողմից, ովքեր չեն ցանկանում տրամադրել պահանջվող տեղեկատվությունը: Նշենք, որ ընդունվել են նույնիսկ դատական որոշումներ, որոնցով դատարանը մերժել է տեղեկատվության տրամադրումը՝ տվյալ մարմնում կարգի բացակայության հիմքով: Այս ընթացակարգերի բացակայության հետեւանքով մարմիններում չի գործում տեղեկատվության տրամադրման մեկ միասնական համակարգ: Այս բացը գործնականում առաջ է բերում չհամակարգված իրավիճակ, երբ պետական մարմիններում տեղեկատվությունը չի մշակվում, հավաքվում, դասակարգվում եւ պահպանվում մեկ միասնական համակարգով:

Հիմնական խնդիրներից է նաեւ քաղաքացիների եւ պաշտոնյաների շրջանում տե-

ղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ իրազեկման պակասը: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի պրակտիկայում եղել են դեպքեր, երբ ԻԱԿ-ը ստիպված է եղել տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանելու համար օրենքով սահմանված ժամկետների կամ օրենքով սահմանված մերժման հիմքերի եւ պատշաճ հիմնավորման վերաբերյալ պարզաբանումներ տալ, տեղյակ պահել դրանց գոյության մասին՝ պահանջելով տեղեկատվություն ստանալու իր հարցումներին սահմանված ժամկետում պատշաճ պատասխան կամ պատշաճ ձեւով հիմնավորված մերժում տալ:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ վերջին տարիներին տեղեկատվության ազատության վիճակը որոշակիորեն բարելավվել է Հայաստանում: Աստիճանաբար ձեւավորվում է բաց աշխատելու մշակույթ: Հրապարակայնությունը եւ բացությունն ընկալվում են որպես կառավարման որակի գնահատման կարեւորագույն չափանիշներից մեկը: Դա ունի իր մի քանի պատճառները:

Նախ՝ պաշտոնյաների մի մասը սկսել է գիտակցել, որ տեղեկատվության ազատությունը, տեղեկությունները պատշաճ եւ ժամկետում տրամադրելը, բաց աշխատելն օգուտ է նաեւ իրենց եւ իրենց կազմակերպության հեղինակության բարձրացման համար: Հետեւաբար՝ չարժե օրինակ, համայնքի բյուջեի կամ համայնքապետի որոշումների պատճենները չտրամադրելու հետեւանքով բացասական կարծիք ստեղծել քաղաքացիների մոտ: Առանց այդ էլ հանրության մոտ առկա է պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վստահության պակաս:

Երկրորդ՝ քաղաքացիներն ավելի իրազեկ են դարձել իրենց իրավունքներից: Օրենքի ընդունումից ի վեր մի շարք տեղական եւ միջազգային կազմակերպություններ կազ-

մակերպում են տեղեկատվության ազատության վերաբերյալ ուսուցումներ ինչպես պաշտոնյաների եւ լրագրողների, այնպես էլ քաղաքացիների համար: Միայն 2008-2010թ.թ. ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 33 բոլոր մարզերում եւ Երեւանում կազմակերպել է 72 ուսուցում 2500 պաշտոնյաների եւ քաղաքացիական հասարակության անդամների համար: Իրազեկության բարձրացման հետեւանքով քաղաքացիներն ավելի պահանջատեր են դարձել եւ այժմ արդեն չեն բավարարվում զուտ բանավոր խնդրանքով, այլ կարողանում են պատշաճ գրավոր հարցումների միջոցով ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը: Եթե նախկինում քաղաքացիները հիմնականում տեղեկություններ ստանալու հարցումը խառնում էին դիմումների եւ բողոքների հետ, ապա այժմ ԻԱԿ դիմած շատ քաղաքացիներ հստակ պատկերացնում են, թե ինչ է հարցումը, եւ ինչպես կարող է տեղեկատվության ազատությունը օգտակար լինել իրենց այլ իրավունքների պաշտպանության կամ իրականացման համար:

Քաղաքացիական հասարակության խմբերը հասարակական վերահսկողության ամենատարբեր մեխանիզմների միջոցով փորձում են հաշվետու դարձնել կառավարման մարմիններին: Հասարակական վերահսկողության արդյունավետ մեխանիզմ է Ինֆորմացիայի ազատության

կենտրոնի կողմից ամենամյա Սեւ ցուցակի հրապարակումը: Ցուցակում ընդգրկվում են այն պաշտոնյաները, ովքեր խուսափում են պատասխան տալ մարդկանց հարցումներին, ովքեր նախընտրում են գործել մութ միջանցքներում եւ թաքցնել իրենց գործողությունները հասարակության աչքից: Սեկ այլ մեխանիզմ է Ոսկե բանալի-Ժանգոտ կողպեք ամենամյա մրցանակաբաշխությունը, որի ընթացքում ոսկե բանալիներ են շնորհվում տվյալ տարում հրապարակային գործող գերատեսչությունների ղեկավարներին, եւ Ժանգոտ կողպեք՝ գաղտնի աշխատողներին<sup>10</sup>:

Չորրորդ՝ տեղեկատվության ազատության զարգացման գործում նշանակալի դեր են խաղացել նաեւ տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործերը: 2001թ.-ից սկսած Հայաստանում տեղեկատվության ազատության իրավունքի խախտման վերաբերյալ տասնյակ դատական գործեր են տեղի ունեցել: 2005-2010թ.թ.-ի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նախաձեռնել է տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ 27 դատական գործ: Հարկ է նշել, որ ԻԱԿ-ի նախաձեռնած եւ ավարտված ՏԱ վերաբերյալ դատական գործերի 75%-ն ունեցել է դրական ավարտ<sup>11</sup>:

10. Այս մասին առավել մանրամասն տես ԻԱԿ-ի պաշտոնական կայքում՝ <http://www.foi.am/am/content/207/>

11. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի բոլոր դատական գործերին կարող եք ծանոթանալ <http://www.foi.am/am/rcontent/14/> կայքում, ինչպես նաեւ Կենտրոնի հրատարակած «Տեղեկատվություն ստանալու իրավունք. Դատական գործերի ժողովածու» 1-ին եւ 2-րդ գրքերում, 2007թ., 2010թ.:

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օրենքի կիրառման վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելն անհնար է առանց Օրենքի հիման վրա նախաձեռնված դատական գործերի վերլուծության: Տեղեկատվության ազատության իրավունքի դատական պրակտիկան հնարավորություն է տալիս պարզել, թե ինչպես են դատավորները մեկնաբանում եւ կիրառում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաեւ վերհանել Օրենքի եւ տեղեկատվության ազատության իրավունքի հարաբերակցությունն այլ իրավական ակտերի հետ:

Տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության պրակտիկան պայմանականորեն կարելի է բաժանել 3 փուլի.

1. Մինչեւ Օրենքի ընդունումը՝ 2001-2003թ.թ.-ին տեղի ունեցած գործեր,
2. Օրենքի ընդունումից հետո՝ 2003-2006թ.թ.-ին տեղի ունեցած գործեր,
3. 2007-2010թ.թ.-ին տեղի ունեցած գործեր:

Օրենքի ընդունումից հետո տեղի ունեցած գործերի տարանջատումն անհրաժեշտ է այն պատճառով, որ փոխվել է գործերի բովանդակությունը. 2003-2006թ.թ.-ի ընթացքում նախաձեռնված դատական գործերի հիմնական նպատակը պաշտոնյաներից դատական կարգով տեղեկություններ ստանալն էր, իսկ 2007-2010թ.թ.-ին այդ պահանջին ավելացել է նաեւ պաշտոնյաներին տեղեկատվության ազատության իրավունքը խախտելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը, ինչն էականորեն ազդել է ՏԱ դատական գործերի արդյունքի վրա:

Տեղեկատվության ազատության իրավունքը դատական կարգով պաշտպանելու եւ վերականգնելու գործընթացը Հայաստանում սկսվել է դեռեւս 2001թ.-ին, այսինքն՝ դեռեւս մինչ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումը: 2001-2003թ.թ.-ի ընթացքում տեղեկատվության ազատության վերաբերյալ 6 դատական գործ է տեղի ունեցել: Երկուսի դեպքում դատարանը բավարարել է հայցվորների պահանջները մասնակի, իսկ մնացած 4 գործերն ունեցել են բացասական ավարտ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո՝ 2003թ.-ից մինչեւ 2006թ.-ը, տարբեր հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ տեղեկատվության ազատության վերաբերյալ 11 դատական գործ է տեղի ունեցել, որոնցից 10-ը ունեցել է դրական ավարտ, մեկը բավարարվել է մասնակի: Այսպիսով, ընդհանուր առմամբ 2001-2006թ.թ.-ի ընթացքում տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական պրակտիկան ունի հետեւյալ պատկերը. Հարուցվել է 17 գործ, որոնցից 10-ն ունեցել է դրական ավարտ, 4-ը՝ բացասական, 3 գործ բավարարվել է մասնակի:

2007-2010թ.թ.-ի ընթացքում տեղեկություններ ստանալու խախտված իրավունքը վերականգնելու եւ իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու համար Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նախաձեռնել է 20 դատական գործ: 2007-2010թ.թ.-ին տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործերի ընդհանուր վիճակագրությունն ունի հետեւյալ պատկերը.

հարուցված 20 գործերից ամբողջությամբ ավարտվել է 18-ը, որոնցից բավարարվել է 8 գործ, 5 գործ բավարարվել է մասնակի, 4 գործ մերժվել է, եւս 1 գործ կարճվել՝ առանց ըստ էության քննվելու: Մասնակի բավարարված 5 գործերից 3-ի դեպքում դատարանն ինքն է ԻԱԿ-ի հայցը մասնակիորեն բավարարելու որոշում կայացրել, իսկ մնացած 2 դեպքում դատական գործերը կարճվել են, քանի որ պատասխանող կողմը գործի դատական քննության ընթացքում տրամադրել է ԻԱԿ-ի պահանջած տեղեկությունները, եւ ԻԱԿ-ը հրաժարվել է հայցից: Այսպիսով, ԻԱԿ-ի նախաձեռնած եւ ավարտված 18 գործերից տասներեքն ունեցել են դրական ավարտ, 5-ը՝ բացասական:

2007-2010թ.թ.-ին ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերը ցույց տվեցին, թե տեղեկատվություն տնօրինող որ մարմիններն են առավել հաճախ խախտել տեղեկատվության ազատության իրավունքը եւ հայտնվել դատարանում:

Այսպիսով, ըստ դատական գործերի՝ տեղեկատվության ազատության ոլորտում ամենաշատ խախտումները թույլ են տվել գյուղապետարանները: ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերից 6-ի դեպքում պատասխանող կողմ եղել են գյուղապետարանները: Հաջորդում են կուսակցությունները եւ թաղապետարանները. տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու համար ԻԱԿ-ը հայց է ներկայացրել երեք կուսակցության («Հայ ազգային կոնգրես» դաշինք, «Օրինաց երկիր» եւ Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություններին) եւ երեք թաղապետարանի (Նոր Նորքի, Դավթաշենի եւ Արաբկիրի թաղապետարաններ) դեմ:

2007-2010թ.թ.-ին տեղեկատվության ազատության իրավունքը խախտելու համար դատարանում են հայտնվել երկու մարզպետարաններ (Լոռու եւ Շիրակի մարզպետարաններ) եւ երկու պետական ոչ առևտրային կազմակերպություններ («Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ եւ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ): Նույն ժամանակահատվածում ԻԱԿ-ի հարցումն առանց պատշաճ պատասխանի թողել է մեկ քաղաքապետարան՝ Հրազդանի քաղաքապետարանը, եւ մեկ հանրային նշանակության կազմակերպություն՝ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ը, որի համար էլ հայտնվել են դատարանում<sup>12</sup>:

ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերը հնարավորություն են տալիս մի շարք եզրահանգումներ անել տեղեկատվության ազատության ոլորտում արդարադատության իրականացման պրակտիկայի շուրջ եւ վերհանել տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտող մի քանի խնդիրներ:

● **Դատարանների կախվածությունը գործադիր իշխանությունից**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած դատական գործերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարանները խուսափում են պաշտոնյաներին ենթարկել վարչական պատասխանատվության: Այս երեւոյթի հիմնական պատճառներից մեկը կարող է լինել դատարանի կախվածությունը գործադիր իշխանությունից: Այս կախվածությունն իրապես կաշկանդում է դատարաններին պաշտոնյաների դեմ անկողմնակալ եւ համարձակ վճիռներ կայացնելիս:

12. Այս վիճակագրությունը ներկայացված է ըստ ԻԱԿ նախաձեռնած 18 դատական գործերի: Երկու դատական գործ ներառված չեն, քանի որ դրանք չեն վերաբերում պաշտոնյայից տեղեկատվություն ստանալուն: Դրանք են՝ ԻԱԿ-ն ընդդեմ Վարչական դատարանի որոշման գործը եւ ԻԱԿ-ի՝ Սահմանադրական դատարան ներկայացված բողոքը:

- **Դատական ակտերի չկատարում**

Որոշ դեպքերում դատարանի վճիռն անվերապահորեն չի կատարվում սահմանված ժամկետներում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած եւ ավարտված 18 դատական գործերից 3-ի դեպքում Կենտրոնը ստիպված է եղել դիմել Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն՝ պաշտոնյային դատարանի վճիռը կատարելուն պարտավորեցնելու համար: Այդպես, Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն դիմելու անհրաժեշտություն է առաջացել ԻԱԿ-ն ընդդեմ Արաբկիրի թաղապետարանի, ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցության, ԻԱԿ-ն ընդդեմ Ելփիհի գյուղապետարանի գործերի դեպքում:

- **Դատարանի նկատմամբ վստահության պակաս**

2007-2010թ.թ. ընթացքում տեղեկատվության ազատության ոլորտում դատական գործեր նախաձեռնողը հիմնականում հասարակական կազմակերպություններն են եւ ոչ քաղաքացիները: Չնայած այն փաստին, որ բազմաթիվ մարդիկ են դիմում Ինֆորմացիայի ազատության կենտրոն իրենց տեղեկություններ ստանալու հարցում օգնելու համար, սակայն քաղաքացիները ձեռնպահ են մնում տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության խնդրանքով դիմելուց: Սա ցույց է տալիս, որ մարդկանց մոտ դատարանների հանդեպ վստահության պակաս կա: Նրանք չեն հավատում, որ դատարանը արդար եւ անկողմնակալ վճիռ կկայացնի, կպաշտպանի տեղեկություն ստանալու իրենց իրավունքը պաշտոնյայի ոտնձգությունից:

- **Իրազեկման պակաս**

Անգամ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից 7 տարի անց դեռեւս կան պաշտոնյաներ, ովքեր ան-

տեղյակ են այս օրենքից: Լինում են դեպքեր, երբ ԻԱԿ-ը ստիպված է լինում տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանելու համար օրենքով սահմանված ժամկետների կամ օրենքով սահմանված մերժման հիմքերի եւ պատշաճ հիմնավորման վերաբերյալ պարզաբանումներ տալ, տեղյակ պահել դրանց գոյության մասին՝ պահանջելով տեղեկատվություն ստանալու իր հարցումներին սահմանված ժամկետում պատշաճ պատասխան կամ պատշաճ ձեւով հիմնավորված մերժում տալ:

- **Անկատար օրենսդրական դաշտ**

Տեղեկատվության ազատության ոլորտում առկա խնդիրներից է այս ոլորտում անկատար օրենսդրական դաշտը: Խնդիրն ինչպես տեղեկատվության ազատության ոլորտը կարգավորող իրավական ակտերի պակասը եւ տեղեկատվության ազատության ոլորտում որոշ հարցերի՝ իրավական ակտերով չկարգավորված լինելն է, այնպես էլ տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտող, հակասությունների տեղիք տվող այլ իրավական ակտերում առկա դրույթներն են կամ անհրաժեշտ դրույթների բացակայությունն է:

- **Իրավական նորմերի հակասական մեկնաբանում դատարանների կողմից**

Որոշ դեպքերում տեղեկատվության ազատության ոլորտին չվերաբերող տարբեր իրավական ակտերի ոչ լիարժեք լինելու պատճառով օրենսդրական կազուս է առաջանում, որի արդյունքում տուժում է տեղեկատվության ազատության իրավունքը: Այսպես, ԻԱԿ-ը փորձեց դատական կարգով պաշտպանել տեղեկություններ ստանալու իր իրավունքը՝ տեղեկություններ տրամադրելու պահանջի մասին հայց ներկայացնելով դատարան ընդդեմ «Հայ ազգային կոնգրես» դաշինքի, որը ԻԱԿ-ի հարցումը թողել էր անպատասխան: Այս գործի ընթացքում առաջ եկավ հետեւյալ խնդիրը. Հայ Ազգային Կոնգրեսը կուսակ-

ցությունների դաշինք է, իսկ դաշինքը, համաձայն ՀՀ օրենսդրության ոչ իրավաբանական, ոչ էլ ֆիզիկական անձ է: Իսկ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ դատարանում որպես պատասխանող կարող են հանդես գալ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք: Ստացվում է, որ «Հայ Ազգային Կոնգրես» դաշինքը չի կարող դատարանում հանդես գալ որպես պատասխանող: Այս հիմքով էլ Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը որոշեց կարճել ԻԱԿ-ի հայցն ընդդեմ «Հայ ազգայի կոնգրես» դաշինքի: Բացի այն, որ օրենսդրական այս բացը խոչընդոտեց տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման, այն նաեւ առաջացրեց հակասություն ՀՀ Քաղաքացիական դատավարության եւ ՀՀ Ընտրական օրենսգրքի միջեւ, քանի որ Ընտրական օրենսգրքը նախատեսում է դաշինքին դատական կարգով պատասխանատվության ենթարկելու հնարավորություն, իսկ Քաղաքացիական դատավարության օրենսգրքն այդ հնարավորությունը բացառում է:

Նման պայմաններում կարելուհրագույն նշանակություն է ստանում դատարանի ընտրությունը, այսինքն՝ թե որ իրավական ակտին է դատարանը նախապատվություն տալիս, որ իրավական ակտով է առաջնորդվում: Հանդիպելով տարբեր՝ միեւնույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջեւ հակասության՝ դատավորը պետք է կարողանա ճիշտ կողմնորոշվել, վերհանել գերակա շահը, առաջնորդվել այն իրավական ակտով, որի կիրառումը կապահովի խախտված իրավունքի վերականգնում: Տեղեկատվության ազատության դատական պրակտիկան, սակայն, հակառակ պատկերն է ցույց տալիս. դատավորներն առավել հաճախ օգտագործում են իրավական ակտերի միջեւ հակասությունը դատական գործերը կարճելու համար՝ խուսափելով դրանց ըստ էու-

թյան լուծում տալուց:

Տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական յուրաքանչյուր գործ ինքնին արդեն ունի հսկայական կրթական նշանակություն: Անկախ վերջնական արդյունքից՝ դատական գործերը լայնորեն լուսաբանվում են զանգվածային լրատվամիջոցների կողմից: Այդպիսով, այդ գործերն արժանանում են քաղաքացիների եւ պաշտոնյաների ուշադրությանը՝ ավելացնելով տեղեկատվության ազատության իրավունքի մասին իրազեկությունը: Բացի այդ՝ դատական գործերը տեղեկատվության ազատության իրավունքի խախտումները կանխարգելող նշանակություն ունեն: Դրանք յուրատեսակ նախազուլաացում են պաշտոնյաներին այն մասին, որ տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտելու դեպքում նրանք պարտավոր են պատասխան տալ դատարանում:

Դրական ելք ունեցող դատական գործերը նաեւ ունեն նախադեպային նշանակություն: Դատավորը, հարգելով իր գործընկերներին, հաշվի է առնում նրանց կայացրած վճիռը՝ նմանատիպ գործերում կայացնելով նմանատիպ վճիռ:

Տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործերի պրակտիկան, նման գործերի առկայությունը եւ շատ դեպքերում դրական ավարտը հանգեցրին որոշակի առաջընթացի նաեւ դատական գործերի մասսայականացման առումով: Չնայած քաղաքացիները դեռեւս չեն դիմում անմիջականորեն դատարան կամ անզամ իրավաբանական ծառայություններ մատուցող կազմակերպություններին իրենց տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության համար, սակայն արդեն ավարտվել է երկու դատական գործ, որոնց դեպքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ միասին համահայցվոր է նաեւ զանգվածային լրատվամիջոցները՝ «Առավոտ» օրաթերթը: Տեղեկատ-

վության ազատության վերաբերյալ դատական գործերը տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության միջոց են դառնում նաև զանգվածային լրատվամիջոցների համար:

Մեր կարծիքով, տեղեկատվության ազատության իրավունքի պատշաճ կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ է քաղաքացիների եւ հասարակական կազմակերպությունների ակտիվ գործունեություն: Կարելի է առանձնացնել այդպիսի գործունեության մի քանի հիմնական ուղղություններ.

#### **Ա. Բողոքարկում վերադատության կարգով:**

Վերադասի պատշաճ վերահսկողությունը կարող է մեծապես նվազեցնել ենթակաների կողմից իրավախախտումների, անարդար որոշումների կայացումը: Մի շարք դեպքերում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը վարչական դատարանի որոշումը բողոքարկել է վերադատության կարգով՝ վարչական դատարանի նախագահին, եւ գործն ունեցել է դրական ավարտ, օրինակ՝ ԻԱԿ-ն ընդդեմ Ջարթոնքի գյուղապետարանի դատական գործը:

#### **Բ. Դիմում Սահմանադրական դատարան:**

Որոշ իրավական ակտերի դրույթներ հնարավորություն են տալիս պաշտոնյաներին խուսափել պատասխանատվությունից՝ խախտելով տեղեկատվության ազատության իրավունքը: Որպես կանոն, նման դեպքերում դատարանները ձեռնպահ են մնում իրավունքի մեկնաբանումներից՝ նախընտրելով դատական հայցերը մերժել: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նման խնդրի հանդիպել է իր նախաձեռնած մի շարք դատական գործերի ժամանակ: Այս պարագայում կարելու դեր է ստանձնում Սահմանադրական դատարանը: Դեռևս Սահմանադրական դատարանին է վերապահված իրավական ակտերի կամ ակտերի առանձին նորմերի սահմանադրականության հարցի որոշումը: Ուստի, Սահմանադրական դատարան դիմելու մի-

ջոցով հնարավոր է վերացնել օրենսդրական բացը, որոշ դեպքերում էլ՝ լրացնել այլ դատարանների դատավորների անհամարձակությունը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ.-ի սեպտեմբերի 9-ին դիմել էր ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152 հոդվածները հակասահմանադրական ճանաչելու պահանջով, քանի որ դրանք խոչընդոտում են տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյային ենթարկել վարչական պատասխանատվության:

Սահմանադրական դատարանը որոշեց, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152 հոդվածները Սահմանադրական դատարանը չեն հակասում: Սահմանադրական դատարանը արձանագրեց, որ խնդիրը կայանում է այս ոլորտում օրենսդրական բացի առկայության մեջ: Անհրաժեշտ է, որ ՀՀ Ազգային ժողովը նախաձեռնություն իրականացնի՝ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում բարեփոխումներ կատարելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի օրենսդրական բացը լրացնելու համար: 2010թ.-ի փետրվարի 5-ին տեղի ունեցած դատական նիստի ավարտին ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը շնորհակալություն հայտնեց ԻԱԿ-ին նման կարելու խնդրին անդրադառնալու համար:

#### **Գ. Օրենսդրական բարեփոխումներ:**

Անգամ դատավորների կողմից մեծ ցանկություն եւ աջակցություն ցուցաբերելու դեպքում տեղեկատվության ազատության իրավունքի իրականացումն անհնար կլինի առանց օրենսդրական բավարար հիմքի: Տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրական դաշտում առկա են բացթողումներ կամ թերություններ: Դրանք անհրաժեշտ է վերացնել:

## **Դ. Դատավորների ուսուցումներ:**

Տեղեկատվության ազատության իրավունքի պատշաճ պաշտպանության եւ իրականացման համար անհրաժեշտ է այս ոլորտի եւ իրավունքի վերաբերյալ գիտելիքներ եւ իրազեկման ավելացում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը կազմակերպում է ուսուցումներ եւ քննարկումներ, որոնց ժամանակ պարզաբանվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, Օրենքի տրամաբանությունը, նաեւ՝ տեղեկատվության ազատության իրավունքի նշանակությունը եւ կարելությունը: Անհրաժեշտ է ուսուցումներ կազմակերպել նաեւ դատավորների եւ դատական համակարգի աշխատողների համար:

## **Ե. Խրախուսում:**

Տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման համար կարելու նշանակություն ունի մի կողմից՝ քաղաքացիների ձգտումը՝ պաշտպանել իրենց իրավունքը, եւ մյուս կողմից՝ պաշտոնյաների ձգտումը՝ աշխատել հրապարակային եւ թափանցիկ, դատավորների ձգտումը՝ իրականացնել տեղեկատվության ազատության իրավունքի պատշաճ պաշտպանություն: Այս առումով մեծ դեր կարող են ունենալ տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ տարբեր միջոցա-

ռումները: Ամեն տարի Տեղեկատվության ազատության միջազգային օրը՝ սեպտեմբերի 28-ին, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը կազմակերպում է մրցանակաբաշխություն, որի ժամանակ մրցանակներ՝ «Ոսկե բանալի»-ներ են շնորհվում տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության առումով կարելու վճիռ կայացրած դատավորին, ամենահրապարակային եւ թափանցիկ աշխատող պաշտոնյային, տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման ոլորտում ամենակատիվ քաղաքացուն եւ այլն: Իսկ ամենափակը ճանաչված կամ տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյաներն արժանանում են «Ժանգոտ կողպեք»-ի: Բնականաբար, «Ոսկե բանալի»-ն բարձրացնում է պաշտոնյայի կամ տվյալ մարմնի նկատմամբ քաղաքացիների վստահությունը, իսկ «Ժանգոտ կողպեք»-ը մեծ հարված է պաշտոնյայի քաղաքական հեղինակությանը:

# ՄԱՍ Բ

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՎԵՐՆԱԳԻՐԸ

**Օ**րենքի վերնագիրը հակիրճ տեղեկություն է պարունակում դրա կարգավորման առարկայի՝ տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունների վերաբերյալ, սակայն որոշակի առումով չի համապատասխանում Օրենքի բովանդակությանը<sup>13</sup>: Դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ «տեղեկատվություն» բառը ՀՀ օրենսդրությունում, ինչպես նաև հաղորդակցության եւ այլ բնագավառներում սովորաբար օգտագործվում է անգլերեն «information» (լատ. informatio–պարզաբանում, լուսաբանում, շարադրանք) բառին համարժեք<sup>14</sup>, որը թարգմանաբար նշա-

նակում է ինֆորմացիա, տեղեկություն, տեղեկացում, հաղորդում: Իր հերթին «տեղեկատվություն» նշանակում է որեւէ բանի մասին տեղեկություն տալ, ստացած՝ հավաքած տեղեկությունները հաղորդել, իսկ «տեղեկություն»՝ նշանակում է լուր, ծանուցում, հաղորդում, գիտելիք, ծանոթություն, տվյալ, փաստ:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի<sup>15</sup>, ՄԱԿ-ի 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 19-րդ հոդվածի<sup>16</sup>, 1950թ. Մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի<sup>17</sup>, ՄԱԿ-ի 1966թ. Քաղաքացիական եւ քաղաքական

13. Համաձայն «իրավական ակտերի մասին» ՀՀ 2002թ.-ի ապրիլի 3-ի ՀՕ-320 օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝ իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի իրավական ակտի բովանդակությանը եւ հակիրճ տեղեկություն պարունակի դրա կարգավորման առարկայի վերաբերյալ:

14. Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 33.2-րդ հոդվածում տեղեկատվություն բառն օգտագործված է, որպես տեղեկություն բառի համարժեք՝ պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար: «Հայաստանի Հարապետության պետական տեղեկատվական միասնական համակարգի ստեղծման եւ ներդրման կազմակերպման միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 1999թ.-ի մարտի 16-ի N 152 որոշման «Տեղեկատվություն» է համարվում այն տեղեկությունները կամ հաղորդումները, որոնք ներկայացված են հաղորդման, պահպանման կամ մշակման համար պիտանի ձևով, իսկ «փաստաթղթավորված տեղեկատվություն (փաստաթուղթ)» է համարվում նյութական կրողի վրա գրանցված տեղեկատվություն այնպիսի պարտադիր տվյալներով, որոնք հնարավորություն են տալիս այն նույնականացնելու:

15. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

16. Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության եւ դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք, այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը եւ ցանկացած միջոցներով ու պետական սահմաններից անկախ իրազեկվում եւ գաղափարներ որոնելու, ստանալու եւ տարածելու ազատությունը:

17. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր կարծիքն ազատորեն արտահայտելու ազատություն: Այդ իրավունքը ներառում է իր կարծիքը պնդելու, տեղեկություն եւ գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը՝ անկախ պետական մարմինների միջամտությունից եւ պետական սահմաններից:

---

իրավունքներ մասին միջազգային պակտի 19-րդ հոդվածի<sup>19</sup> համաձայն՝ տեղեկատվության ազատությունը խոսքի ազատության բաղկացուցիչ մասն է, որի տարրերն են ինչպես տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, այնպես էլ՝ տարածելու ազատությունը:

Չամադրելով Օրենքի վերնագիրը, կարգավորման առարկան եւ «տեղեկատվություն ազատություն» հասկացության սահմանումը<sup>19</sup> կարող ենք եզրակացնել, որ տեղեկություններ տարածելու ազատության հետ կապված հարաբերություններն Օրենք-

քով կարգավորված չեն եւ Օրենքի բովանդակությունում ներառված չեն:

Բացի այդ, համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի՝ իրավական ակտի կամ իրավական ակտի բաժնի, գլխի կամ հոդվածի վերնագիրը չի կարող օգտագործվել իրավական ակտի կամ համապատասխանաբար նրա բաժնի, գլխի կամ հոդվածի մեկնաբանման համար: Ուստի այս առումով Օրենքի վերնագիրը չի հակասում օրենսդրական տեխնիկայի կանոններին:

---

18. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն անարգել պնդելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք: Այդ իրավունքը ներառում է ցանկացած ձևի տեղեկություն եւ գաղափար փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը բանավոր, գրավոր կամ տպագիր միջոցներով կամ գեղարվեստական արտահայտման ձևերով կամ իր ընտրությամբ այլ միջոցներով՝ անկախ պետական սահմաններից:

19. Տես՝ նաեւ Օրենքի 3-րդ հոդվածի մեկնաբանությունը:

## ՀՈՂԱԾ 1

### ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՈՒՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները:
2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա:

1. Օրենքի կարգավորման առարկան տեղեկատվության ազատության, այսինքն՝ տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացման ընթացքում ծագող իրավահարաբերություններն են:

Օրենքով կարգավորված են հետեւյալ հիմնական հարցերը՝

- տեղեկատվություն տնօրինողից տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները.
- տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը (իրավունքները եւ պարտականությունները):

2. ՀՀ օրենքների գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի<sup>20</sup>, ինչպես նաև ՀՀ՝ ի դեմս դրա մարմինների, ՀՀ քաղաքացիների, իրավաբանական անձանց, համայնքների՝ ի դեմս դրանց մարմինների, ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց, միջազգային կազմակերպություն-

ների, օտարերկրյա իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետությունում գործող օտարերկրյա իրավաբանական անձանց եւ միջազգային կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական, հյուպատոսական եւ այլ ներկայացուցչությունների վրա, որոնց շրջանակը օրենքով կարող է սահմանափակվել<sup>21</sup>:

Ըստ այդմ, մեկնաբանվող մասով սահմանված է, որ Օրենքի գործողությունը տարածվում է միայն որոշակի անձանց վրա, որոնք են՝

- պետական մարմինները՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմինները.
- տեղական ինքնակառավարման մարմինները (այսինքն՝ համայնքների ավագանիները եւ ղեկավարները).
- պետական հիմնարկները (այսինքն՝ պետական մարմինների հիմնարկները)<sup>22</sup>.
- բյուջեներից (այսինքն՝ պետական կամ

20. Տես՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մաս:

21. Տես՝ նույնի 81-րդ հոդվածի 1-ին մաս:

22. ՀՀ 1998թ.-ի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն՝ հիմնարկ է համարվում կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առեստրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար իրավաբանական անձի ստեղծած կազմակերպությունը: Հիմնարկն իրավաբանական անձ չէ եւ գործում է իրավաբանական անձի հաստատած կանոնադրության հիման վրա:

համայնքային բյուջեներից) ֆինանսավորվող կազմակերպությունները:

Քանի որ, մեկնաբանվող մասում եւ Օրենքի մյուս հոդվածներում պետական կամ համայնքային բյուջեից ֆինանսավորման որեւէ չափ նշված չէ, ուստի բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն կարելի է համարել պետական կամ համայնքային բյուջեներից նույնիսկ մեկ լուծարյի ֆինանսավորում ստացած կազմակերպություններին, ներառյալ՝

- համայնքային հիմնարկները (Օրենքում օգտագործված պետական հիմնարկ սահմանումն իր մեջ չի ներառում համայնքային հիմնարկները, որոնք նույնպես բյուջետային հիմնարկ են<sup>23</sup>),
- պետական կապիտալ ներդրումների ծրագրերով, նպատակային ծրագրերով, գործադիր իշխանության կամ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներով ֆինանսավորվող կազմակերպությունները, այդ թվում՝ այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական կապիտալում պետական կամ համայնքային բյուջեից ներդրում է կատարվել,
- այն կազմակերպությունները, որոնցից պետական գնումների մասին օրենքով սահմանված կարգով պետական կամ համայնքային բյուջեների միջոցների հաշվին գնվել են ապրանքներ կամ, որոնք աշխատանքներ են կատարել

կամ ծառայություններ են մատուցել:

- հանրային նշանակության կազմակերպությունները,
- վերը թվարկված մարմինների եւ կազմակերպությունների պաշտոնատար, այսինքն՝ այդ մարմիններում կամ կազմակերպություններում պաշտոն զբաղեցնող անձինք:

Այս առումով պետք է նշենք, որ մեկնաբանվող մասում «ինչպես նաեւ» բառերի<sup>24</sup> առկայությունը բացթողում է, որը նպաստում է այդ մասը մեկնաբանելիս<sup>25</sup> համարել, որ օրենքի գործողությունը տարածվում է միայն հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց վրա: Այնինչ, Օրենքի պահանջներից, էությունից եւ տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներից բխում է<sup>26</sup>, որ Օրենքի գործողությունը պետք է տարածվի նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների պաշտոնատար անձանց վրա: Նույն բացթողումն առկա է Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում:

Օրենքում տեղ գտած նշված եւ այլ բացթողումները վերացնելու նպատակով 2009թ. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի, ՀՀ Արդարադատության մախարարության հետ համատեղ մշակվել եւ պատգամավոր Վ. Դալլաք-

23. Տես՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ 1997թ. հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի 5-րդ հոդված:

24. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի վերջին պարբերության համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաեւ» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաեւ» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ:

25. Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

26. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջեւ հակասությունների դեպքում գործում են այն մասերի դրույթները, որոնք բխում են տվյալ իրավական ակտի էությունից կամ տվյալ իրավաբանագիտությունները կարգավորող իրավունքի սկզբունքներից:

յանի, ՀՀ կառավարության համատեղ նախաձեռնությամբ Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրվել Պ-742-04.12.2009թ. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Վար-

չական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ)<sup>27</sup>:

Մեկնաբանվող մասի՝ վերը նշված բացթողումները վերացված են Նախագծերի փաթեթում ներառված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով եւ 2-րդ հոդվածի 1-ին մասով<sup>28</sup>:

---

27. Տես՝ Հավելված 1, էջ 94:

28. Սույն մեկնաբանությունում ներկայացված են նշված նախագծերի փաթեթով կատարվող միայն էական փոփոխությունները:

---

## ՀՈՂԱԾ 2

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից:
2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

---

**1.** Մեկնաբանվող մասում սահմանված են տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կազմը եւ ստորադասությունը:

Օրենսդրությունը (ՀՀ օրենսդրություն, օրենսդրական ակտեր) Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի հիերարխիայում ամենաբարձր դիրքը զբաղեցնող մասն է, որը ներառում է՝ ՀՀ Սահմանադրությունը եւ դրանում կատարված փոփոխությունները, օրենքները, Ազգային ժողովի որոշումները, Հանրապետության Նախագահի հրամանագրերը եւ կարգադրությունները, Ազգային ժողովի նախագահի որոշումները, կառավարության որոշումները եւ վարչապետի որոշումները<sup>29</sup>:

Օրենքի իմաստով՝ տեղեկատվության ազատության բնագավառի հարաբերությունները կարգավորող հիմնական օրենսդրական ակտերը ՀՀ Սահմանադրությունը, Օրենքը եւ ՀՀ այլ օրենքներն են: Օրենսդրական մյուս ակտերը չպետք է հակասեն օրենքներին, պետք է ընդունվեն օրենքներով նախատեսված դեպքերում եւ չեն կարող պարունակել իրավունքների նոր սահմանափակումներ կամ պարտականություններ<sup>30</sup>:

Օրենքների եւ մյուս օրենսդրական ակտերի հակասության դեպքում գործում են օրենքները:

**2.** Մեկնաբանվող մասը Սահմանադրության 6-րդ հոդվածում ամրագրված՝ վավերացված միջազգային պայմանագրերի եւ ներպետական իրավական ակտերի հակասության դեպքում՝ վավերացված միջազգայի պայմանագրերի կիրառման նախապատվության վերաբերյալ նորմի ուղղակի վերարտադրումն է, որն առկա է ՀՀ գրեթե բոլոր օրենքներում:

Անհրաժեշտ է նշել, որ ներպետական իրավունքի նկատմամբ վավերացված միջազգային պայմանագրերի առաջնայնության վերաբերյալ դրույթը չպետք է մեխանիկորեն կիրառվի բոլոր դեպքերում: Նման նորմերը կիրառելիս, հատկապես մարդու իրավունքների ոլորտում, ՀՀ պետական մարմինները պետք է հաշվի առնեն առավելագույն պաշտպանության վերաբերյալ դրույթի հայեցակարգը, եւ այն պարագայում, երբ ներպետական իրավունքը նախատեսում է պաշտպանության առավել բարենպաստ ռեժիմ, քան միջազգային պայմանագրով նախատեսվածը, ապա առավելություն պետք է տրվի հենց ներպետական իրավունքին<sup>31</sup>:

---

29. Տես՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի:

30. Տես՝ նույնի 9-րդ հոդվածի 4.1-րդ մաս:

31. Տես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի.-եր.: «Իրավունք», 2010, 107 էջ:

### ՀՈՂՎԱԾ 3

#### ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

**տեղեկատվության ազատություն**՝ տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում.

**տեղեկություն**՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւոյթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ).

**տեղեկատվություն տնօրինող**՝ տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք.

**հանրային նշանակության կազմակերպություն**՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաեւ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ.

**հարցում**՝ տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում.

**հրապարակում**՝ տեղեկությունը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այսուհետ՝ Ինտերնետ), ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը եւ մատչելի դարձնելը:

Մեկնաբանվող հոդվածում ամրագրված են Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների օրենսդրական պարզաբանումները, որոնք թույլ են տալիս ոչ միայն ընդհանուր պատկերացում կազմել Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների վերաբերյալ, այլեւ՝ միանշանակ ընկալել Օրենքում կիրառվող բազմիմաստ իրավական նորմերը եւ բացառել երկակի մեկնաբանությունները<sup>32</sup>:

«Տեղեկատվության ազատություն» հասկացությունից պարզ է դառնում, որ այն ներառում է միայն տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքը, թեւ ինչպես արդեն նշել ենք՝ տեղեկատվության ազատությունն իրականում ընդգրկում է նաեւ տեղեկություններ տարածելու կամ հաղորդելու ազատությունը<sup>33</sup>: Այդպիսով տեղեկատվության ազատության հասկացության սահմանմամբ առաջին հերթին հստակեց-

32. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտում պետք է կիրառվեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ: Եթե նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ իրավական ակտով պետք է տրվեն դրանց սահմանումները:

33. Տես՝ նաեւ Օրենքի վերնագրի մեկնաբանությունը:

վում է, որ Օրենքով կարգավորվող հարաբերությունների շրջանակում՝

- ընդգրկվում են միայն տեղեկություններն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ ստանալու գործընթացում ծագող հարաբերությունները.
- չեն ընդգրկվում տեղեկատվության միջոցներով կամ այլ կերպ տեղեկություններ տարածելու ընթացքում առաջացող հարաբերությունները:

Կարելոր է ուշադրության դարձնել նաեւ այն հանգամանքի վրա, որ Օրենքի իմաստով՝ տեղեկատվության ազատությունը վերաբերում է միայն ՀՀ օրենսդրությամբ<sup>34</sup> սահմանված կարգով տեղեկություններ փնտրելու եւ ստանալու իրավունքի իրականացմանը:

**«Տեղեկություն»** հասկացությամբ բացահայտված է այն տեղեկությունների շրջանակը, որոնց փնտրելու եւ (կամ) ստանալու իրավունքի իրականացման կարգը սահմանված է Օրենքով: Այդպիսի տեղեկություններ են՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւոյթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալները:

Այստեղ նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել, որ «տեղեկություն» եզրույթը վերաբերում է միայն այն տեղեկություններին, որոնք ստացվել կամ ձեւավորվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այդպիսի տեղեկություններ են, օրինակ՝ «Արխիվային գործի մասին» ՀՀ 2004թ.-ի հունիսի 8-ին ՀՕ-88-Ն օրենքով սահմանված կարգով պահպանվող արխիվային փաստաթղթերը, որոնցից են՝

- պատմամշակութային նշանակությամբ փաստաթղթերը,
- իրավական ակտերը,
- գործավարական փաստաթղթերը,

- գիտահետազոտական, փորձարարականատրուկտորական եւ տեխնոլոգիական աշխատանքների արդյունքներ պարունակող փաստաթղթերը,
- քաղաքաշինական փաստաթղթերը,
- կինո, ֆոտո, ֆոնոփաստաթղթերը,
- էլեկտրոնային եւ հեռաչափական փաստաթղթերը,
- ձեռագրերը, նկարները, գծագրերը, նամակագրությունը, օրագրությունը, հուշագրությունը,
- արխիվային փաստաթղթերի բնօրինակի իրավունքով պատճենները:

Հասկացությամբ նաեւ սպառիչ ձեւով թվարկված են այն նյութական կրիչները (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ), որոնց վրա ամրագրվում է տեղեկությունը:

**«Տեղեկատվություն տնօրինող»** հասկացությամբ հստակեցվել է այն անձանց շրջանակը, որոնց վրա տարածվում է Օրենքի համապատասխան դրույթների գործողությունը: Դրանք են՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք<sup>35</sup>:

Նշված անձինք համարվում են տեղեկատվություն տնօրինող, եթե ոչ միայն ունեն փնտրվող տեղեկությունը, այլեւ՝ ունեն տեղեկությունը տնօրինելու իրավունք<sup>36</sup>, այսինքն՝ փնտրվող տեղեկության ճակատագիրը որոշելու (տվյալ դեպքում՝ տեղեկությունը տրամադրելու, չտրամադրելու կամ հրապարակելու) իրավաբանորեն ապահովված հնարավորություն:

34. Տես՝ նաեւ Օրենքի 2-րդ հոդված 1-ին մասի մեկնաբանությունը:

35. Տես՝ նաեւ Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությունը:

36. Տես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդված:

**«Հանրային նշանակության կազմակերպություն»** հասկացությամբ սահմանված են այն «ոչ պետական» կազմակերպությունները, որոնք Օրենքի իմաստով համարվում են տեղեկատվություն տնօրինողներ եւ, որոնց վրա տարածվում է Օրենքով՝ տեղեկությունների հրապարակման, տեղեկություն փնտրելու եւ ստանալու համար սահմանված կարգը: Այդ կազմակերպություններն են՝

**1) ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները.**

«Ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող» հասկացության բովանդակությունը բացահայտված է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ 2000թ. նոյեմբերի 6-ի ՀՕ-112 օրենքի 6-րդ հոդվածում, ըստ որի՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհ դիրք ունեցող, եթե որպես իրացնող (ձեռքբերող) չունի մրցակից: Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե որպես իրացնող (ձեռքբերող) իրացման (ձեռքբերման) ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը: Ապրանքային շուկայում իրացման (ձեռքբերման) առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես իրացնող (ձեռքբերող) իրացման (ձեռքբերման) ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը: Ապրանքային շուկայում իրացման (ձեռքբերման) առավել մեծ ծավալներ ու-

նեցող երեք տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես իրացնող (ձեռքբերող) իրացման (ձեռքբերման) ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը: Տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի որոշման, ինչպես նաեւ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանի (ռեեստրի) վարման կարգը սահմանում է տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմինը, որը ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն է: Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում)<sup>37</sup> գրանցվում, ինչպես նաեւ այդ դիրքը կորցնելու դեպքում՝ գրանցումից հանվում է հանձնաժողովի որոշմամբ:

**2) առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները.**

Թվարկված բնագավառների ընտրությունը պատահական չէ, քանի որ դրանք բուլդոն էլ առնչվում են հասարակության լայն շերտերի կենսական շահերին՝ տնտեսական, սոցիալական եւ մշակութային պահանջմունքներին<sup>38</sup>: Կարելի է ասել նաեւ, որ նշված բնագավառների ընտրությունը հիմնականում պայմանավորված է օրենս-

37. 2010թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ ռեեստրը տես՝ [http://www.competition.am/uploads/resources/Reestr\\_2010\\_01\\_08\\_arm.pdf](http://www.competition.am/uploads/resources/Reestr_2010_01_08_arm.pdf):

38. ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը պարտավոր է տնտեսության, սոցիալական եւ մշակութային ոլորտներում իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել մասնավորապես՝ ընտանիքի, մայրության եւ մանկության պաշտպանության, բնակչության զբաղվածությանը եւ աշխատանքի պայմանների բարելավման, բնակչության առողջության պահպանման ծրագրեր, արդյունավետ եւ մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծման, հաշմանդամության կանխարգելման եւ բուժման ծրագրերի իրականացման, ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացման, անվճար բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթության զարգացման, գիտության եւ մշակույթի զարգացմանը, բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականության խնդիրների իրականացման համար:

դիր մարմնի կամքով, որը հասարակական հարաբերությունների զարգացման ներկա շրջանում առավել նպատակահարմար է համարել հենց այդ շրջանակում տեղեկատվության մատչելիության կանոնակարգումը:

Հաշվի առնելով հասարակական կյանքում զանվածային լրատվության միջոցների դերը եւ նշանակությունը՝ Նախագծերի փաթեթում ներառված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվում է հանրային նշանակության կազմակերպությունների ցանկում ներառել նաեւ զանգվածային լրատվության ոլորտում հանրությանը ծառայություններ մատուցող կազմակերպություններին:

**«Հարցում»** հասկացությամբ հստակեցված է այն գրավոր կամ բանավոր դիմումի ձեւը (դիմումի անվանումը), որն ուղղվում է տեղեկատվություն տնօրինողին տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով եւ, որին տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է ընթացք տալ եւ պատասխանել Օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարցում հասկացության սահմանումը, ըստ էության, չի վերաբերում տեղեկատվություն տնօրինողին ուղղված էլեկտրոնային դիմումներին եւ ընդհանրապես՝ Օրենքում թերի է կարգավորված էլեկտրոնային հարցումների քննարկման ընթացակարգը: Այդ բացը լրացնելու նպատակով, Նախագծերի փաթեթում ներառված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է «հարցում» համարել նաեւ տեղեկատվություն տնօրինողին ուղղված էլեկտրոնային դիմումները (նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մաս) եւ

սահմանել էլեկտրոնային հարցումների քննարկման ընթացակարգ<sup>39</sup>:

**«Հրապարակում»** հասկացություն սահմանելը պայմանավորված է Օրենքի, մասնավորապես՝ 7-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 5-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակման ձեւը հստակեցնելու անհրաժեշտությամբ:

Հրապարակման միջոցներն են՝

1) մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցները:

«Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ 2003թ.-ի դեկտեմբերի 13-ի ՀՕ-14-Ն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ զանգվածային լրատվության միջոց է համարվում լրատվություն (այսինքն՝ անսահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկատվության տարածում, որի հիմնական նպատակն է ապահովել մարդու սահմանադրական իրավունքը՝ ազատորեն, անկախ պետական սահմաններից՝ փնտրելու, ստանալու եւ տարածելու տեղեկություններ ու զաղափարներ) իրականացնելու միջոցը, որը բաժանորդագրությամբ կամ առանց դրա, վճարովի կամ անվճար հիմունքներով տարածվում է՝

- մշտական անվանում, հերթական համար եւ անսաթիվ ունեցող պարբերական թողարկումներով՝ նյութական կրիչի վրա, որոնց միեւնույն բովանդակությամբ օրինակների քանակը պակաս չէ հարյուրից,
- հեռուստառադիոհաղորդմամբ,
- հանրային հեռահաղորդակցության ցանցով (ցանցային լրատվության միջոց)՝ որպես որոշակի հասցե ունեցող, անսահմանափակ թվով անձանց համար հասանելի եւ լրատվություն ներառող տեղեկատվական պաշար՝ անկախ թարմացման պարբերականությունից,

39. Տես՝ նաեւ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի մեկնաբանությունը:

պահման ժամանակի տեւողութիւնից եւ այլ չափանիշներից:

«Մամուլ» տերմինն օգտագործված է «Մամուլի եւ զանգվածային լրատվության միջոցների մասին» ՀՀ 1991թ.-ի հոկտեմբերի 8-ի N-420 օրենքում, որը «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվել (Օրենքի ընդունման պահին, այդ օրենքը դեռեւս գործում էր):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս մամուլը որպէս առանձին զանգվածային լրատվության միջոց չի դիտվում, այլ համարվում է վերջինիս ձեւերից մեկը, ինչպէս նաեւ այն, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերը հրապարակվում են պաշտոնական տեղեկագրերում<sup>40</sup>՝ Նախագծերի փաթեթում ներառված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասով առաջարկվում է «հրապարակում» հասկացությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝ «հրապարակում տեղեկությունը պաշտոնական տեղեկագրերով, զանգվածային լրատվության միջոցներով, ինտերնետով կամ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը եւ պատշաճ ձեւով մատչելի դարձնելը»:

2) համաշխարհային համակարգչային ցանցը (ինտերնետը).

Ինտերնետով տեղեկության հրապարակման հիմնական ձեւը տեղեկատվություն տնօրինողի կամ այլ իրավասու անձի պաշտոնական ինտերնետային կայքում կամ այլ՝ համընդհանուր օգտագործման համար նախատեսված ինտերնետային կայքում տեղադրելն է:

Համընդհանուր օգտագործման համար նախատեսված այլ ինտերնետային կայքերից կարելի է նշել, օրինակ՝ օրենսդրական բազայի տեղեկատվական որոնողական «Արլիս» համակարգը ([www.arlis.am](http://www.arlis.am), [www.laws.am](http://www.laws.am), [www.legislation.am](http://www.legislation.am) հասցեներով), որը ներկայումս արդյունավետորեն գործում է: ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքը ([www.azdarar.am](http://www.azdarar.am) հասցեով), որտեղ համաձայն «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» ՀՀ 2007թ.-ի ապրիլի 9-ի ՀՕ-172-Ն օրենքի 2-րդ հոդվածի պետք է տեղադրվեն օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով նախատեսվում հրապարակային ծանուցումն վերաբերյալ տեղեկատվություն պարունակող հայտարարությունները: Կայքը դեռեւս չի գործում:

3) օրենսդրությամբ սահմանված այլ միջոցները,

որոնցով հնարավոր է հանրությանը հայտնել տեղեկության մասին կամ տեղեկությունը մատչելի դարձնել հանրության համար: Որպէս այդպիսի միջոց կարելի է նշել, օրինակ՝ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված դեպքը, երբ տեղեկությունը փակցվում է տեղեկատվություն տնօրինողի գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

Հոդվածում ամրագրված են տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները, որոնք հանդիսանալով իրավական ղեկավար հիմնադրույթներ, կենտրոնական հասկացություններ, ելակետեր՝ որոշում են Օրենքի կառուցվածքը, ինչպէս նաեւ տեղեկատվության ազատության բնագավառի հարաբերությունների կազմակերպարարական կարգավորման առավել բնորոշ գծերը եւ որակական առանձնահատկությունները:

40. Տես՝ նաեւ Օրենքի 7-րդ հոդված 1-ին մասի մեկնաբանությունը:

## ՀՈՂԱԾ 4

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՁԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՐՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն են՝

- 1) տեղեկությունները գրանցելու, դասակարգելու եւ պահպանելու միասնական կարգի սահմանումը.
- 2) տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը.
- 3) տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը.
- 4) հրապարակայնությունը:

Տեղեկատվության ազատության ապահովման նպատակների եւ խնդիրների իրականացման գործում յուրաքանչյուր սկզբունք ունի իր նշանակությունը, սակայն բոլոր սկզբունքները փոխկապակցված են եւ իրենց էությամբ ու նշանակությամբ գործառու են միասնական համակարգում:

Սկզբունքների կարեւորությունը կայանում է նաեւ նրանում, որ Օրենքի տարբեր մասերի միջեւ հակասությունների դեպքում գործում են այն մասերը, որոնք բխում են Օրենքի էությունից եւ սկզբունքներից<sup>41</sup>:

**Տեղեկությունները գրանցելու, դասակարգելու եւ պահպանելու միասնական կարգի սահմանման սկզբունքն** առաջին հերթին ենթադրում է Օրենքի կարգավորման շրջանակում ընդգրկված բոլոր մարմիններում եւ կազմակերպություններում (տեղեկատվություն տնօրինողների մոտ) տեղեկությունների մշակման (գրանցման, դասակարգման եւ պահպանման) միասնական՝ ոչ հակասական կարգերի առկայություն: Այս սկզբունքով խնդիր է դրվում տեղեկատվության ազատության բնագավառի հարաբերությունները կարգավորող բոլոր իրավական ակտերը բխեցնել եւ համապատասխանեցնել Օրենքին՝ հնարավորինս պարզեցնելով տեղեկությունը փնտրելու եւ ստանալու գործընթացը:

**Տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանության սկզբունքն** ամրագրում է պետության կողմից տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության համակարգի ստեղծման անհրաժեշտությունը, որի նպատակն է Օրենքով եւ այլ իրավական ակտերով նախատեսված կարգերով ապահովել տեղեկատվության ազատության իրականացումը, ինչպես նաեւ այդ կարգերի խախտման համար պատասխանատվության կիրառումը:

**Տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովման սկզբունքով** հանրության բոլոր շերտերի համար երաշխավորվում է տեղեկությունների տրամադրման ողջ գործընթացի հասանելիությունը: Տեղեկություն փնտրողին պետք է մատչելի լինեն մասնավորապես, ինչպես տեղեկությունների անվանացանկերը, այնպես էլ՝ տեղեկությունների գրանցման, դասակարգման, պահպանման եւ տրամադրման համար սահմանված կարգերը: Տեղեկություն փնտրողին պետք է մատչելի լինեն նաեւ տեղեկությանը ստանալու համար պահանջվող վճարների չափերը:

**Հրապարակայնության սկզբունքը** պետական կարգավորման բազմաթիվ ոլորտները թափանցող կարեւորագույն սկզբունքներից է: Օրենքի իմաստով այն կոչված է ապահովելու՝

41. Տես՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մաս:

- հանրության համար կարելու է նշանակություն ունեցող տեղեկությունների պարտադիր հրապարակումը.
- տեղեկությունը տրամադրելու կարգերի հրապարակումը.
- հրապարակման գործընթացում ինտերնետի դերի բարձրացումը, որը ներկայումս դարձել է տեղեկություններ ստանալու կարելու համար միջոց է հասանելի է հասարակության լայն շերտերի համար:

Նախագծերի փաթեթում ներառված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է տեղեկատվության ազատության հիմնական սկզբունքները լրացնել հետևյալ սկզբունքներով՝

- 1) **օրինականությունը**, որը եւս պետական կարգավորման բոլոր ոլորտները թափանցող կարելու համար սկզբունք է: Օրինականությունն առաջին հերթին ենթադրում է ոչ հակասական օրենսդրու-

թյան առկայությունը եւ իրավունքի նորմերի անշեղ կատարումը բոլորի կողմից.

- 2) **հավաստիությունը**, որը լիարժեքության հետ մեկտեղ նաեւ տեղեկության բնորոշիչ, կարելու համար հատկանիշն է, որը չպահպանելն առաջացնում է իրավական հետեւանքներ, ընդհուպ՝ Օրենքով նախատեսված պատասխանատվություն:

- 3) **խտրականության բացառումը**: ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին համապատասխան՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջեւ: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

---

## ՀՈՂԿԱԾ 5

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ, ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ

Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Մեկնաբանվող հոդվածում նախատեսված է այն նորմատիվ իրավական ակտը, տվյալ դեպքում՝ ՀՀ կառավարության որոշումը, որով պետք է սահմանվի տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման եւ պահպանման կարգը:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ Օրենքի ոչ լիարժեք կիրառման պատճառներից մեկը ՀՀ կառավարության նշված որոշման բացակայությունն է: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա

կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ նորմի մասով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից: Հետեւաբար, կարող ենք արձանագրել, որ մեկնաբանվող հոդվածը ներկայումս չի գործում եւ կարող է գործել միայն ՀՀ կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

Հաշվի առնելով վերագրյալը, Նախագծերի փաթեթում ներառված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվում է մեկնաբանվող հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

## ՀՈՂԱԾ 6

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՈՒՄԸ

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:
2. Օտարերկրյա անձինք սույն օրենքով նախատեսված իրավունքներից եւ ազատություններից կարող են օգտվել միայն օրենքով եւ (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում:
3. Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

1. Մեկնաբանվող մասում սահմանված են տեղեկատվության ազատության իրականացման հիմնական ձեւերը, որոնք են՝

- 1) տեղեկատվություն տնօրինողի մոտ ծանոթանալ փնտրվող տեղեկությանը.
- 2) տեղեկությունը ստանալու համար օրենքով սահմանված կարգով՝ գրավոր կամ բանավոր հարցմամբ դիմել տեղեկատվություն տնօրինողին.
- 3) տեղեկատվություն տնօրինողից ստանալ տեղեկություն:

Թվարկված ձեւերով տեղեկատվության ազատության իրականացումից կարող է օգտվել յուրաքանչյուր ոք, բացառությամբ մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի:

2. Մեկնաբանվող մասով օտարերկրյա անձանց (օտարերկրյա պետությունների, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների) համար սահմանում է տեղեկատվության ազատության իրականացման հատուկ ռեժիմ, այն է՝ նշված անձինք Օրենքով նախատեսված իրավունքներից եւ ազատություններից կարող են օգտվել միայն օրենքով եւ (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խոսքի ազատության իրավունք ունի **յուրաքանչյուր ոք**, այ-

սինքն՝ ինչպես՝ ՀՀ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, այնպես էլ՝ օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, միջազգային կազմակերպությունները, օտարերկրյա իրավաբանական անձինք եւ միջազգային կազմակերպությունները: Ուստի, կարծում ենք, որ մեկնաբանվող մասը սահմանադրականության առումով խնդրահարույց է եւ ենթակա է վերացման: Սակայն այն չվերացվելու դեպքում էլ միեւնույն է՝ գործնականում չպետք է կիրառվի, քանի որ համաձայն ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի առաջին մասի՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Օրենքում տեղ գտած վերագրյալ բացթողումը վերացնելու, ինչպես նաեւ տեղեկատվություն տնօրինողից՝ օրինական միջոցներով ստացված տեղեկության օգտագործման համար իրավական հիմքեր ստեղծելու նպատակով՝ Նախագծերի փաթեթում ներառված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվում է մեկնաբանվող մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ (այդպիսով՝ մեկնաբանվող մասը միաժամանակ ուժը կորցրած է ճանաչվում)՝

«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի պաշտոնապես իրեն տրամադրված տեղեկությունն օգտագործելու, փոխանցելու եւ տարածելու ցանկացած օրինական նպատակով եւ միջոցով»:

**3.** ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված՝ տեղեկատվության ազատության իրավունքը կարող է սահմանափակվել՝ միայն ՀՀ Սահմանադրության 43-րդ եւ 44-րդ հոդվածներով նախատեսված հետեւյալ դեպքերում՝

- 1) եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար (ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդված).
- 2) ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում (ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդված):

Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ առաջին դեպքում տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով, իսկ երկրորդ դեպքում՝ միայն օրենքով սահմանված կարգով՝ ժամանակավորապես:

Առաջին դեպքի օրինակներից են օրենքով պահպանվող գաղտնիքները<sup>42</sup>, ինչպես նաեւ այն դեպքերը, երբ ՀՀ համապատասխան օրենքով արգելվում է տվյալ տեղեկությունը տրամադրել այլ (երրորդ) անձի,

ներառյալ Սահմանադրության 23-րդ հոդվածով նախատեսված դեպքը, երբ առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով:

Հարկ է հաշվի առնել նաեւ, որ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ եւ 14-րդ կետերի համաձայն՝ **ռազմական եւ արտակարգ դրությունների իրավական ռեժիմները սահմանվում են օրենքով:**

**Ռազմական դրության** իրավական ռեժիմը սահմանված է «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ 2006թ. դեկտեմբերի 5-ի ՀՕ-258-Ն օրենքով, ըստ որի՝ ՀՀ եւ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, կազմակերպությունների իրավունքների եւ ազատության ժամանակավոր սահմանափակումների, կիրառվող միջոցառումների, ինչպես նաեւ նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների ցանկը սահմանվում է ռազմական դրություն հայտարարելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրով<sup>43</sup>: Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում իրականացվող միջոցառումներից եւ ժամանակավոր սահմանափակումներից է, օրինակ՝ օրենքով սահմանված կարգով խոսքի ազատության սահմանափակումը, ինչպես նաեւ տպագրող սարքերի, ռադիոհեռարձակող, ձայնաուժեղացնող տեխնիկա-

42. Տես՝ նաեւ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի մեկնաբանությունը:

43. Տես՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետ:

---

կան միջոցների, բազմացնող տեխնիկայի ժամանակավոր առգրավումը կամ կալանքը, լրագրողների հավատարմագրման հատուկ կարգի, կապի միջոցներից օգտվելու հատուկ կանոնների սահմանումը<sup>44</sup>:

**Արտակարգ դրության** իրավական ռեժիմը դեռևս օրենքով սահմանված չէ: Ներկայումս Ազգային ժողովի օրակարգ է ընդգրկված «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի նախագիծը (Կ-057-31.07.2007,21.10.2009), որտեղ համապատասխան խմբագրությամբ շարադրված են «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթները:

---

44. Տես՝ նույնի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետ:

## ՀՈՂԱԾ 7

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՊՈՐՏԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

2. Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը:

3. Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր զործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները.

- 1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները.
- 2) բյուջեն.
- 3) գրավոր հարցումների ձևերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները.
- 4) հաստիքացուցակները, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները.
- 5) աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը.
- 6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը.
- 7) հասարակական միջոցառումների ծրագրերը.
- 8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը.
- 9) աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները).
- 10) տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը.
- 11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը.
- 12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները.
- 13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

5. Սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաեւ դրանով:

6. Հանրային նշանակության, ինչպես նաեւ բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող կազմակերպությունները կարող են չհրապարակել սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերում սահմանված տեղեկությունները եւ դրանց փոփոխությունները:

1. Մեկնաբանվող մասը կոչված է ապահովելու տեղեկատվություն տնօրինողների կողմից տեղեկություններ տալու կարգերի իրավական ամրագրումը եւ համապատասխան իրավական ակտերի հրապարակումը:

Ներկայումս ՀՀ իրավական ակտերը հրապարակվում են՝

օրենսդրական ակտերը - «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»<sup>45</sup>.

գերատեսչական ակտերը - «Հայաստանի Հանրապետության գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագրում»<sup>46</sup>.

գյուղական եւ քաղաքային համայնքի ավագանու եւ ղեկավարի Նորմատիվ որոշումները - «Համայնքի իրավական ակտերի տեղեկագրում»<sup>47</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձնաց իրավական ակտերը ներկայումս տեղադրվում են նաեւ [www.arlis.am](http://www.arlis.am) կայքէջում:

Սակայն ոչ բոլորը հնարավորություն ունեն օգտվել պաշտոնական տեղեկագրերից կամ ինտերնետից, ուստի մեկնաբանվող դրույթը հնարավորություն է ընձեռում տեղեկություն տալու կարգին ծանոթանալ տեղեկատվություն տնօրինողի գտնվելու վայրում (օրինակ՝ տեղեկատվության տնօրինողի աշխատավայրում անձանց ազատ

մուտք գործելու համար նախատեսված վայրում) փակցված նյութերից:

Օրենքի ընդունումից հետո անցած ժամանակահատվածի փորձը ցույց է տալիս, որ մեկնաբանվող դրույթը որոշակի դժվարություններ է ստեղծում Օրենքի արդյունավետ կիրառման համար, քանի որ դրանով տեղեկատվություն տնօրինողից պահանջվում է օրենսդրությամբ սահմանված կարգով մշակել տեղեկություն տալու կարգ: Կարծում ենք, որ խնդիրը հարթելու նպատակով անհրաժեշտ է ունենալ տեղեկությունների տրամադրման մեկ՝ Օրենքով սահմանված միասնական կարգ, վերացնելով այլ կարգերի ընդունման անհրաժեշտությունը: Դա իրականացնելու նպատակով Նախագծերի փաթեթում ներառված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվում է մեկնաբանվող մասն ուժը կորցրած ճանաչել:

2. Մեկնաբանվող մասի նպատակն է ապահովել հանրության տեղեկացվածությունը, այնպիսի դեպքերում երբ անհրաժեշտ է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը: Անհապաղ հրապարակման ենթակա տեղեկություններ են, օրինակ՝ արտակարգ իրավիճակների մասին<sup>48</sup>, շրջակա միջավայրի սանիտարահամաճարա-

45. Տես՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդված:

46. Տես՝ նույնի 62-րդ հոդված:

47. Տես՝ նույնի 63-րդ հոդված:

48. Համաձայն ՀՀ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» 1998 թվականի դեկտեմբերի 2-ի ՀՕ-265 օրենքի 1-ին հոդվածի արտակարգ իրավիճակ է համարվում որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երեւոյթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի եւ գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետեւանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների եւ մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման:

կային իրադրության<sup>49</sup>, վարակիչ հիվանդությունների, ճանապարհների անցանելիության եւ այլն տեղեկությունները:

**3.** Մեկնաբանվող մասի նպատակն է սահմանել այսպես կոչված «պարտադիր հրապարակման ենթակա» տեղեկությունների ցանկ եւ ապահովել այդ տեղեկությունների պարբերական (տարին առնվազն մեկ անգամ) հրապարակումը: Այս նորմի ամրագրումը պայմանավորված է տեղեկատվության տնօրինողի ընթացիկ գործունեությանը վերաբերող՝ առավել պահանջարկ եւ հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկությունների հրապարակման, ինչպես նաեւ տեղեկատվություն տնօրինողի գործունեության թափանցիկության ապահովման անհրաժեշտությամբ: Նորմի նպատակն է նաեւ հնարավորինս նվազեցնել տեղեկատվության տնօրինողներիննրին ուղվող հարցումների քանակը՝ դրանով մեղմացնելով տեղեկատվություն տնօրինողի առօրյա գործունեության ծանրաբեռնվածությունը:

Այդ տեղեկությունները մասնավորապես վերաբերվում են՝ հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքներին եւ ծառայություններին (օրինակ՝ շինարարական, բարեկարգման եւ կանաչապատման եւ այլն աշխատանքները, ինչես նաեւ՝ առողջապահական, էներգամատակարարման, տրանսպորտային, կապի եւ այլն ծառայությունները), բյուջեին (տվյալ դեպքում՝ պետական եւ համայնքային բյուջեները, որոնք ամրագրվում են պետական բյուջեի մասին օրենքում) եւ այլն:

Օրենքի իմաստով՝ տեղեկատվություն տնօրինողներ կողմից տեղեկությունների

պարտադիր հրապարակման կարգեր սահմանված են նաեւ այլ օրենքներում: Մասնավորապես, «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ տարածքում գործող ապահովագրական, վերաապահովագրական եւ ապահովագրական միջնորդային գործունեության կազմակերպման եւ իրականացման, ապահովագրական ընկերությունները պարտավոր են մշտապես ունենալ գործող ինտերնետային կայք եւ այդ կայքում հրապարակել նշված հոդվածով նախատեսված տեղեկությունները:

**4.** Օրենքի այս մասով ապահովվում է մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասում թվարկված տեղեկությունները հարապարակելուց հետո՝ դրանցում կատարված փոփոխությունների մասին հանրությանը տեղեկացնելու մեխանիզմ՝ սահմանելով, որ այդ փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

**5.** Օրենքի այս մասում սահմանված են այն միջոցները, որոնցով անհրաժեշտ է հրապարակել մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասում թվարկված՝ «պարտադիր հրապարակման ենթակա» տեղեկությունները: Նշված նորմը համադրելով Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված «հրապարակում» հասկացության հետ կարող ենք եզրակացնել, որ այդ տեղեկությունների հրապարակման միջոցներ են՝ մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցները, ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված այն միջոցները, որոնք մատչելի են հանրությանը:

Տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում նշված

49. Համաձայն ՀՀ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության մասին» 1992թ. նոյեմբերի 16-ի ՀՆ-0732-1 օրենքի 10-րդ հոդվածի՝ քաղաքացիներն ունեն մասնավորապես՝ շրջակա միջավայրի սանիտարահամաճարակային իրադրության վերաբերյալ հավաստի եւ ամբողջական տեղեկատվության եւ իրազեկման իրավունք, ինչպես նաեւ պետական մարմինների՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանը վերաբերող որոշումների եւ ծրագրերի մշակմանը, քննարկմանն ու ընդունմանը, սահմանված կարգով, մասնակցելու եւ դրանց իրականացումը վերահսկելու իրավունք:

տեղկությունները պետք է հրապարակվեն նաև դրանով:

**6.** Թեև Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող եւ հանրային նշանակության կազմակերպությունները, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձինք նույնպես համարվում են տեղեկատվություն տնօրինող, սակայն մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ «պարտադիր հրապարակաման ենթակա տեղեկությունների» ցանկով նախատեսված ոչ բոլոր տեղկությունների հրապարակումն է վերաբերվում նրանց: Նշված անձինք կարող են չհրապարակել իրենց՝

- բյուջեն (մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ).
- հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները,

ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները (մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետ).

- աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը (մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետ):

Ինչպես երեւում է թվարկված կետերից, դրանք այն դեպքերն են, երբ տեղեկությունը կարող է վերաբերվել առեւտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի բացահայտմանը, ուստի դրանց հրապարակելը թողնված է բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող եւ հանրային նշանակության կազմակերպությունների հայեցողությանը:

## ՀՈՂԱԾ 8

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՈՒՄՆԵՐԸ

1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
- 2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.
- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
- 5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

2. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

3. Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

- 1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին.
- 2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.
- 3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

1. Մեկնաբանվող մասում սպառիչ թվարկված են այն բոլոր դեպքերը, երբ տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է մերժել տեղեկության տրամադրումը: Դրանք այն դեպքերն են, երբ տեղեկությունը՝

**1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.**

**Պետական եւ ծառայողական գաղտնիքների** բնորոշումները տրված են «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թ. դեկտեմբերի 3-ի ՀՕ-94 օրենքի 2-րդ հոդվածում, ըստ որի՝

- **Պետական գաղտնիքը** ՀՀ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, եւ որոնց տարածումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել ՀՀ անվտանգության համար:
- **Ծառայողական գաղտնիքը** ՀՀ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, եւ որոնց տարածումը կարող է վնաս հասցնել ՀՀ անվտանգությանը: Այդպիսի տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը:

Պետական եւ ծառայողական գաղտնիք

կազմող տեղեկությունները համարվում են ՀՀ սեփականությունը, պահպանվում եւ պաշտպանվում են պետության կողմից:

Պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել՝

- ա) քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաեւ տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետեւանքների մասին տեղեկությունները.
- բ) տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները.
- գ) քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների սահմանափակման փաստերի, իրավախախտումների եւ սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների մասին տեղեկությունները.
- դ) այն տեղեկությունները, որոնք եթե դասվեն պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին, ապա բացասական ազդեցություն կունենան ՀՀ սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական եւ ճյուղային ծրագրերի իրականացման վրա<sup>50</sup>:

Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել, որ վերոգրյալ «ա», «գ» եւ «դ» կետերով նախատեսված դեպքերում՝

- տեղեկությունների տրամադրումը՝ Օրենքի մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասի համաձայն տեղեկատվության տնօրինողի կողմից չի կարող մերժվել (հարցումը չի կարող մերժվել):

50. Տես՝ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված:

- տեղեկությունների հրապարակումը՝ Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն:

**Բանկային գաղտնիքի** բնորոշումը տրված է «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության 1996թ. հոկտեմբերի 7 -ի ՅՕ-80 օրենքի 4-րդ հոդվածում, ըստ որի՝ բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները եւ նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, եւ բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

**Առևտրային գաղտնիքի** (ծառայողական եւ բանկային գաղտնիքի հետ մեկտեղ) բնորոշումը տրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածում, ըստ որի տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն եւ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար: Տեղեկությունները, որոնք չեն կարող ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով:

**2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ**

**թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.**

Համաձայն Սահմանադրության 23-րդ հոդվածի՝ առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով: Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով, դատարանի որոշմամբ:

Սահմանադրության նշված նորմերի կատարումն ապահովված նաեւ ՀՀ տարբեր օրենքներով, մասնավորապես՝

- «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքով սահմանված է **մարդու անձնական եւ ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերի բնորոշումը**, որոնք՝ ֆիզիկական անձի առողջական վիճակի, ընտանեկան եւ նեղ անձնական հարաբերությունների, ծննդյան, որդեգրման, ամուսնության եւ ամուսնալուծության հանգամանքների, անձնական տվյալների, անձնական գրագրության եւ թղթակցության, նոտարական գործարքների, զույքային իրավունքի, եկամտի աղբյուրների մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերը (3-րդ հոդված): Այդպիսի փաստաթղթերի օգտագործման մատչելիությունը սահմանափակվում է դրանց ստեղծման ժամանակից 100 տարի ժամկետով, եթե օրենքով այլ

բան նախատեսված չէ: Մարդու, իսկ մահվանից հետո նրա ժառանգների գրավոր թույլտվության կամ դատարանի որոշման հիման վրա մարդու անձնական եւ ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերը կարող են մատչելի լինել ավելի վաղ, քան դրանց ստեղծման ժամանակից 100 տարվա ժամկետը (22-րդ հոդված):

- Համաձայն ՀՀ 2004թ.-ի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի 132-րդ հոդվածի գործատուն աշխատողի **անձնական տվյալները**<sup>51</sup> մշակելիս<sup>52</sup> պարտավոր է պահպանել մասնավորապես հետեւյալ պահանջները.

1) բոլոր անձնական տվյալները պետք է ստացվեն աշխատողից: Եթե աշխատողի անձնական տվյալները հնարավոր է ստանալ միայն երրորդ անձից, ապա պետք է առկա լինի աշխատողի գրավոր համաձայնությունը:

2) գործատուն իրավունք չունի ձեռք բերելու եւ մշակելու աշխատողի քաղաքական, կրոնական եւ այլ համոզմունքների կամ անձնական կյանքի վերաբերյալ տվյալներ: Աշխատանքային հարաբերությունների հետ անմիջականորեն կապված դեպքերում գործատուն իրավունք ունի ձեռք բերելու եւ մշակելու աշխատողի անձնական կյանքի վերաբերյալ տվյալներ՝ միայն նրա գրավոր համաձայնությամբ.

3) գործատուն իրավունք չունի ձեռք բերելու եւ մշակելու աշխատողի՝ հասարակական միավորումներում անդամակցության կամ արհեստակցական միություններում նրա գործունեության մասին անձնական տվյալներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

Անձնական գաղտնիքների թվին կարելի է դասել նաեւ **անձի քաղաքացիության վերաբերյալ տեղեկությունը**, որը ստանալու իրավունք ունեն միայն՝

- 1) ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը.
- 2) ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը.
- 3) ՀՀ արտաքին գործերի նախարարությունը.
- 4) ՀՀ պաշտպանության նախարարությունը<sup>53</sup>:

**Անձնական եւ ընտանեկան գաղտնիքների շարքին է դասվում նաեւ երեխայի որդեգրման գաղտնիքը**<sup>54</sup>.

Երեխայի որդեգրման մասին վճիռ կայացրած դատավորները կամ որդեգրման պետական գրանցում իրականացնող քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնի ղեկավարը եւ աշխատողները, ինչպես նաեւ որդեգրման մասին տեղյակ այլ անձինք պարտավոր են պահպանել երեխայի որդեգրման գաղտնիքը<sup>55</sup>:

51. Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ հոդվածի՝ անձնական տվյալները աշխատանքային հարաբերությունների հետ կապված եւ որոշակի աշխատողին վերաբերող՝ գործատուին անհրաժեշտ տեղեկություններն են:

52. Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ հոդվածի՝ աշխատողի անձնական տվյալների մշակում է համարվում աշխատողի անձնական տվյալներն ստանալը, պաշտպանելը, համակարգելը, փոխանցելը կամ ցանկացած այլ կերպ օգտագործելը:

53. Տես՝ «Անձի քաղաքացիության վերաբերյալ տեղեկություն ստանալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2007թ. հոկտեմբերի 4-ի N 1154-Ն որոշման հավելվածի 2-րդ կետ:

54. ՀՀ 2004թ. նոյեմբերի 9-ի ընտանեկան օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որդեգրումը իրավաբանական այն ակտն է, որի համաձայն որդեգրողները եւ որդեգրվածները ձեռք են բերում ծնողների եւ զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ եւ պարտականություններ:

55. Տես՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մաս:

**3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.**

Համաձայն ՀՀ 1998թ. հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Անհրաժեշտ դեպքերում քննիչը, հետաքննության մարմինը վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին եւ քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին, մասնագետներին, փորձագետներին, թարգմանիչներին, ընթերակներին, պաշտպաններին եւ գործին մասնակցող այլ անձանց գրավոր նախազգուշացնում են՝ նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին:

**4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).**

**Բժշկական գաղտնիք** են համարվում, մասնավորապես՝

- Բժշկական զննման արդյունքները<sup>56</sup>:
- Բժշկական քարտը<sup>57</sup>:
- Քաղաքացիների հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկությունները: Այդպիսի տեղեկությունները տրամադրվում են հիվանդին եւ նրա օրինական

ներկայացուցչին նրանց պահանջով՝ օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով, ինչպես նաեւ օրենքով սահմանված այլ դեպքերում: Հոգեբուժական հետազոտման տվյալները եւ եզրակացությունը գրանցվում են բժշկական փաստաթղթերում (ամբուլատոր քարտում կամ հիվանդության պատմության նկարագրում)<sup>58</sup>:

- Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների՝ արհեստական սերմնավորման կամ բեղմնավորման եւ փոխնակ մայրության կիրառման հետ կապված տեղեկությունները: Այդպիսի տեղեկությունները տրամադրվում են միայն դատարանի (դատավորի), դատախազության, նախաքննության, հետաքննության մարմինների հարուցած քրեական կամ քաղաքացիական գործերի կապակցությամբ, ինչպես նաեւ այլ իրավասու մարմինների պահանջով օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով<sup>59</sup>:
- Օրգանների եւ հյուսվածքների դոնորների եւ ռեցիպիենտների ռեեստրում գրանցված տեղեկությունները: Այդպիսի տեղեկությունները կարող են տրամադրվել փոխպատվաստման օրգաններ եւ հյուսվածքներ վերցնող եւ դրանց մշակմամբ ու փոխպատվաստմամբ զբաղվող լիցենզավորված բժշկական հաստատություններիս եւ

56. Տես՝ օրինակ, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչության գլխավոր վարչության պետի «Բժշկական զննման արդյունքներում ՀՀ քաղաքացիական ավիացիայի բնագավառում բժշկական սերտիֆիկատների հատկացման մասին» 2007թ. N-65-Ն հրամանի հավելվածի 11-րդ կետ:

57. Տես՝ օրինակ, ամուսնացող անձի հետազոտության արդյունքները (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 12-րդ հոդված) կամ «Կալանավորված անձանց եւ դատապարտյալների բուժսանիտարական եւ բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական հիմնարկներից օգտվելու եւ այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի N 825-Ն որոշման հավելվածի 7-րդ կետ:

58. Տես՝ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ 2004թ. մայիսի 25-ի ՀՕ-80-Ն օրենքի 13 հոդված:

59. Տես՝ «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002թ. դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի 18-րդ հոդված:

օրենքով նախատեսված դեպքերում<sup>60</sup>:

- Նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում հաշվառված եւ հաշվառումից հանված թմրամոլների վերաբերյալ տեղեկությունները<sup>61</sup>:

**Նոտարական գաղտնիք** են համարվում նոտարի կողմից վավերացված կամ հաստատված փաստաթղթերից բխող նոտարին հայտնի դարձած տեղեկությունները: Անձը, որի համաձայնությամբ կամ որի նկատմամբ կատարվել է նոտարական գործողությունը, ինչպես նաեւ նրա իրավահաջորդը կամ ներկայացուցիչն իրենց գրավոր համաձայնությամբ կարող են նոտարին ազատել նոտարական գործողությունների կատարման գաղտնիքը պահպանելու պարտականությունից: Նոտարը նոտարական գործողությունների կատարման մասին տեղեկանքներ է տալիս միայն այն ֆիզիկական անձանց, ինչպես նաեւ իրավաբանական անձանց, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին կամ նրանց ներկայացուցիչներին, որոնց դիմումով, համաձայնությամբ կամ որոնց նկատմամբ ինքը կատարել է նոտարական գործողություններ<sup>62</sup>:

**Փաստաբանական գաղտնիք** է համարվում այն տեղեկությունը, որը վստահորդը փոխանցել է փաստաբանին, ինչպես նաեւ այն տեղեկությունները եւ ապացույցները, որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն, եւ որոնք հայտնի չեն հանրությանը: Փաստաբանը հրապարակում է փաստաբանական գաղտնիքը, եթե`

- 1) առկա է վստահորդի համաձայնությունը.
- 2) դա անհրաժեշտ է նրա եւ վստահորդի միջեւ ծագած դատական վեճում պահանջները հիմնավորելու կամ իր պաշտպանության համար.
- 3) առկա է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված` հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն: Փաստաբանական գաղտնիքի պահպանման պարտականությունը չի սահմանափակվում ժամանակի մեջ<sup>63</sup>:

### **5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:**

Համաձայն «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ 2006 թ.-ի հունիսի 15-ին ՀՕ-142-Ն օրենքի 3-րդ հոդվածի **հեղինակային իրավունքի օբյեկտ** է համարվում գրականության, գիտության եւ արվեստի բնագավառներում հեղինակի ինքնուրույն կամ այլ հեղինակների հետ իրականացրած ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունքը, որն արտահայտված է բանավոր, գրավոր կամ այլ օբյեկտիվ ձեւով, ներառյալ` մշտապես կամ ժամանակավոր պահպանվող էլեկտրոնային ձեւը, անկախ ստեղծագործության ծավալից, նշանակությունից, արժանիքներից ու ստեղծման նպատակից: Հեղինակային իրավունքը տարածվում է ինչպես հրապարակված, այնպես էլ չհրապարակված ստեղծագործությունների վրա:

Հեղինակային իրավունքի օբյեկտներ են`

60. Տես` «Մարդու օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ 2002թ. ապրիլի 16-ի ՀՕ-324 օրենքի 2.1-րդ հոդված:

61. Տես` ՀՀ առողջապահության նախարարի 2008թ. հուլիսի 28-ի «Հաշվառված եւ հաշվառումից հանված թմրամոլների վերաբերյալ տեղեկությունները արտահիվանդանոցային նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատության կողմից ՀՀ առողջապահության նախարարությանը փոխանցելու կարգը եւ թմրամոլների հաշվառման մատյանի ձեւը սահմանելու մասին» N-12-Ն հրաման:

62. Տես` «Նոտարիատի մասին» ՀՀ 2001թ. դեկտեմբերի 4-ի ՀՕ-274 օրենքի 5-րդ հոդված:

63. Տես` «Փաստաբանության մասին» ՀՀ 2004թ. դեկտեմբերի 14-ի ՀՕ-29-Ն օրենքի 25-րդ հոդված:

- գրական, գիտական ստեղծագործությունները, ինչպես նաև համակարգչային ծրագրերը.
- գեղանկարչության, քանդակագործության, գրաֆիկայի, դիզայնի եւ կերպարվեստի այլ ստեղծագործությունները.
- դրամատիկական եւ երաժշտադրամատիկական ստեղծագործությունները, սցենարները, սցենարային պլանները, լիբրետոները եւ բեմական ցուցադրման այլ ստեղծագործությունները.
- պարարվեստի եւ մնջախաղի ստեղծագործությունները.
- տեքստով կամ առանց տեքստի երաժշտական ստեղծագործությունները.
- տեսալսողական ստեղծագործությունները (կինո-հեռուստաֆիլմերը, անիմացիոն եւ մուլտիպլիկացիոն կինոնկարները, կարճ երաժշտական տեսահոլովակները, գովազդային, փաստագրական, փաստավավերագրական եւ այլ ֆիլմերը).
- դեկորատիվ-կիրառական արվեստի եւ բեմական գրաֆիկայի ստեղծագործությունները.
- լուսանկարչական եւ նման եղանակով

ստեղծված ստեղծագործությունները, որոնք համապատասխանում են սույն հոդվածի առաջին մասի դրույթներին.

- քաղաքաշինական, ճարտարապետական, այգեպուրակային արվեստի ստեղծագործությունները եւ դրանց լուծումները ինչպես ամբողջությամբ, այնպես էլ առանձին մասերը.
- աշխարհագրությանը, տոպոգրաֆիային, երկրաբանությանը, քաղաքաշինությանը, ճարտարապետությանը եւ այլ գիտություններին վերաբերող քարտեզները, նախագծերը, էսքիզները եւ պլաստիկ ստեղծագործությունները.
- ածանցյալ ստեղծագործությունները.
- ստեղծագործության մասերը (անվանումը, կերպարները եւ այլն), որոնք համապատասխանում են սույն հոդվածի առաջին մասի դրույթներին եւ կարող են օգտագործվել ինքնուրույն.
- տառատեսակները:

Հարակից իրավունքներով օժտված են մասնավորապես՝ կատարողները<sup>64</sup>, ֆիլմի առաջին անրագրման արտադրողները<sup>65</sup>, հնչյունագիր արտադրողները<sup>66</sup>, հեռարձակող կազմակերպությունները<sup>67</sup>, հրատա-

64. Կատարողներ են համարվում դերասանները, երգիչները, երաժիշտները, պարողները, դիրիժորները, խմբավարները եւ այլ անձինք, ովքեր դեր են կատարում, երգում են, արտասանում, կարդում, նվագում կամ այլ ձեւով կատարում են գրական կամ գեղարվեստական ստեղծագործություններ, կրկեսային, տիկնիկային, էստրադային եւ համանման այլ ներկայացումներ, ինչպես նաև ժողովրդական բանահյուսության եւ արվեստի ստեղծագործություններ (տես՝ «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդված):

65. Ֆիլմի առաջին անրագրման արտադրողն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, ում նախաձեռնությամբ եւ պատասխանատվությամբ առաջին անգամ անրագրվել է ֆիլմը (տես՝ «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 48 -րդ հոդված):

66. Հնչյունագիր արտադրող է համարվում ֆիզիկական կամ իրավաբանական այն անձը, որի նախաձեռնությամբ եւ պատասխանատվությամբ իրականացվել է կատարման կամ այլ հնչյունների կամ հնչյունների ներկայացման առաջին անրագրումը (տես՝ «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 46 -րդ հոդված):

67. Հեռարձակող կազմակերպության հաղորդում է համարվում տարածման համար նախատեսված պատկերներ եւ (կամ) հնչյուններ կամ այլ տեղեկատվություն պարունակող կենդանի կատարման կամ անրագրված նյութի ամբողջությունը, որը պատրաստել է եթեր հեռարձակող կամ մալուխային կապով հեռարձակող կազմակերպությունը կամ նրա պատվերով եւ միջոցներով՝ այլ անձ (տես՝ «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 50 -րդ հոդված):

րակիչները, տվյալների բազան պատրաստողը<sup>68</sup>:

«Յեղիմակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչեւ նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավաստիրոջ թույլտվությունը: Ստեղծագործության էական մաս է համարվում ստեղծագործության որեւէ մասը, որը տվյալ ստեղծագործությանը ծանոթ ցանկացած անձ ինքնուրույն կարող է նույնականացնել որպես այդ ստեղծագործության մաս: Անձը, որը չի կատարում նշված պահանջները, **համարվում է հեղինակային իրավունքը կամ հարակից իրավունքները խախտող**<sup>69</sup>:

Թեւեւ մեկնաբանվող հոդվածում սպառիչ թվարկված են օրենքով պահպանվող բոլոր հիմնական գաղտնիքները, սակայն կան այնպիսի գաղտնիքներ, որոնք իրենց մեջ ներառում են թվարկված գաղտնիքներից մեկը կամ մի քանիսը եւ Օրենքի մեկնաբանվող հոդվածում ուղղակիորեն նշված չեն: Դրանք են՝

- **ապահովագրական գաղտնիքը**, որը «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ապահովագրական գործունեության ընթացքում ապահովադրի, ապահովագրված անձի կամ շահառուի վերաբերյալ ապահովագրողին, վերաապահովագրողին, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձին հայտնի դարձած ապահովադրի, ապա-

հովագրված անձի կամ շահառուի առեւտրային գաղտնիքը կամ այլ տեղեկություն, որն ապահովադիրը կամ ապահովագրված անձը մտադիր են եղել գաղտնի պահել, եւ ընկերությունը, վերաապահովագրական ընկերությունը կամ ապահովագրական միջնորդը տեղյակ է կամ պարտավոր էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

- **վիճակագրական գաղտնիքը**, որը «Պետական վիճակագրության մասին» ՀՀ 2000թ.-ի ապրիլի 4-ին ՀՕ-48 օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ այն վիճակագրական տվյալներն է, որի միջոցով հնարավոր է ուղղակի կամ անուղղակի ձեւով բացահայտել (նույնականացնել, իդենտիֆիկացնել) վիճակագրական տեղեկություն տրամադրողին՝ ձեռք բերել, անհատական (անվանական) տեղեկություններ: Տվյալները, որոնք հասանելի են հանրությանը այլ աղբյուրներից, վիճակագրական գաղտնիք չեն համարվում: Վիճակագրական գաղտնիք համարվող տվյալները, առանց դրանց ներկայացնողի համաձայնության, հրապարակման կամ այլ ձեւով տարածման ենթակա չեն: Տեղեկությունների չհրապարակման կամ այլ ձեւով չտարածման դրույթը չի գործում այն դեպքում, երբ դրանք հանդիսանում են բնական կամ այլ մենաշնորհային գործունեությունն արտացոլող տեղեկություններ, որոնց չհրապարակումը (չտարածումը) էապես կազդի վիճակագրական տեղեկատվության ամբողջականության սկզբունքների պահպանման վրա: Նման դեպքերում հրապարակման (տարածման) մասին որոշումը կայացնում է խորհուրդը:

68. Տվյալների բազա պատրաստող է համարվում ցանկացած անձ, որն իր նախաձեռնությամբ եւ պատասխանատվությամբ որակապես եւ (կամ) քանակապես էական ներդրում է կատարել տվյալների բազայի պարունակության ձեռքբերման, ճշգրտման կամ ներկայացման համար (տես՝ «Յեղիմակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 58 -րդ հոդված):

69. Տես՝ «Յեղիմակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65 -րդ հոդված:

● **հարկային գաղտնիքը**, որը «Հարկային ծառայության մասին» ՀՀ 2002թ. հունիսի 3-ի ՀՕ-407-Ն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկ վճարողի կամ ապահովադրի գործունեության վերաբերյալ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի ստացած ցանկացած տեղեկությունն է, բացառությամբ՝

- հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների,

- հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության,

- հարկ վճարողի կանոնադրության մեջ ներառվող տեղեկությունների,

- հարկային օրենսդրության եւ հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենսդրության պահանջների խախտման եւ կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունների,

- հարկ վճարողի (հարկ վճարողի գործունեության) վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային (մաքսային) մարմիններին ներկայացվող տեղեկությունների:

Մեկնաբանվող մասի կարգավորման շրջանակներից դուրս է մնացել այն դեպքը, երբ հազվագյուտ եւ հատկապես արժեքավոր փաստաթղթի կամ այլ մշակութային արժեքի բնագրի կամ ոչ բավարար պահպանվածության վիճակ ունեցող փաստաթղթի պատճենահանումը (կրկնօրինակումը) կարող է անուղղելի վնաս պատճառել այդ փաստաթղթին: Այս բացը լրացնելու նպատակով Նախագծերի փաթեթում ներառված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվում է տեղեկության տրամադրումը մերժել նաեւ այն դեպքում, երբ

տեղեկությունը ՀՀ արխիվային կամ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանվող այլ հավաքածուի հազվագյուտ եւ հատկապես արժեքավոր փաստաթղթի կամ այլ մշակութային արժեքի բնագիր կամ ոչ բավարար պահպանվածության վիճակ ունեցող փաստաթուղթ է:

**2.** Մեկնաբանվող մասում սահմանված է օրենքով պահպանվող գաղտնիքի վերաբերյալ տվյալներ պարունակող տեղեկության տրամադրման հիմնական կանոնը, ըստ որի՝ այդպիսի տեղեկությունները հարցմամբ դիմողին են տրամադրվում այն մասով, որը օրենքով պահպանվող գաղտնիք չի պարունակում: Գործնականում դա կարելի է անել, օրինակ՝ փաստաթղթի օրենքով պահպանվող գաղտնիք կազմող էջերը հանելով, եթե էջն ամբողջությամբ պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք կամ անընթեռնելի դարձնելով (ջնջելով) օրենքով պահպանվող գաղտնիքի վերաբերյալ տվյալները (տողերը):

**3.** Տես՝ 8-րդ հոդվածի 1-ին մասին մեկնաբանությունը:

Օրենքի կարգավորման շրջանակներից դուրս է մնացել այն դեպքը, երբ համաձայն ՀՀ Սահմանդրության 23-րդ հոդվածի երրորդ մասի՝ յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք: Ուստի, Նախագծերի փաթեթում ներառված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվում է ամրագրել, որ տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել նաեւ այն դեպքում, երբ տեղեկությունը դիմողի վերաբերյալ է կամ այլ անձի վերաբերյալ է եւ դիմողն ունի տեղեկությունը հավաքելու, պահպանելու, օգտագործելու կամ տարածելու մասին այդ անձի համաձայնությունը:

## ՀՈՂՎԱԾ 9

### ՀԱՐՑՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):

2. Գրավոր հարցումների գործավարությունն իրականացվում է քաղաքացիների դիմումների եւ բողոքների համար օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գործավարության մյուս ձեւերից առանձին:

3. Գրավոր հարցմանը պատասխան չի տրվում, եթե՝

1) դա չի պարունակում սույն հոդվածի 1-ին մասում նշված բոլոր տվյալները.

2) պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են.

3) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի:

4. Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:

5. Բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը: Բանավոր հարցման պատասխանը տրվում է, եթե՝

1) պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական, հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը.

2) անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը.

3) անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը:

6. Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Եթե բանավոր հարցմամբ դիմողը չի հայտնում իր անունը եւ ազգանունը, եւ (կամ) բանավոր հարցումը չի համապատասխանում սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ապա տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցմանը:

7. Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է

կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

**8.** Գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցմանը՝ սույն օրենքով սահմանված ժամկետում պատասխանելու համար, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:

**9.** Սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում հարցմամբ դիմողն իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը:

**10.** Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

**11.** Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող նյութ տվյալները:

**1.** Մեկնաբանվող մասում թվարկված են այն պահանջները, որոնք վերաբերում են տեղեկությունը ստանալու համար տեղեկատվություն տնօրինողին ուղղվող գրավոր հարցմանը: Ըստ այդմ, գրավոր հարցումը պետք է՝

- ստորագրված լինի.
- պարունակի դիմողի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը).
- պարունակի քաղաքացիությունը.
- պարունակի բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը:

Գրավոր հարցման մեջ վերը նշված տվյալներից որեւիցե մեկի բացակայության կամ դրանց՝ իրականությանը չհամապատասխանելու դեպքում տեղեկատվություն տնօրինողը մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝

գրավոր հարցմանը չի պատասխանում (այսինքն՝ հարցմանն ընթացք չի տրվում եւ այն ոչնչացվում է):

Ինչպես արդեն նշել ենք, Օրենքի կարգավորման շրջանակներից դուրս է մնացել էլեկտրոնային հարցումների ներկայացման եւ քննարկման կարգը: Ուստի Նախագծերի փաթեթում ներառված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 8-րդ հոդվածով առաջարկվում է ամբողջությամբ վերաշարադրել մեկնաբանվող հոդվածը դրանում մասնավորապես ամրագրելով հետեւյալ դրույթները՝

- տեղեկությունը փնտրելու եւ (կամ) ստանալու նպատակով տեղեկատվություն տնօրինողին կարող են ներկայացվել ինչպես բանավոր եւ գրավոր, այնպես էլ՝ էլեկտրոնային հարցումներ.
- էլեկտրոնային հարցումն ուղարկվում է տեղեկատվություն տնօրինողի ղեկա-

վար պաշտոնատար անձի կամ տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձի ծառայողական էլեկտրոնային փոստի հասցեով.

- էլեկտրոնային հարցումները եւ դրանց պատասխանները նույնպես գրանցվում են դիմումների գործավարության համար օրենսդրությամբ սահմանված կարգով.
- ինչպես գրավոր, այնպես էլ՝ էլեկտրոնային հարցումը պետք է պարունակի՝
  - 1) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը.
  - 2) դիմողի հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը) կամ այն հասցեն (այդ թվում՝ էլեկտրոնային), որով դիմողը պահանջում է ստանալ պատասխանը.
  - 3) հարցումը ներկայացնելու ամսաթիվը.
  - 4) պահանջվող տեղեկության մոտավոր նկարագրությունը կամ գրանցման տվյալները.
  - 6) նյութկան կրիչի տեսակը, որով դիմողը նախընտրում է ստանալ տեղեկությունը:
- էլեկտրոնային պատասխանը՝ ուղարկվում է տեղեկատվություն տնօրինողի էլեկտրոնային հասցեից՝ էլեկտրոնային փոստով, որը պարունակում է՝
  - 1) տեղեկատվության տնօրինողի անվանումը.
  - 2) հարցմանը պատասխանող անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, ծառայողական հեռախոսահամարը եւ

էլեկտրոնային փոստի հասցեն.

- 3) պատասխանի ելքի ամսաթիվը եւ համարը.
- 4) հարցման մուտքի ամսաթիվը եւ համարը.
- 5) կցվող նյութի անվանումը, ամսաթիվը, գրանցման տվյալները, էլեկտրոնային պատասխանի դեպքում՝ նաեւ միջքի (ֆայլի) անվանումը:

Բացի այդ, ներկայումս էլեկտրոնային փաստաթղթերի<sup>70</sup> եւ էլեկտրոնային թվային ստորագրությունների<sup>71</sup> կիրառման ընթացքում ծագող հարաբերությունները կարգավորված են «էլեկտրոնային փաստաթղթերի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ 2004թ.-ի դեկտեմբերի 14-ի ՀՕ-40-Ն օրենքով, իսկ պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթերի եւ թվային ստորագրությունների կիրառման կարգը՝ «Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթերի եւ էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 4-ի N 1595-Ն որոշմամբ:

**2.** Մեկնաբանվող մասում ամրագրված է գրավոր հարցումների գործավարության կարգը, այն է՝ քաղաքացիների դիմումների եւ բողոքների համար օրենսդրությամբ սահմանված կարգը: Հանրապետության Նախագահի 2002թ. մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին» ՆՀ-1064 հրամանգրի 84-րդ եւ 85-

70. էլեկտրոնային փաստաթուղթ է համարվում էլեկտրոնային ձեւով ներկայացված տեղեկությունը կամ հաղորդագրությունը (տես՝ «էլեկտրոնային փաստաթղթերի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված):

71. էլեկտրոնային թվային ստորագրություն է համարվում էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների եւ տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված եւ էլեկտրոնային թվային ձեւով ներկայացված պայմանաճանների եզակի հաջորդականությունը, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ եւ օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաեւ էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար (տես՝ «էլեկտրոնային փաստաթղթերի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված):

րդ կետերի համաձայն՝ ՀՀ կառավարության գործավարությունը տարվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված «Կառավարության գործավարության կարգին» համապատասխան: ՀՀ կառավարության գործավարության կազմակերպումն իրականացնում է կառավարության աշխատակազմը:

Հանրապետության Նախագահի հրամանագրով նախատեսված՝ ՀՀ կառավարության գործավարության կարգը հաստատված է ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 20-ի «ՀՀ կառավարության գործավարության կարգը հաստատելու մասին» N 890-Ն որոշմամբ: Այդ որոշման 2-րդ կետով ՀՀ նախարարներին, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարներին, մարզպետներին, Երեւանի քաղաքապետին եւ գործադիր իշխանության այլ մարմինների ղեկավարներին հանձնարարվել է նախարարություններում, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմիններում, մարզպետարաններում, Երեւանի քաղաքապետարանում եւ գործադիր իշխանության այլ մարմիններում գործավարությունը կազմակերպել ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված գործավարության կարգի դրույթներին համապատասխան եւ հաստատել գործավարության կարգեր: Ներկայումս այդ կարգերն ընդունված են եւ իրենց բովանդակությամբ ՀՀ կառավարության գործավարության կարգից գրեթե չեն տարբերվում:

ՀՀ կառավարության վերը նշված որոշման 5-13 եւ 72-83 կետերի համաձայն՝

- ՀՀ կառավարության աշխատակազմում ստացված ամբողջ պաշտոնական եւ ոչ պաշտոնական թղթակցությունն ընդունվում եւ գրանցվում է աշխատակազմի քարտուղարությունում ապարատաժրագրային միջոցներով, զուգահեռ՝ նաեւ մատյանների օգնությամբ, որտեղ արտացոլվում են փաստաթղթի

համառոտ բովանդակությունը, շարժել եւ կատարման ընթացքը:

- Գրանցված փաստաթղթի 1-ին էջի ներքեւի աջ անկյունում դրվում է դրոշմակնիք, որի վրա նշվում են մտից գրանցման համարը եւ ամսաթիվը: Ստացված փաստաթղթի մտից գրանցման համարը բաղկացած է քարտուղարության դասակարգիչներով թղթակցին տրված պայմանանիշից եւ նրա հերթական համարից:
- Քարտուղարությունում բացվում են ստացված բոլոր ծրարները (նաեւ՝ էլեկտրոնային), բացի «Անձամբ» մակագրությամբ ծրարներից եւ անձնական էլեկտրոնային ստորագրությամբ փակված փաստաթղթերի էլեկտրոնային օրինակներից (ֆայլերից): «Անձամբ» մակագրությամբ ծրարները (կամ ֆայլերը) չեն գրանցվում եւ փակվիճակում հանձնվում կամ ՀՀ կառավարության համակարգչային ցանցով հաղորդվում են հասցեատիրոջը:
- Քարտուղարության աշխատողները պարտավոր են ծրարը բացելիս ստուգել փաստաթղթերի առկայությունը (ներառյալ հավելվածները), առդիր թերթերի քանակը, փաստաթղթերի համարները համեմատել ծրարի վրա նշվածների հետ: Փաստաթղթերի կամ ֆայլերի բացակայության կամ վնասված լինելու դեպքում քարտուղարության աշխատողի կողմից կազմվում է արձանագրություն՝ 3 օրինակից, որոնցից մեկը մնում է քարտուղարության ընդհանուր բաժնում, երկրորդը կցվում է փաստաթղթերին, իսկ երրորդն ուղարկվում է այն կազմակերպություն, որտեղից ստացվել է ծրարը: Արձանագրությունն ստորագրում են համապատասխան աշխատողը եւ ընդհանուր բաժնի պետը: Եթե ծրարում կամ ֆայլում հայտնաբերվում են սխալմամբ դրված փաստաթղթեր, դրանք նոր ծրարներով կամ համա-

կարգչային ցանցով ուղարկվում են ըստ պատկանելության՝ փաստաթղթերին կցելով այն ծրարները (նաեւ՝ էլեկտրոնային), որոնցով դրանք ստացվել են՝ անհրաժեշտության դեպքում տեղյակ պահելով այն կազմակերպությանը, որտեղից ստացվել է ծրարը:

- Ծրարները (նաեւ՝ էլեկտրոնային), որոնցով ստացվել է թղթակցությունը, պահպանվում են փաստաթղթերին են կցվում այն դեպքում, երբ միայն ծրարի միջոցով կարելի է պարզել ուղարկողի հասցեն կամ, եթե ծրարի վրա փոստային դրոշմակնիքի ամսաթիվը նշանակություն ունի տվյալ նյութի ուղարկման ու ստացման ժամանակը որոշելու համար:
- Մտից փաստաթղթերը, որոնք ստացվում են ՀՀ կառավարության համակարգչային ցանցով, պետք է հաստատված լինեն ուղարկողի կամ համապատասխան պաշտոնատար անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ստացված էլեկտրոնային օրինակն անհրաժեշտության դեպքում վերծանվում է եւ տեղական «լոկալ» համակարգչային ցանցով ուղարկվում հասցեատիրոջը: Յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ունենա իր էլեկտրոնային պատճենը՝ ֆայլի ձեւով ստեղծված ապարատածրագրային միջոցներով, որն ապահովում է դրա պատրաստող անձը կամ ստորագրողին: Փաստաթղթի կամ դրա էլեկտրոնային պատճենի իսկությունն ապահովում է նույն անձը կամ ստորագրողը, որը հավաստել է փաստաթուղթը՝ համապատասխան ստորագրություններով: Փաստաթղթերի այն էլեկտրոնային օրինակները, որոնք հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացի հաստատող եւ պատրաստող անձանց պաշտոններից ու ազգանուններից, լրացուցիչ պետք է պարունակեն ուղարկող օպերատորի ազգանունը: Բայց այդ դեպքում փաստա-

թուղթը կունենա միայն պատճենի կարգավիճակ:

- Այն դեպքում, երբ փաստաթուղթն ունի գաղտնիության աստիճան, անհրաժեշտության դեպքում պետք է վերծանվի հրահանգի համաձայն եւ հետո հանձնվի հասցեատիրոջը:
- Մտից փաստաթղթերը, որոնք ստացվել են թղթի կրիչի վրա, էլեկտրոնային ձեւի ապարատածրագրային միջոցների օգնությամբ ենթակա են վերափոխման՝ հետագայում տվյալների շտեմարանում գրանցելու համար:
- Քաղաքացիների կողմից ստացված առաջարկությունները, դիմումներն ու բողոքներն ստացման օրը գրանցվում են քարտուղարությունում:
- Աշխատակազմի իրավասու անձի կողմից քաղաքացիների անհատական ընդունելության ժամանակ նրանց գրավոր առաջարկությունները, դիմումներն ու բողոքները նույնպես ենթակա են գրանցման՝ օրենքով սահմանված կարգով:
- Կոլեկտիվ առաջարկության, դիմումի եւ բողոքի ստացման դեպքում գրանցվում է ընդգծված ազգանունը, իսկ դրա բացակայության դեպքում՝ առաջին ազգանունը:
- Անանուն նամակները գրանցման ենթակա չեն եւ ոչնչացվում են օրենքով սահմանված կարգով:
- Միեւնույն անձից միեւնույն հարցով քննարկման համար տարբեր հասցեներով ուղարկված եւ նույն պետական մարմնում ստացված առաջարկությունները, դիմումներն ու բողոքները հաշվի են առնվում առաջին առաջարկության, դիմումի ու բողոքի գրանցման պայմանահիշով՝ ավելացնելով հերթական համարը՝ կոտորակի ձեւով:
- Ստացված առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քարտուղարու-

թյան պետի կողմից նախնական քննարկումից հետո ներկայացվում են աշխատակազմի ղեկավարին կամ նրա տեղակալին:

- Որոշ առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ քարտուղարության կողմից կարող են ուղարկվել այն պետական մարմիններ, հիմնարկներ ու կազմակերպություններ, որոնց անմիջական իրավասությանն է պատկանում տվյալ հարցի լուծումը, կամ որոնց անմիջական ենթակայությամբ է գործում այն կազմակերպությունը կամ պաշտոնատար անձը, որի գործողությունը բողոքարկվում է՝ դիմողին ուղարկելով դրա մասին ծանուցում:
- Աշխատակազմի ստորաբաժանումներում քննարկված առաջարկությունները, դիմումներն ու բողոքները՝ ՀՀ վարչապետի, փոխվարչապետի կամ աշխատակազմի ղեկավարի մակագրություններով, ինչպես նաև ՀՀ վարչապետի կամ աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ՝ ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության պետի մակագրությամբ, վերադարձվում են քարտուղարություն՝ հասցեատերերին ուղարկելու համար:
- Նամակների քննարկման արդյունքների մասին գրավոր կամ, դիմողի համաձայնությամբ, բանավոր տեղեկացվում է դրանց հեղինակներին: Այս նպատակով պատասխանը նախապատրաստվում է 2 օրինակից, եւ երկուսն էլ հանձնվում է աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում: Առաջին օրինակը՝ քարտուղարության պետի ստորագրությամբ, ուղարկվում է դիմողին, երկրորդ օրինակը՝ համապատասխան աշխատողի նշագրով, կցվում է գործին:
- Ուսումնասիրությունից եւ վերջնական քննարկումից հետո քաղաքացիների

առաջարկությունները, դիմումներն ու բողոքները՝ իրենց բոլոր նյութերի հետ միասին, վերադարձվում են քարտուղարություն՝ «Գործին» մակագրությամբ, ստորագրությամբ, ամսաթվի նշումով:

- Յուրաքանչյուր նամակի համար կազմվում է գործ՝ բաղկացած առաջարկության, դիմումի ու բողոքի պատճեններից եւ այլ փաստաթղթերից:
- Վերահսկողության վերցված նամակների պատասխանները ենթակա են քարտուղարությունում պարտադիր գրանցման: Այդ դեպքում նամակի վերջին էջի աջ անկյունում դրվում է «Վերահսկողություն» դրոշմոցը:
- Պատասխանի պայմանաձևը կազմված է գրանցման պայմանաձևից եւ այն գործի համարից, որի մեջ կարվում է տվյալ հարցին վերաբերող գրագրությունը: Պատասխաններն ուղարկվում են աշխատակազմի այն ստորաբաժանումներ, որոնց վրա դրված է տվյալ նամակի նկատմամբ վերահսկողությունը:
- Պատասխաններն ուղարկվում են համապատասխան ստորաբաժանման ղեկավարին՝ ՀՀ վարչապետին, փոխվարչապետին կամ աշխատակազմի ղեկավարին զեկուցելու համար, որից հետո փաստաթուղթը սահմանված կարգով հանվում է վերահսկողությունից, եւ դրա վրա կատարվում է համապատասխան նշում:
- Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների ու բողոքների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է քարտուղարությունը:
- Նամակների ամբողջ շարժը գրանցվում է համակարգչում համապատասխան ծրագրի միջոցով (խափանման դեպքում՝ մատյանների միջոցով)՝ քարտուղարությունում եւ պահպանվում տվյալների շտեմարանում:

3. Գրավոր հարցմանը պատասխան չի տրվում, այսինքն՝ գործավարության համար սահմանված կարգով գրավոր հարցմանն ընթացք չի տրվում եւ հարցումը չի քննարկվում, եթե՝

- 1) դա չի պարունակում մեկնաբանվող հոդվածի 1-ին մասում նշված բոլոր տվյալները, այսինքն՝ դիմողի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը), քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը կամ անստորագիր է.
- 2) պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են, այսինքն պարզվում է, որ դիմողի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը), քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը կեղծ են.
- 3) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, բացառությամբ Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված այն դեպքի, երբ ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունը պարտավոր է այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա՝ Օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն:

4. Դիմողը պարտավոր չէ հիմնավորել իր գրավոր կամ բանավոր հարցումը, այսինքն տեղեկատվություն տնօրինողը չի կարող հարցմամբ դիմողից պահանջել, օրինակ՝ հայտնելու տեղեկությունը փնտ-

րելու նպատակը, դրդապատճառը կամ մերժել հարցումը՝ պատճառաբանելով, որ այն հիմնավորված չէ:

5. Օրենքի մեկնաբանվող մասում սպառիչ թվարկված են այն տեղեկությունները, որոնք բանավոր հարցմամբ կարելի է ստանալ տեղեկատվություն տնօրինողից: Դրանք են՝

- 1) տեղեկություններ, որոնց տրամադրումը կարող է կանխել պետական, հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը<sup>72</sup>.
- 2) տեղեկություններ, որոնցով անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը (օրինակ՝ մինչեւ գրավոր հարցմամբ դիմելը անձը կարող է զանգահարել տեղեկատվություն տնօրինողի համապատասխան իրավասու պաշտոնատար անձին եւ պարզել իր կողմից փնտրվող տեղեկության ունենալու եւ այն տարամադրելու հնարավորության մասին).
- 3) տեղեկություններ, որոնցով անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը: Համաձայն Օրենքի 7-րդ հոդվածի 1-ի մասի տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում է իր կողմից տեղեկություն տալու կարգ եւ այն հրապարակում է՝ փակցնելով իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Սակայն, տեղեկություն փնտրող անձը միշտ չէ, որ հնարավորություն ունի այցելել տեղեկատվություն տնօրինողի գտնվելու վայր եւ ծանոթանալ

72. Տես՝ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությունը:

այդ կարգին (օրինակ՝ տեղեկություն փնտրողը բնակվում է Երեւանից դուրս, իսկ իր փնտրած տեղեկությունը տնօրինում է Երեւանում տեղակայված որեւէ նախարարություն), ուստի օգտվելով պարզաբանման հնարավորությունից տեղեկություն փնտրողը կարող է նախապես պարզել իր փնտրած տեղեկության առկայությունը եւ խուսափել անհարկի նամակագրությունից:

**6.** Բանավոր հարցմամբ պահանջված՝ Օրենքի մեկնաբանվող հոդվածի 5-րդ մասում թվարկված տեղեկությունները դիմողին են տրամադրվում բանավոր՝ անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Տեղեկատվություն տնօրինողն իրավունք ունի չպատասխանել բանավոր հարցմանը, եթե՝

- հարցմամբ դիմողը չի ներկայանում՝ հայտնելով իր անունը եւ ազգանունը.
- բանավոր հարցմամբ պահանջվող տեղեկությունը չի վերաբերվում մեկնաբանվող հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերում թվարկված տեղեկություններին:

**7.** Մեկնաբանվող մասում սահմանված են այն ժամկետները, երբ տրվում է գրավոր հարցման պատասխանը, այսինքն՝ տրվում է գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկությունը կամ դիմողին տեղեկացվում է այդ տեղեկությունը տրամադրելու ժամկետի մասին:

Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը՝

- հրապարակված չէ, այսինքն մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, ինտերնետով, ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրության համար մատչելի դարձված չէ, ապա տեղեկության պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
- հարապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի

տի մասին տեղեկությունը, օրինակ՝ տեղեկությունը հրապարակած թերթի, տեղեկագրի եւ այլնի անվանումը, համարը, տարին ամիսը եւ ամսաթիվը, դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում:

Հաճախ լինում են այնպիսի դեպքեր, երբ տեղեկատվություն տնօրինողն ունենում է հարցմամբ պահանջվող տեղեկության վերաբերյալ տվյալները, սակայն դրանք մեկ մյուսական կրիչի վրա արձանագրված չլինելու կամ ճշգրտման կարիք առաջանալու կամ պատճենահանման աշխատանքներ կատարելու կամ այլ օբյեկտիվ պատճառներով տեղեկատվություն տնօրինողն ի վիճակի չի լինում այդ տվյալները (տեղեկությունը) 5-օրյա ժամկետում տրամադրել հարցմամբ դիմողին: Այդ դեպքում, տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Եթե տեղեկատվություն տնօրինողն ունի տեղեկությունը, սակայն նա վերը նշված ժամկետներում չի տրամադրում այն, ապա նա կարող է օրենքով սահմանված կարգով ենթարկվել պատասխանատվության:

Օրենքում սահմանված ժամկետները հաշվարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ եւ 84-րդ հոդվածների՝

- ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա եւ ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:
- Եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

- Եթե ժամկետը սահմանվել է որեւէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչեւ ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի հիմնարկում կամ կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ կազմակերպությունում կամ հիմնարկում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները:

- Մինչեւ ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված փաստաթղթերը համարվում են ժամկետին տրված:

**8.** Տեղեկատվության տնօրինողը պարտավոր է հարցմամբ դիմողին տեղեկությունը տրամադրել դիմողի կողմից՝ հարցման մեջ նշված նյութական կրիչով: Սակայն հնարավոր է, որ տեղեկությունը փնտրողը հարցման մեջ նշած չլինի նյութական կրիչի տեսակը: Այդ դեպքում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է ձեռնարկել ողջամիտ քայլեր պարզելու թե դիմողը վերը թվարկված, ո՞ր նյութական կրիչով է ցանկանում ստանալ տեղեկությունը (օրինակ՝ եթե հարցման մեջ նշված է դիմողի հեռախոսահամարը եւ (կամ) էլեկտրոնային հասցեն՝ զանգահարել կամ կապվել դիմողին եւ նրանից պարզել նյութական կրիչի տեսակը): Եթե դիմողը հարցման մեջ չի նշել իր հետ կապվելու տվյալները եւ (կամ) մեկնաբանվող հոդվածի 7-րդ մասում նշված ժամկետներում անհնար է կապվել նրա հետ, ապա տեղեկատվություն տնօրինողը կարող է հարցմամբ պահանջվող տեղեկությունը տրամադրել իր համար առավել ընդունելի նյութական կրիչով:

Ինչպես արդեն նշել ենք, նյութական կրիչները սպառիչ ձեւով թվարկված են «տեղեկություն» հասկացության սահմանման մեջ: Դրանցից կարելի է առանձնացնել հետևյալ 3 հիմնական խմբերը՝ տեքստա-

յին (փաստաթղթային), էլեկտրոնային եւ ձայնա-տեսաժապավենային կրիչները: Էլեկտրոնային կրիչներից առավել մատչելի են պնակիտը (դիսկետը), խտասկավառակ (լազերային (CD) դիսկը) եւ տեսակավառակ (DVD) դիսկը):

**9.** Մեկնաբանվող հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում, այսինքն՝ այն դեպքում, երբ գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, հարցմամբ դիմողը կարող է դիմել տեղեկատվություն տնօրինողին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, մասնավորապես՝ տեղեկատվություն տնօրինողի գտնվելու վայր մուտք գործելու եւ գտնվելու համար սահմանված կարգով, տեղում ծանոթանալ տեղեկությանը: Այս դեպքում հարցմամբ դիմողը պարտավոր է հետ վերցնել իր գրավոր հարցումը: Եթե դիմողը հետ չի վերցնում իր հարցումը, ապա միեւնույն է՝ տեղեկատվություն տնօրինողն իրավունք ունի դրան ընթացք չտալ եւ չպատասխանել:

**10.** Հաճախ լինում են դեպքեր, երբ անձն առանց նախապես պարզելու իր կողմից փնտրվող տեղեկությունը փաստացի տնօրինողին (օրինակ, մինչեւ գրավոր հարցմամբ տեղեկատվության տնօրինողին դիմելը՝ տեղեկության առկայությունը պարզելու նպատակով բանավոր հարցմամբ «հավանական» տեղեկատվություն տնօրինողին չի դիմել)՝ գրավոր հարցմամբ դիմում է այն տեղեկատվություն տնօրինողին, որը չունի փնտրվող տեղեկությունը կամ, թեւ այն ունի այն, սակայն դրա տրամադրումը նրա լիազորությունների շրջանակից դուրս է: Այս դեպքում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում հարցմամբ դիմողին գրավոր տեղեկացնել, որ փնտրվող տեղեկությունը չունի կամ իրավասու չէ տրամադրել դիմողին, իսկ հնարավորության դեպքում՝ նաեւ հարցմամբ դիմողին տրամադրել այն տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝

արխիվի) գտնվելու վայրը (տվյալ դեպքում՝ հասցեն), որն ունի փնտրվող տեղեկությունը:

**11.** Լինում են նաև դեպքեր, երբ անձը կրկին՝ առանց բանավոր հարցմամբ պարզելու իր կողմից փնտրվող տեղեկությունն ամբողջ ծավալով փաստացի տնօրինողին՝ գրավոր հարցմամբ դիմում է այն տեղեկատվություն տնօրինողին, որն ամբողջ ծավալով չի տնօրինում փնտրվող տեղեկությունը: Այդ դեպքում գրավոր հարցումը ստացած տեղեկատվություն տնօրինողը

պարտավոր է, մեկնաբանվող հոդվածի հոդված 7-րդ մասով սահմանված ժամկետներում (հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա կամ անհրաժեշտության դեպքում՝ 30-օրյա ժամկետում) դիմողին տրամադրել տեղեկության բաղկացուցիչ մասը կազմող տվյալների այն մասը, որը նա ունի, իսկ հնարավորության դեպքում՝ գրավոր հարցման պատասխանում նշել նաև այն տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

## **ՀՈՂԱԾ 10**

### **ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱՂՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**1.** Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

**2.** Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետեւյալ դեպքերում.

- 1) բանավոր հարցումներին պատասխանելիս.
- 2) մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս.
- 3) տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս.
- 4) սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս.
- 5) սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով եւ 9-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս.
- 6) տեղեկության տրամադրումը մերժելիս:

**3.** Հանրային նշանակության կազմակերպություններն ինքնուրույն են որոշում տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը, որը չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսերը:

**4.** Ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն:

1. Մեկնաբանվող հոդվածով տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկությունների կամ դրանց կրկնօրինակների (պատճենների) տրամադրման համար, ըստ էության, սահմանված է երկու ռեժիմ՝

- պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց համար.
- հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց համար:

Բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները եւ դրանց պաշտոնատար անձինք տեղեկությունը տրամադրում են վերը նշված առաջին կամ երկրորդ ռեժիմով, օրինակ՝ պետական ոչ ատելտրային կազմակերպությունները տեղեկությունը տրամադրում են առաջին ռեժիմով, իսկ այն բաժնետիրական ընկերությունները, որոնցում պետությունը մասնաբաժին չունի եւ այլ «մասնավոր» կազմակերպությունները՝ երկրորդ ռեժիմով:

Մեկնաբանվող մասից պարզ է դառնում նաեւ, որ առաջին ռեժիմը՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանվում է ՀՀ կառավարության որոշմամբ, որը դեռեւս ընդունված չէ: Ինչպես արդեն նշել ենք, համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի՝ եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ նորմի մասով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտ-

նելու պահից: Ուստի այս դեպքում եւս կարող ենք արձանագրել, որ մեկնաբանվող հոդվածը ներկայումս չի գործում եւ կարող է գործել միայն ՀՀ կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու պահից: Այդուամենայնիվ, մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման համար գանձում չի կարող կատարվել<sup>73</sup>:

Վերոգրյալ բացթողումը վերացնելու նապատակով Նախագծերի փաթեթում ներառված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 9-րդ հոդվածով առաջարկվում է մեկնաբանվող մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Պետական մարմինների եւ պետական հիմնարկների կողմից տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) տրամադրելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների եւ համայնքային հիմնարկների կողմից տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) տրամադրելու համար գանձվում է տեղական տուրք «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) տրամադրելու համար կարող են գանձել վճարներ, որոնց չափերը չեն կարող լինել ավելի, քան համարժեք տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) ստանալու համար սահմանված պետական կամ տեղական տուրքի չափը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

73. Տես՝ Օրենքի 10 հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությունը:

Եթե պահանջվող տեղեկությունը ՀՀ արխիվային կամ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանվող այլ հավաքածուի հազվագյուտ եւ հատկապես արժեքավոր փաստաթղթի կամ այլ մշակութային արժեքի վերաբերյալ է, ապա տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) տրամադրելու համար կարող են օրենսդրությամբ սահմանված կարգով գանձվել վճարներ, որոնք գերազանցում են համարժեք տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) ստանալու համար սահմանված պետական կամ տեղական տուրքի չափը:»

Բացի այդ Նախագծերի փաթեթում ներառված՝

- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է տեղեկության տրամադրման համար սահմանել պետական տուրքի հետեւյալ չափերը՝

- 1) 10 էջը գերազանցող տպագրված կամ պատճենահանված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի (1000 դրամ) մեկ եւ կես տոկոսի չափով.
- 2) յուրաքանչյուր էլեկտրոնային կրիչի (պնակիտ, խտասկավառակ, տեսասկավառակ) համար՝ բազային տուրքի 30 տոկոսի չափով.
- 3) յուրաքանչյուր ձայներիզի համար՝ բազային տուրքի 30 տոկոսի չափով.
- 4) յուրաքանչյուր տեսաերիզի համար՝ բազային տուրքի չափով:

- «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» առաջարկվում է տեղեկության տրամադրման համար սահմանել տե-

ղական տուրքի հետեւյալ չափերը՝

- 1) 10 էջը գերազանցող տպագրված կամ պատճենահանված յուրաքանչյուր էջի համար՝ 15 դրամ.
- 2) յուրաքանչյուր էլեկտրոնային կրիչի (պնակիտ, խտասկավառակ, տեսասկավառակ) համար՝ մինչեւ 300 դրամ.
- 3) յուրաքանչյուր ձայներիզի համար՝ մինչեւ 300 դրամ.
- 4) յուրաքանչյուր տեսաերիզի համար՝ մինչեւ 1000 դրամ:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ, որ ներկայումս կան նաեւ այլ դեպքեր, երբ տեղեկությունների տրամադրման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ 1997թ. դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքով սահմանված են պետական տուրքեր: Այդ դեպքերն են՝

- տեխնիկայի մակարդակի մասին տեղեկատվություն տրամադրելու համար - բազային տուրքի (ներկայումս՝ 1000 դրամ) 100-ապատիկի չափով<sup>74</sup>.
- արտոնագրային տեղեկատվության յուրաքանչյուր էջի համար - բազային տուրքի 0.2-ապատիկի չափով<sup>75</sup>.
- արդյունաբերական սեփականության օբյեկտների՝ Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյաններից քաղվածքներ տալու, ինչպես նաեւ հայտի մասին տեղեկություններ տրամադրելու համար (յուրաքանչյուր օբյեկտի համար) - բազային տուրքի 2-ապատիկի չափով<sup>76</sup>.
- դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար - բա-

74. Տես՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի (գյուտերի իրավական պահպանության գծով) «լա» ենթակետ:

75. Տես՝ նույնի 18-րդ հոդվածի 8-րդ կետի (այլ գործողությունների գծով) «ա» ենթակետ:

76. Տես՝ նույնի հոդվածի 8-րդ կետի (այլ գործողությունների գծով) «բ» ենթակետ:

զային տուրքի 50 տոկոսի եւ պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով<sup>77</sup>.

- **գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները** գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար - բազային տուրքի 20 տոկոսի եւ պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 10 տոկոսի չափով<sup>78</sup>.
- **դատական նիստի համակարգչային ձայնագրման կրիչի բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար** պատրաստված յուրաքանչյուր կրիչի (կոմպակտ լազերային սկավառակի) համար՝ բազային տուրքի չափով<sup>79</sup>:
- **օտարերկրյա պետություններից քաղաքացիների դիմումի համաձայն՝ նրանց վերաբերյալ քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականի կրկնօրինակ կամ տեղեկանք ստանալու համար** - բազային տուրքի կրկնապատիկի չափով<sup>80</sup>.
- **լիցենզիաների գրանցամատյանից այլ անձանց տեղեկությունների տրամադրման համար** - բազային տուրքի եռապատիկի չափով<sup>81</sup>.
- **իրավաբանական անձանց պետական միասնական եւ պետական գրանցամատյաններից մեկ սուբյեկտի վերաբերյալ պետական ռեգիստրում պահվող եւ ինտերնետային կայքում տե-**

**ղադրված ամբողջական տեղեկությունների,** ինչպես նաեւ իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենների տրամադրման համար - բազային տուրքի եռապատիկի չափով<sup>82</sup>.

- **սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների պետական միասնական եւ պետական գրանցամատյաններից մեկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների վերաբերյալ պետական ռեգիստրում պահվող տեղեկությունների տրամադրման համար** - բազային տուրքի չափով<sup>83</sup>.
- **իրավական ակտերի հաշվառման մատյանից յուրաքանչյուր իրավական ակտի վերաբերյալ տեղեկություններ տալու համար** - բազային տուրքի հիսուն տոկոսի չափով<sup>84</sup>:

Բացի այդ, համաձայն «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ 1997թ.-ի դեկտեմբերի 27-ի ՀՕ-185 օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մասի՝ համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ եւ կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ, որի վերին սահմանները՝ ըստ նույն հոդվածի 11-րդ մասի, քաղաքային համայնքներում կարող են լինել 1.5, իսկ Երեւան քաղաքում՝ 1.75 անգամ ավելի: Ըստ այդմ, Երեւան քաղաքի արխիվից փաստաթղթերի պատճեններ եւ կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը 2010 թվականի համար

77. Տես՝ նույնի 9-րդ հոդվածի 11-րդ կետ:

78. Տես՝ նույնի 9-րդ հոդվածի 12-րդ կետ:

79. Տես՝ նույնի 9-րդ հոդվածի 13-րդ կետ:

80. Տես՝ նույնի 12-րդ հոդվածի 11-րդ կետ:

81. Տես՝ նույնի 19-րդ հոդվածի 23-րդ կետ:

82. Տես՝ նույնի 19-րդ հոդվածի 32-րդ կետ:

83. Տես՝ նույնի 19-րդ հոդվածի 32.1-րդ կետ:

84. Տես՝ նույնի 19-րդ հոդվածի 41-րդ կետ:

սահմանված է 1000 դրամ<sup>85</sup>:

**2.** Թեև, ինչպես նշել ենք, մեկնաբանվող հոդվածի առաջի մասը դեռևս չի գործում, սակայն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման դեպքում գանձում չի կարող կատարվել՝

բանավոր հարցումներին պատասխանելիս.

- մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս.
- տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս.
- տեղեկության տրամադրումը մերժելիս.
- Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված՝ անհապաղ հրապարակման կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացման ենթակա տեղեկությունները տրամադրելիս.
- Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետում նախատեսված տեղեկությունների տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկությունները տրամադրելիս (երբ գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք եւ այդ մասին տեղեկատվություն տնօրինողը գրավոր տեղեկացնում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը).
- Օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս (երբ տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա

տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է եւ նա այդ մասին գրավոր տեղեկացնում է դիմողին եւ (կամ) նրան տրամադրում է այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը).

**3.** Հոդվածի առաջին մասի մեկնաբանությունում նշված երկրորդ ռեժիմը, ըստ էության, կայանում է նրանում, որ հանրային նշանակության կազմակերպություններն ինքնուրույն են որոշում տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը, որը սակայն չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսերը, այսինքն հանրային նշանակության կազմակերպությունները չեն կարող տեղեկության տրամադրման համար այնպիսի գին սահմանել, որը գերազանցում է ծախսերը եւ շահութաբեր է այդ կազմակերպության համար:

«Շահութահարկի մասին» ՀՀ 1997թ. սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկության տրամադրման ծախս կարող են համարվել անմիջականորեն եւ բացառապես տեղեկության տրամադրման համար անհրաժեշտ այլ ծախսերը, մասնավորապես՝ նյութական ծախսերը (օրինակ՝ նյութական կրիչի արժեքը, պատճենահանման համար կատարված նյութական ծախսերը եւ այլն), ինչպես նաեւ տեղեկության տրամադրման համար կատարված աշխատանքի համար վարձատրության եւ դրան հավասարեցված այլ վճարումները եւ այլն:

**4.** Ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է Օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն:

85. Տես՝ «Երեւան քաղաքում տեղական տուրքերի եւ վճարների 2010 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» ՀՀ Երեւան քաղաքի ավագանու 2009թ. դեկտեմբերի 2-ի N 46-Ն որոշման 11-րդ կետ:

## ՀՈՂԱԾ 11

### ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԴԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Տեղեկության տրամադրումը մերժվում է սույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում կամ այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում:

2. Տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցմանը, եթե տվյալ պահին դա խոչընդոտում է տեղեկատվություն տնօրինողի հիմնական պարտականությունների կատարմանը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

3. Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը:

4. Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան:

1. Մեկնաբանվող հոդվածում սպառիչ ձեռով սահմանված են տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը եւ կարգը, ըստ որի՝ տեղեկության տրամադրումը մերժվում է, եթե՝

- 1) տեղեկությունը պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք (Օրենքի 8-րդ հոդված)։
- 2) տեղեկության տրամադրումը խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը (Օրենքի 8-րդ հոդված)։
- 3) տեղեկությունը պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները (Օրենքի 8-րդ հոդված)։
- 4) տեղեկության տրամադրմամբ բացահայտվում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք) (Օրենքի 8-րդ հոդված)։

5) տեղեկության տրամադրումը խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները (Օրենքի 8-րդ հոդված)։

6) տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չի վճարվել:

Տեղեկության տրամադրումը մերժվում է ամբողջությամբ կամ միայն այն մասով, որը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման<sup>86</sup>: Մերժումը բոլոր դեպքերում պետք է լինի գրավոր:

2. Եթե բանավոր հարցմանը պատասխանելու համար տեղեկատվություն տնօրինողը պետք է շեղվի իր հիմնական պարտականությունների կատարումից եւ ըստ էության թերանա դրանք կատարելուց, ապա նա կարող է չպատասխանել բանավոր հարցմանը, բացառությամբ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն դեպքերի, երբ պահանջվող տեղեկությունը հայտնելը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը:

86. Մանրամասները տես՝ Օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մաս:

3. Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը, այսինքն օրենքի այն նորմը, որի համաձայն՝

- 1) տեղեկությունը պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
- 2) տեղեկության տրամադրումը խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.
- 3) տեղեկությունը պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
- 4) տեղեկության տրամադրմամբ բացահայտվում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
- 5) տեղեկության տրամադրումը խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ միայն Օրենքի 8-րդ հոդվածին հղում կատարելով վերը թվարկված կետերով նախատեսված դեպքերում տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում համարվել է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.

րելով վերը թվարկված կետերով նախատեսված դեպքերում տեղեկության տրամադրումը մերժելը բավարար չի կարող համարվել: Քանի որ այդ կետերում թվարկված դեպքերում համապատասխան բնագավառի իրավահարաբերությունները կարգավորված են ՀՀ այլ օրենքներով, ուստի տեղեկատվություն տնօրինող պարտավոր է հղում կատարել այն օրենքին, որի համաձայն տեղեկության տրամադրումը ենթակա է մերժման (օրինակ՝ պետական կամ ծառայողական գաղտնիքների դեպքում՝ անհրաժեշտ է հղում կատարել «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համապատասխան մասին (հոդվածին, մասին, կետին): Տեղեկության տրամադրման համար սահմանված զուևարը չվճարելու դեպքում մերժման հիմքը Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասն է, ինչպես նաեւ այն օրենքի համապատասխան նորմը, որով սահմանվել է տեղեկության տրամադրման վճար:

Տեղեկության տրամադրումը մերժելիս տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է նաեւ նշել բողոքարկման կարգը՝ վերադասության կամ դատական կարգով բողոքարկումը (մանրամասները՝ տես հաջորդ մասի մեկնաբանություններում):

**4. Օրենքի իմաստով տեղեկատվություն տնօրինող հանդիսացող վարչական մարմնի<sup>87</sup> կողմից բանավոր կամ**

87. Վարչական մարմիններ են՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական եւ տարածքային կառավարման, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինները՝

ա) ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ ՀՀ նախարարություններ եւ Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ.

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ.

գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի եւ համայնքի ղեկավար, քաղաքապետ՝ քաղաքային համայնքում, գյուղապետ՝ գյուղական համայնքում:

Եթե վերը թվարկված մարմիններից բացի, վարչարարություն են իրականացնում (վարչարարությունը՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաեւ գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետեւանքներ) պետական այլ մարմիններ, ապա օրենքի իմաստով՝ դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ (տես՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս):

գրավոր<sup>88</sup> հարցմամբ տեղեկության տրամադրումը մերժելու կամ ոչ հավաստի (լիարժեք) տեղեկություն տրամադրելու մասին որոշումը (տվյալ դեպքում՝ այդպիսի որոշում է հանդիսանում հարցմամբ դիմողին տրված պատասխանը), ինչպես նաև Օրենքով սահմանված կարգով տեղեկությունները չհրապարակելը (այսինքն՝ անգործությունը) **վարչական ակտեր են<sup>89</sup>**, որոնք «վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ 2004թ. փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի 70-րդ հոդվածի համաձայն կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

Վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել ակտն ընդունած՝

- 1) վարչական մարմին.
- 2) վարչական մարմնի վերադաս վարչական մարմին:

Եթե ակտը բողոքարկվել է ակտն ընդունած վարչական մարմին եւ (կամ) բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմին, ապա բողոքը ենթակա է քննարկման բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմնում: Այդ դեպքում բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնում բողոքի առնչությամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Եթե ակտը բողոքարկվել է վարչական եւ դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

Անհարժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ բանավոր վարչական ակտը (տվյալ դեպքում՝ բանավոր հարցումը մերժելու մասին տեղեկատվություն տնօրինողի բանավոր պատասխանը) մինչև բողոքարկելը նպատակահարմար է ձեւակերպել գրավոր՝ օգտվելով օրենքով նախատեսված հնարավորությունից<sup>90</sup>:

**Վարչական կարգով բողոքը ներկայացնելու առանձնահատկություններից** կարելի է նշել՝

- 1) Վարչական բողոքը կարող է բերվել՝
  - վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում.
  - վարչական մարմնի կողմից գործողություն կատարելու օրվանից մեկ ամսվա ընթացքում.
  - վարչական մարմնի կողմից անգործություն ցուցաբերելու օրվանից 3 ամսվա ընթացքում.
  - գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չլինելու

88. Վարչական ակտը, որպես կանոն, ընդունվում է գրավոր՝ որոշման, հրամանի, կարգադրության կամ օրենքով նախատեսված այլ ձևով: Օրենքով նախատեսված դեպքերում վարչական ակտը կարող է ընդունվել բանավոր: (տես՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասեր):

89. Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, եւ ուղղված է անձանց համար իրավունքներ եւ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն (տես՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մաս):

90. Ակտի հասցեատիրոջ բանավոր կամ գրավոր պահանջով, ենթակա է հետագա գրավոր ձեւակերպման, ինչպես օրենքով նախատեսված դեպքերում, այնպես էլ այն դեպքում, երբ ակտի հասցեատերն ունի արդարացված շահ (տես՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մաս):

դեպքում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում<sup>91</sup>.

**2) վարչական բողոքը պետք է պարունակի՝**

- այն վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է բողոքը.
- բողոք բերող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, նրա հասցեն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա անունից բողոք բերող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը.
- բողոքարկման առարկան.
- բողոք բերողի պահանջը.
- բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.
- բողոքը կազմելու տարին, ամիսը եւ ամսաթիվը.
- բողոք բերող անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից բողոք բերող անձի ստորագրությունը եւ իրավաբանական անձի կնիքը<sup>92</sup>:

Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական եւ նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց **դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը**

սահմանված է ՀՀ 2007թ. նոյեմբերի 28-ի վարչական դատավարության օրենսգրքով, ըստ որի՝

**1)** յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները<sup>93</sup> (այդ թվում՝ տեղեկատվության ազատության իրավունքը).

**2)** վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա<sup>94</sup>.

**3)** վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող<sup>95</sup> վարչական ակտը<sup>96</sup>.

**4)** գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը<sup>97</sup>.

**5)** հայցը դատարան կարող է ներկայացվել՝

- վիճարկման հայցի դեպքում երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի

91. Տես՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդված:

92. Տես՝ նույնի 72-րդ հոդված:

93. Տես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մաս:

94. Տես՝ նույնի 64-րդ հոդված:

95. Միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որեւէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը (Տես՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետ:):

96. Տես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի:

97. Տես՝ նույնի 67-րդ հոդված:

մեջ մտնելու պահից.

- գործողության կատարման հայցի դեպքում՝ մեկամսյա ժամկետում՝ վարչական մարմնի կողմից այն մերժելու պահից, եռամսյա ժամկետում՝ այն պահից, երբ վարչական մարմնին դիմում է ներկայացվել պահանջվող գործողությունը կատարելու վերաբերյալ:

Այն դեպքերում, երբ վարչական մարմնի ընդունած ակտը կամ ակտը չընդունելը կամ գործողություն կատարելը կամ չկատարելը բողոքարկվել է վարչական կարգով, սահմանված ժամկետները հաշվարկվում են բողոքի քննության համար սահմանված ժամկետի ավարտից հետո<sup>98</sup>:

**6) հայցադիմումը ձեւակերպվում է գրավոր եւ պետք է մասնավորապես պարունակի՝**

- նշում այն մասին, որ հայցը ներկայացվում է վարչական դատարան.
- հայցվորի անունը, ազգանունը (անվանումը), բնակության (գտնվելու) վայրը, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է բնակության վայրից), այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձնական տվյալները, հայցվոր իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը եւ պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը, նրա ներկայացուցչի անունը, ազգանունը, հասցեն.
- պատասխանողի անվանումը, գտնվելու վայրը, իսկ այն դեպքերում.

- հայցի էության հակիրճ նկարագրությունը.

- այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը.

- հայցվորի պահանջի իրավական հիմքերը.

- հայցվորի պահանջը.

- տեղեկություններ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վերադասության կարգով բողոքարկելու վերաբերյալ.

- այն ապացույցների ցանկը, որոնք հաստատում են հայցվորի պնդած փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե ինչ փաստի հաստատմանն է այն ուղղված.

- հայցադիմումը ներկայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը<sup>99</sup>:

Վարչական մարմին չհանդիսացող մյուս տեղեկատվություն տնօրինողների կողմից տեղեկության տրամադրում մերժելու, ոչ լիարժեք կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելու, ինչպես նաեւ տեղեկությունը չհրապարակելու հետ կապված վեճերը լուծվում են ՀՀ1998թ. հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

98. Տես՝ նույնի 71-րդ հոդվածի:

99. Տես՝ նույնի 72-րդ հոդվածի:

---

## ՀՈՂԱԾ 12

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՐՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՆՕՐԻՆՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինող պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

- 1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը եւ հրապարակայնությունը.
- 2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը.
- 3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն.
- 4) սահմանել իր կողմից բանավոր եւ (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը.
- 5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:

---

Մեկնաբանվող հոդվածում սահմանված են տեղեկատվություն տնօրինողի հիմնական պարտականությունները, որոնց բովանդակությունը եւ իրականացման կարգն ամրագրված են Օրենքի մյուս հոդվածներում:

Հողվածով նախատեսված է նաեւ, որ տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին: Որի պարտականությունները սահմանված են Օրենքի 13-րդ հոդվածում:

## ՀՈՂԱԾ 13

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՐԿՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԸ

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը:

2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձն օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը.

2) տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը.

3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները:

1. Եթե տեղեկատվություն տնօրինողը չի նշանակել Օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ, ապա տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձ է համարվում տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը: Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կամ այդ պաշտոնում հանդես գալիս տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը՝

1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը (այ-

սինքն՝ օրենքի 12-րդ հոդվածում նշված պարտականությունների իրականացումը).

2) տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը, այսինքն՝ բանավոր հարցմամբ տեղեկությունը փնտրողին՝ անհրաժեշտության դեպքում մատչելի ձևով տեղեկացնում է Օրենքի եւ այլ իրավական ակտեր համապատասխան դրույթների վերաբերյալ.

3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները:

## ՀՈՂԱԾ 14

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

2. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն:

1. Բացառությամբ Օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը կամ Օրենքով սահմանված կարգի այլ խախտումները մասնավորապես հետևյալ դեպքերում առաջացնում են պատասխանատվություն՝

- **Անձին տեղեկություն ներկայացնելուց հրաժարվելը.**

անձին՝ անմիջականորեն նրա իրավունքներն ու օրինական շահերը շոշափող եւ սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին եւ օրինական շահերին վնաս է պատճառել - պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով<sup>100</sup>:

- **Տեղեկություն տալու պարտականությունը չկատարելը.**

օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների

պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը - առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով: Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում - առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով<sup>101</sup>:

- **Մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը.**

մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգ ստեղծող դեպքերի, իրադարձությունների, փաստերի կամ երեւոյթների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը կամ աղավաղելը, որը կատարվել է բնակչությանն այդպիսի տեղեկությամբ ապահովելու պարտականություն ունեցող անձի կողմից - պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

100. Տես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդված:

101. Տես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդված:

Նույն արարքները, որոնք՝

- 1) կատարվել են պաշտոնական դիրքն օգտագործելով,
- 2) անզգուշությամբ վնաս են պատճառել մարդու առողջությանը կամ առաջացրել են մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ

- պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև երեք տարի ժամկետով կամ առանց դրա<sup>102</sup>:

● **Շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելը կամ դրանք դիտավորյալ աղավաղելը.**

պաշտոնատար անձի կողմից բնակչության մարդկանց կյանքի եւ առողջության համար վտանգավոր ռադիոակտիվ, քիմիական, մանրէաբանական կամ այլ կենսաբանական նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ այլ վտանգավոր տեղեկություններ թաքցնելը կամ այդպիսի աղտոտման վերաբերյալ դիտավորությամբ ակնհայտ կեղծ տեղեկություններ հաղորդելը - պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով: Նույն արարքը, որն անզգուշությամբ պատճառել է մարդու մահ, մարդկանց զանգվածային հիվանդություններ, կենդանիների զանգվածային ոչնչացում կամ այլ ծանր

հետևանքներ - պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով<sup>103</sup>:

● **Պաշտոնական կեղծիքը.**

պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր կազմելը կամ հանձնելը - պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Նույն արարքը, որը կատարվել է պետական պատասխանատու պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձի կողմից - պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով<sup>104</sup>:

● **Վթարի փաստը թաքցնելը, վթարի վերաբերյալ տեղեկությունների հաղորդման կարգը խախտելը, ճառագայթային իրավիճակի վերաբերյալ սխալ տեղեկություններ հաղորդելը.**

միջուկային տեղակայանքում, ռադիոակտիվ թափոնների տեղակայանքում, իո-

102. Տես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 278-րդ հոդված:

103. Տես՝ նույնի 282-րդ հոդված:

104. Տես՝ նույնի 314-րդ հոդված:

նացնող ճառագայթման աղբյուրում վթարի փաստը թաքցնելը կամ վթարի վերաբերյալ տեղեկությունների հաղորդման կարգը խախտելը, շրջակա միջավայրի ճառագայթային աղտոտվածությանը վերաբերող տեղեկությունները թաքցնելը, իրավասու կազմակերպություններին ճառագայթային իրավիճակի վերաբերյալ սխալ տեղեկություններ հաղորդելը - առաջացնում են տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով<sup>105</sup>:

● **Միջուկային եւ ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկությունները թաքցնելը կամ աղավաղելը.**

ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում միջուկային եւ ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկությունները թաքցնելը կամ աղավաղելը - առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև երեսնապատիկի չափով<sup>106</sup>:

Եթե տեղեկության տրամադրումն արգելված է կամ սահմանափակված է օրենքով, ապա տեղեկություն տրամադրողը, մասնավորապես հետևյալ դեպքերում ենթակա է պատասխանատվության`

● **Անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը** - մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելը կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործու-

թյուններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը կամ հավաքելը կամ պահելը, եթե դրանք նախատեսված չեն օրենքով) - պատժվում է տուգանքով` նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով` մեկից երկու ամիս ժամկետով<sup>107</sup>:

● **Բժշկական գաղտնիքը հրապարակելը.**

առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելը - պատժվում է տուգանքով` նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով` երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով` մեկից երկու ամիս ժամկետով: Նշված գործողությունները, որոնք անզուգույնությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ -պատժվում են` ազատազրկմամբ` առավելագույնը չորս տարի ժամկետով` որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով` առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա<sup>108</sup>:

● **Պետական գաղտնիք հրապարակելը.**

պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ դիտավորությամբ հրապարակելն այն անձի կողմից, ով պետական գաղտնիքի հետ ծանոթանալու իրավունք ուներ, եւ ում դա վստահված է եղել կամ հայտնի է դարձել ծառայության բերմամբ,

105. Տես` Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 975-րդ հոդված:

106. Տես` նույնի 976-րդ հոդված:

107. Տես` ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդված:

108. Տես` նույնի 145-րդ հոդված:

եթե բացակայում են պետական դավաճանության հատկանիշները - պատժվում է կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Պետական գաղտնիքն անզուշուրջամբ հրապարակելը - պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Նշված արարքները, որոնք անզուշուրջամբ առաջացրել են ծանր հետեւանքներ - պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով<sup>109</sup>:

- **Առետրային, ապահովագրական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկություն ապօրինի հավաքելը կամ հրապարակելը.**

փաստաթղթեր հափշտակելու, առետրային, ապահովագրական կամ բանկային գաղտնիք իմացող անձանց, նրանց մերձավորին կաշառելու կամ սպառնալիքի, կապի միջոցներ որսալու, համակարգչային կամ ծրագրային համակարգ կամ ցանց ապօրինի թափանցելու, հատուկ տեխնիկական միջոցներ օգտագործելու ճանապարհով, ինչպես նաև այլ ապօրինի եղանակներով հրապարակելու կամ օգտագործելու նպատակով առետրային, ապա-

հովագրական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ հավաքելը - պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Առետրային, ապահովագրական կամ բանկային գաղտնիքն առանց դրա տիրապետողի համաձայնության ապօրինի հրապարակելը կամ օգտագործելն այն անձի կողմից, ում այդ գաղտնիքը հայտնի է մասնագիտական կամ ծառայողական գործունեության հետ կապված, որը կատարվել է շահադիտական կամ այլ անձնական դրդումներով եւ խոշոր վնաս է պատճառել առետրային, ապահովագրական կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը - պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա<sup>110</sup>:

- **Հեղինակային եւ հարակից իրավունքները խախտելը.**

հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ հեղինակությունը յուրացնելը, եթե այդ արարքը խոշոր չափի<sup>111</sup> վնաս է պատճառել - պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը

109. Տես՝ նույնի 306-րդ հոդված:

110. Տես՝ նույնի 199-րդ հոդված:

111. Խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը) (տես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդված)

112. Տես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդված:

երկու տարի ժամկետով<sup>112</sup>:

● **Վարկային պատմություն եւ վարկային տեղեկատվություն ապօրինի ստանալը, օգտագործելը կամ հրապարակելը.**

առանց վարկային տեղեկատվության սուբյեկտի համաձայնության վարկային պատմություն ապօրինի ստանալը, վարկային բյուրոյի տվյալների բազա ապօրինի թափանցելը կամ վարկային պատմությունը կամ վարկային բյուրոյում առկա վարկային տեղեկատվությունն ապօրինի օգտագործելը կամ հրապարակելը - պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Առանց վարկային տեղեկատվության սուբյեկտի համաձայնության այդ տեղեկատվությունն ապօրինի հրապարակելը կամ օգտագործելն այն անձի կողմից, ում այդ գաղտնիքը հայտնի է մասնագիտական կամ ծառայողական գործունեության հետ կապված, որը կատարվել է շահադիտական կամ այլ անձնական դրդումներով, եւ եթե անձանց, կազմակերպությունների կամ պետության իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս է պատճառվել - պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա<sup>113</sup>:

**2. Թեւեւ Վարչական իրավախախտումների**

վերաբերյալ ՀՀ օրենսգրքով կամ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկության հրապարակումն առաջացնում է վարչական կամ քրեական պատասխանատվություն, սակայն նույնիսկ այդ դեպքերում տեղեկության հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն, եթե՝

- 1) հրապարակված տեղեկություն վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին.
- 2) հրապարակված տեղեկությունը ներկայացնում է ՀՀ տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առեւտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.
- 3) տեղեկությունը չհրապարակելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա<sup>114</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն վերոգրյալ կետերում թվարկված տեղեկությունները չեն կարող դասվել պետական եւ ծառայողական գաղտնիքների շարքին: Այդուամենայնիվ գործնականում կարող են լինել դեպքեր, երբ տեղեկությունը պետական կամ ծառայողական գաղտնիքների շարքին դասելու լիազորություն ունեցող անձը՝

113. Տես՝ նույնի 199.1-րդ հոդված:

114. Տես՝ նաեւ Օրենքի 8-րդ հոդված 1-ին մասի մեկնաբանությունը:

- 1) տեղեկությունը պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասելով (համապատասխան իրավական ակտն ընդունելով) իրավիճակը ճիշտ (համարժեք) չի գնահատել եւ ըստ էության գաղտնիացրել է այնպիսի տեղեկություն, որի բովանդակությունը համապատասխանում է «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներին.
- 2) պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասելուց (համապատասխան իրավական ակտն ընդունելուց) հետո՝ իրավիճակի փոփոխության հետեւանքով այդ տեղեկությունը «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի ուժով այլեւս չի կարող համարվել պետա-

կան կամ ծառայողական գաղտնիք:

Թեւեւ, քննարկվող երկու դեպքերում էլ առկա է իրավական ակտ, որի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն, սակայն Օրենքի մեկնաբանվող մասի ուժով տվյալ տեղեկությունը հրապարակող անձը, մասնավորապես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածով<sup>115</sup> կամ ՀՀ քրեական օրենսգրքի 44-րդ հոդվածով<sup>116</sup> նախատեսված հիմքով ազատվում է պատասխանատվությունից, եթե նրա կողմից հրապարակված տեղեկությունն ունի մեկնաբանվող մասի երեք կետերից թեկուզ մեկում նշված բոլոր հատկանիշները:

---

115. Վարչական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը թեւեւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով կամ վարչական իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող այլ նորմատիվ ակտերով նախատեսված գործողություն է կատարել, սակայն գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ մի այնպիսի վտանգ վերացնելու համար, որը սպառնացել է պետական կամ հասարակական կարգին, սոցիալիստական սեփականությանը, քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին, կառավարման սահմանված կարգին, եթե այդ վտանգը տվյալ համգամաքներում չէր կարելի վերացնել այլ միջոցներով եւ եթե հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ ավելի նվազ կարեւորություն ունի:

116. Հանցագործություն չի համարվում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն տվյալ անձի կամ այլ անձանց կյանքին, առողջությանը, իրավունքներին եւ օրինական շահերին, հասարակության կամ պետության շահերին անմիջականորեն սպառնացող վտանգը վերացնելու համար, եթե այդ վտանգը չէր կարելի վերացնել այլ միջոցներով, եւ թույլ չի տրվել ծայրահեղ անհրաժեշտության սահմանների անցում:

**«ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՅ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ**

**Նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի սեպտեմբերի 23-ի ՀՕ-11-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասի «ինչպես նաև» բառերը հանել:

**Հոդված 2.** Օրենքի 3-րդ հոդվածում՝

- 1) չորրորդ պարբերության «ինչպես նաև» բառերը հանել.
- 2) հինգերորդ մասում «եւ կապի» բառերը փոխարինել «, կապի եւ զանգվածային լրատվության» բառերով.
- 3) վեցերորդ պարբերությունը «գրավոր» բառից հետո լրացնել «, էլեկտրոնային» բառով.
- 4) յոթերորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«իրապարակում՝ տեղեկությունը պաշտոնական տեղեկագրերով, զանգվածային լրատվության միջոցներով, ինտերնետով կամ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը եւ պատշաճ ձևով մատչելի դարձնելը:»:

**Հոդված 3.** Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն են՝

- 1) օրինականությունը.
- 2) հավաստիությունը.

- 3) խտրականության բացառումը.
- 4) տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը.
- 5) տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը.
- 6) հրապարակայնությունը:»:

**Հոդված 4.** Օրենքի 5-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 5.** Օրենքի 6-րդ հոդվածում՝

- 1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  
«2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի պաշտոնապես իրեն տրամադրված տեղեկությունն օգտագործելու, փոխանցելու եւ տարածելու ցանկացած օրինական նպատակով եւ միջոցով:».

- 2) 3-րդ մասում «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում» բառերը փոխարինել «միայն օրենքով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով» բառերով:

**Հոդված 6.** Օրենքի 7-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.
- 2) 3-րդ մասի առաջին պարբերությունում «գործունեությանն առնչվող» բառերը փոխարինել «տնօրինության տակ գտնվող» բառերով.

3) 3-րդ մասի 2-րդ կետը «բյուջեն» բառից հետո լրացնել «եւ դրա կատարման հաշվետվությունները» բառերով.

4) 3-րդ մասը 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 -րդ կետով.

«2.1) գործունեության ծրագրերը եւ դրանց կատարման հաշվետվությունները.»

5) 3-րդ մասի 4-րդ կետից հանել «հաստիքացուցակները, ինչպես նաեւ» բառերը.

6) 3-րդ մասի 9-րդ կետից հանել «բնագավառում գնագոյացման կարգը.» բառերը.

7) 3-րդ մասի 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

8) 3-րդ մասի 11-րդ կետում «վիճակագրական եւ ամփոփ տվյալները» բառերը փոխարինել «վիճակագրական ամփոփ տվյալները» բառերով.

9) 3-րդ մասի 12-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

10) 6-րդ մասի «, ինչպես նաեւ բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող» բառերը հանել, իսկ մասը «2-րդ.» բառից հետո լրացնել «2.1 -րդ.» բառով:

#### **Հոդված 7.** Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) Հայաստանի Հանրապետության արխիվային կամ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանվող այլ հավաքածուի հազվագյուտ եւ հատկապես արժեքավոր փաստաթղթի կամ այլ մշակութային արժեքի բնագիր կամ ոչ բավարար պահպանվածության վիճակ ունեցող փաստաթուղթ է:».

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) դիմողի վերաբերյալ է կամ այլ անձի վերաբերյալ է եւ դիմողն ունի տեղեկու-

թյունը հավաքելու, պահպանելու, օգտագործելու կամ տարածելու մասին այդ անձի համաձայնությունը:»:

**Հոդված 8.** Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 9. Տեղեկություն ստանալու կարգը

1. Տեղեկությունը փնտրելու եւ (կամ) ստանալու նպատակով տեղեկատվություն տնօրինողին կարող են ներկայացվել բանավոր, գրավոր եւ էլեկտրոնային հարցումներ:

Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:

2. Բանավոր հարցումը ներկայացվում է տեղեկատվություն տնօրինողի ղեկավար պաշտոնատար անձին կամ տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձին՝ նրա պաշտոնական պարտականությունների կատարման ժամանակ:

Գրավոր հարցումը ներկայացվում կամ փոստով ուղարկվում է տեղեկատվություն տնօրինողի գտնվելու վայրի հասցեով:

Էլեկտրոնային հարցումն ուղարկվում է տեղեկատվություն տնօրինողի ղեկավար պաշտոնատար անձի կամ տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձի ծառայողական էլեկտրոնային փոստի հասցեով:

Գրավոր եւ էլեկտրոնային հարցումները եւ դրանց պատասխանները գրանցվում են դիմումների գործավարության համար օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը:

4. Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ

ժամկետում:

Բանավոր հարցմամբ տեղեկությունը տրվում է, եթե՝

1) տեղեկությունը վերաբերում է տեղեկատվություն տնօրինողի հասցեին, ծառայողական հեռախոսահամարին, էլեկտրոնային փոստի հասցեին, համապատասխան բնագավառի համար պատասխանատու անձի տվյալներին.

2) տեղեկությունը վերաբերում է տեղեկատվություն տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայությանը.

3) տեղեկությամբ պարզաբանվում է տեղեկատվություն տնօրինողի կողմից քաղաքացիների ընդունելության կարգն ու պայմանները:

5. Գրավոր կամ էլեկտրոնային հարցումը պետք է պարունակի՝

1) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը.

2) դիմողի հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը) կամ այն հասցեն (այդ թվում՝ էլեկտրոնային), որով դիմողը պահանջում է ստանալ պատասխանը.

3) հարցումը ներկայացնելու ամսաթիվը.

4) պահանջվող տեղեկության մոտավոր նկարագրությունը կամ գրանցման տվյալները.

5) գրավոր հարցման դեպքում՝ հարցմամբ դիմողի ստորագրությունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը:

6) նյութական կրիչի տեսակը, որով դիմողը նախընտրում է ստանալ տեղեկությունը.

6. Գրավոր կամ էլեկտրոնային հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

1) եթե հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա կրկնօրինակը (պատճենը) դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

2) եթե հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

3) եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը.

4) եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել վճարում, ապա տեղեկությունը դիմողին է տրվում վճարման անդորրագիրը ներկայացվելուց հետո՝ 3-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով վճարման չափը եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

7. Գրավոր եւ էլեկտրոնային հարցման պատասխանները տրվում են հարցման մեջ նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցմանը՝ սույն օրենքով սահմանված ժամկետում պատասխանելու համար կամ եթե անհնար է պահանջվող տեղեկության նյութական կրիչից կրկնօրինակում (պատճենահանում) կատարել հարցման մեջ նշված նյութական կրիչին, ապա գրավոր կամ էլեկտրոնային հարցման պատասխանը տրվում է տեղեկություն տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:

8. Գրավոր պատասխանը դիմողին է տրվում տեղեկատվություն տնօրինողի ծեաթղթով՝ առձեռն կամ ուղարկվում է փոստով, իսկ էլեկտրոնային պատասխանը՝ ուղարկվում է տեղեկատվություն տնօրինողի էլեկտրոնային հասցեից՝ էլեկտրոնային փոստով, որը պարունակում է՝

1) տեղեկատվության տնօրինողի անվանումը.

2) հարցմանը պատասխանող անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, ծառայողական հեռախոսահամարը եւ էլեկտրոնային փոստի հասցեն.

3) պատասխանի ելքի ամսաթիվը եւ համարը.

4) հարցման մուտքի ամսաթիվը եւ համարը.

5) կցվող նյութի անվանումը, ամսաթիվը, գրանցման տվյալները, գրավոր պատասխանի դեպքում՝ նաեւ թերթերի քանակը, իսկ էլեկտրոնային պատասխանի դեպքում՝ նաեւ նիշքի (ֆայլի) անվանումը.

6) գրավոր պատասխանի դեպքում՝ հարցմանը պատասխանողի ստորագրությունը:

9. Եթե հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դիմողն իր ցանկությամբ կարող է տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը: Այդ դեպքում նրան տեղեկությունը նյութական կրիչով չի տրամադրվում:

10. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր կամ էլեկտրոնային հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի

(այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

11. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր կամ էլեկտրոնային հարցման պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

12. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում տարանջատման ենթակա մնացած մասի վերաբերյալ:

13. Գրավոր կամ էլեկտրոնային հարցմանը պատասխան չի տրվում, եթե՝

1) դա չի պարունակում սույն հոդվածի 5-րդ մասի 1-ից 5-րդ կետերում նշված բոլոր տվյալները .

2) սույն հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետով նախատեսված կարգով տեղեկացվելուց հետո՝ 10 օրվա ընթացքում տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չի վճարվում.

3) պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են.

4) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ գրավոր դիմումն է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

14. Ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի, հանգստյան օրերը հանվում են սույն օրենքով սահմանված ժամկետների հաշվարկից:»:

## Հողված 9. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պետական մարմինների եւ պետական հիմնարկների կողմից տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) տրամադրելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների եւ համայնքային հիմնարկների կողմից տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) տրամադրելու համար գանձվում է տեղական տուրք «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) տրամադրելու համար կարող են գանձել վճարներ, որոնց չափերը չեն կարող լինել ավելի, քան համարժեք տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) ստանալու համար սահմանված պետական կամ տեղական տուրքի չափը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Եթե պահանջվող տեղեկությունը Հայաստանի Հանրապետության արխիվային կամ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանվող այլ հավաքածուի հազվագյուտ եւ հատկապես արժեքավոր փաստաթղթի կամ այլ մշակութային արժեքի վերաբերյալ է, ապա տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) տրամադրելու համար կարող են օրենսդրությամբ սահմանված կարգով գանձվել վճարներ, որոնք գերազանցում են համարժեք տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) ստանալու համար սահմանված պետական կամ տեղական տուրքի չափը:»:

2) 2-րդ մասում «Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետևյալ դեպքերում» բառերը փոխարինել «Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ կողմից տեղեկությունների տրամադրման համար տուրք կամ այլ վճար չի գանձվում հետևյալ դեպքերում՝» բառերով.

3) 2-րդ մասի 4-րդ կետը «գրավոր» բառից հետո լրացնել «կամ էլեկտրոնային» բառերով.

4) 2-րդ մասը 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1 -րդ եւ 4.2 -րդ կետերով.

«4.1) Երբ տեղեկությունը վերաբերում է տվյալ դիմումատուի, ինչպես նաեւ դիմումատու ֆիզիկական անձի անձնական, ընտանեկան կամ նրա խնամարկյալի, հոգաբարձության տակ գտնվողի իրավունքներին, ազատություններին, պարտականություններին, իրավունքների սահմանափակումներին կամ պատասխանատվությանը.

4.2) Երբ տեղեկությունը վերաբերում է տվյալ տեղեկատվություն տնօրինողի պաշտոնատար անձանց անուններին, ազգանուններին, կրթությանը, մասնագիտությանը, ծառայողական հեռախոսահամարներին, ծառայողական էլեկտրոնային փոստի եւ ծառայողական այլ հասցեներին.»:

5) 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) սույն օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով եւ 9-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի, ինչպես նաեւ տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս.»:

**Չողված 10.** Օրենքի 11-րդ հողվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Չողված 11. Տեղեկության տրամադրումը մերժելու կարգը

1. Տեղեկատվություն տնօրինողի ղեկավար պաշտոնատար անձը կամ տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձը մերժում է բանավոր հարցմամբ տեղեկությունը տրամադրելը, եթե հարցմանը պատասխանելը տեղեկատվություն տնօրինողի իրավասության շրջանակներից դուրս է եւ (կամ) հարցումը չի համապատասխանում սույն օրենքի 9-րդ հողվածի 2-րդ եւ 3-րդ մասերով սահմանված պահանջներին:
2. Գրավոր կամ էլեկտրոնային հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է մերժվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:
3. Գրավոր կամ էլեկտրոնային հարցմամբ պահանջվող տեղեկության կամ դրա մի մասի տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողը հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում այդ մասին գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը՝ օրենքի համապատասխան նորմը, ինչպես նաեւ մերժման բողոքարկման կարգը:»:

**Չողված 11.** Օրենքի 12-րդ հողվածի 2-րդ եւ 4-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

**Չողված 12.** Օրենքի 13-րդ հողվածի 2-րդ մասում՝

1) 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) տեղեկություն փնտրողին մատչելի ձեւով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը եւ պայմանները, անհրաժեշտության դեպքում տեղեկատվության տրամադրման վերաբերյալ տալիս է պարզաբանում եւ խորհրդատվություն.».

2) 2-րդ կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1 -րդ կետով.

«2.1) օժանդակում է գրավոր հարցման ձեւակերպմանը, իսկ հնարավորության դեպքում՝ նաեւ կազմում է գրավոր հարցումը.»:

**Չողված 13.** Օրենքի 14-րդ հողվածի 2-րդ մասում «3-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ մասի 1-ից 3-րդ կետերով» բառերով:

**Չողված 14.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**  
**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ**  
**ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ – 186 օրենքի (այսուհետ՝ օրենք) 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 43-րդ կետով.

«43. Բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, պետական մարմինների եւ պետական հիմնարկների կողմից տեղեկությունը կամ դրա կրկնօրինակը (պատճենը) տրամադրման համար՝

10 էջը գերազանցող տպագրված կամ պատճենահանված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի մեկ եւ կես տոկոսի չափով յուրաքանչյուր էլեկտրոնային կրիչի (պնակիտ, խտասկավառակ, տեսասկավառակ) համար՝ բազային տուրքի 30 տոկոսի չափով.

յուրաքանչյուր ձայներիզի համար՝ բազային տուրքի 30 տոկոսի չափով.

յուրաքանչյուր տեսաերիզի համար՝ բազային տուրքի չափով»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 91-րդ մասով.

«91. Բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղական ինքնակառավարման մարմինների եւ նրանց հիմնարկների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման համար տեղական տուրքը սահմանվում է՝

- ա) 10 էջը գերազանցող տպագրված կամ պատճենահանված յուրաքանչյուր էջի համար՝ 15 դրամ.
- բ) յուրաքանչյուր էլեկտրոնային կրիչի (պնակիտ, խտասկավառակ, տեսասկավառակ) համար՝ մինչեւ 300 դրամ.
- գ) յուրաքանչյուր ձայներիզի համար՝ մինչեւ 300 դրամ.
- դ) յուրաքանչյուր տեսաերիզի համար՝ մինչեւ 1000 դրամ:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:



---

**Տեղեկատվության ազատության իրավական  
կարգավորումը Հայաստանի հանրապետությունում.  
մեկնաբանություններ:**

**Հեղինակներ՝** Շուշան Դոյրոյան, ք.գ.թ.  
ԻԱԿ նախագահ  
Կարապետ Հարությունյան,  
ԱԺ եւ ԻԱԿ փորձագետ  
Գեորգ Հայրապետյան,  
ԻԱԿ իրավաբան:

Տպագրված է «Ասողիկ» հրատարակչությունում:  
Տպաքանակը՝ 500:

- © Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 2010թ.
- © Շ. Դոյրոյան, 2010թ.
- © Գ. Հայրապետյան, 2010թ.
- © Կ. Հարությունյան, 2010թ.: